Էջմիածին



1968

ՌՆԺԸ ԻԵ ՏԱՐԻ

Հոկտեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ժ

1968

ԱԲ-112514.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Էրեբունի—Երևանի 2750-ամյակը 3

ԱՌ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Մեծ ճարտարեղով և անկեղծ սիրով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 60-ամյակի առթիվ—Ձոն 5

Պաշտոնական ընդունելություն Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակի առթիվ . . 8

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 13

Մատենագրական վկայություններ մեր հին մայրամաղամբերի մասին 15

Էրեբունի—Երևան 19

ՍԱՄՎԵԼ ԱՆԹՈՍՅԱՆ—Երևան՝ հին ու նոր ասասանը հայոց 25

ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ—Գովասանություն Երևանայ քաղաքին 33

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ—Երևան 34

ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ—Էրեբունի—Երևան 35

Հոբելյանական ճանդիսություններ Երևանում 36

ՑԻԳՐԱՆ ՊՈՅԱՋՅԱՆ—Փառքի ճամփան 40

ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ—Էջեր Դանիել Վարուժանի գրական ժառանգության պատմությունից 43

ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ—Ն. Լամբրոնացու «Պատարագի Մեկնություն»-ը 46

Հ. Ա. ՍԻՐՈՒՆԻ—Կոմիտասին ճիշ 52

ՀՐԱՉ ԲԱՐԹԻԿՅԱՆ—Կոստանդին Սիրանանցի կյանքի երկը՝ Եղեսիայի Արգար թագավորին ուղարկված Քրիստոսի թղթի և անձնատարած պատկերի մասին 57

ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՅՅԱՆ—Հայաստանի պատմության քանգարանի միջնադարյան մի ճրագակալ-աշտանակի մասին 67

Հանձնված է տպագրության 9/X 1968 թ., Ստորագրված է տպագրության 25/XI 1968 թ.,
Տպագրական 4,5 մամուլ, թուղթ 60×84 1/8, պատվեր 677

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР. Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1968 թ.

ԿԱՆՈՐԻՆՅԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՉԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Հարգելի Սամսոն Յովսեփի

Ես ուզում եմ գրել մի քանի տողեր քեզանից խնդրելով, որ դու հոգատարությունդ չանես ինձանից հեռանալուս, քանի որ ես ինքս ինձանից հոգացող, բավական մեծ եմ։

Ես հոգալիս եմ, որ դեռ 1915-ի աշնանը Հրաման ստացա գալ Տաճար։ Ես գալիս եմ, որպեսզի ինձ 1918-ին, մայիսին Սարդարապատ հասցրեց։ Ես գալիս եմ, որպեսզի ինձ մի քանի տարի ազատեցիր և վերջապես ազատագրեցիր հայ ազգային հարցից, հայությունից և ազգանվեր գաղափարներից։ Ես գալիս եմ, որպեսզի ինձ ազատեցիր ինձ ինձանից, ինձ ինձանից, ինձ ինձանից, ինձ ինձանից, ինձ ինձանից։

Հարգանքով և խնամքով քեզ հոգալիս...

Ստեփան Լիս.

Ս. Տաճար
9 Հոկ. 1968

Հանձնարարեցի Հարազատ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԷՐԵԲՈՒՆԻ—ԵՐԵՎԱՆԻ 2750-ԱՄՅԱԿԸ

Հոկտեմբերին հայ ժողովուրդը և՛ իր մայր հողի, և՛ սփյուռքի բոլոր տարածքի վրա, ազգային հպարտության անուշ զգացմունքներով և համազգային ոգևորությամբ, նշում է իր քաղաքամայր Երևանի հիմնադրության 2750-ամյակը:

Վերածնված հայ ժողովուրդը համազգային այս մեծ հանդիսանին հպարտ է և ուրախ երանությամբ այն ժողովրդի, որ դարերից է գալիս իր մշակույթով, իր հերոսական պատմությամբ, իր ստեղծած ոգեկան, իմացական, նյութական նվաճումներով և գնում դեպի դարերը:

Համազգային այս տոնին իր ուրախությունն ու օրհնությունն է բերում նաև Մայր Աթոռ ս. Էջմիածինը և իր հայրենասեր Հայրապետի շրջերով աղոթում սրտեռանդն, որ «Նախախնամեալ պահեսցի արևելեան կողմն աշխարհիս հանրապետության հայոց, զքաղաքս, և զԷնս և համայն ժողովուրդն հայոց»:

Էրեբունի-Երևանը հիմնադրել է, ըստ ուրարտական սեպագիր հնագույն արձանագրության, մեր թվարկությունից առաջ 782 թվականին «Մենուայի որդի Արգիշտին՝ որպես հոյակապ բերդ... Բիայնա երկրների փառք, թշնամի երկրներին ի սարսափ»:

Արարատյան դաշտը, ուր հիմնադրվել է Էրեբունի-Երևանը և մեր այլ մայրաքաղաքները՝ Արմավիր, Երվանդակերտ, Արտաշատ, Վաղարշապատ, Դվին (Մ. Խորենացի, «Հայոց պատմություն», 1968, Երևան, էջ 91, 105, 266—269, 245: Փ. Բուզանդ, «Պատմություն հայոց», 1968, Երևան, էջ 77, 159, 164, 218), շատ հնուց եղել է հայ ժողովրդի քաղաքական, կրոնական-հոգևոր և տնտեսական կենտրոնը: Ըստ Աստվածաշնչի Արարատյան դաշտը համարվում է օրրանը նոր մարդկության (Ծննդոց Ը 4): Ըստ Մ. Խորենացու վկայության, Արամե թագավորը Արարատյան դաշտում ապրող իր հրպատակներին «Հրամանս տայ բնակչաց աշխարհին, ուսանել զխօսս և զլեզուս հայկական» (Մ. Խորենացի, Ա գիրք, գլ. ԺԴ):

Կորյունը վկայում է, որ Ե դարում, գրերի գյուտից հետո, աշակերտական մեծ խմբեր շտապում էին Վաղարշապատ, «ի նորմանց և ի գաւառաց Հայաստանեաց աշխարհի, յորդեալք և դրդեալք հասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեան Աստուծոյ, քանզի յԱտարատեան գաւառին բղխեցին հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ»:

Երևանի պատմության մի խոշոր ժամանակահատվածը, մ. թ. ա. 4-րդ դարից մինչև մ. թ. 7-րդ դարի սկիզբը, մեծ մասամբ ծածկված է անհայտության քողով:

Մեր մատենագրության մեջ Երևանի անունը առաջին անգամ հիշատակվում է Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսի օրով (607—615), 607 թվականի Դվինի ժողովի կապակցությամբ՝ «Գիրք թղթոց»-ում: Երկրորդ անգամ Երևանը հիշատակվում է Սեբեոսի պատմության մեջ՝ 850-ական թվականների առաջանան առջևամարքների առնչությամբ, որպես Արարատյան դաշտի մեծ և երևելի բնակավայրերից մեկը: Հով-

հանձնեց պատմաբան կաթողիկոս Դրասխանակերտցին (898—929) իր պատմության մեջ Երևանը անվանում է «քաղաքագյուղ»: Այնուհետև Երևանը հիշատակվում է հայերեն վիպական արձանագրությունների մեջ և այլ մատենագրական աղբյուրներում:

Կիլիկիայում հայկական իշխանության անկումով տեղի է ունենում հայրենադարձության նոր շարժում դեպի բուն Հայաստան: 1440 թվականին Երևանը արդեն դարձել էր նախկին Արարատյան աշխարհի մեծ մասն ընդգրկող Երևանի խանության կենտրոն և Արարատյան աշխարհի մայրաքաղաք:

Երևանի այդ դիրքի ու հեղինակության բարձրացմանը մեծապես նպաստում է մանավանդ Հայրապետական Աթոռի փոխադրությունը ս. Էջմիածին, 1441 թվականին, ազգային-եկեղեցական ժողովի որոշումով:

Այնուհետև 15—18-րդ դարերի ընթացքում Երևանը ենթարկվել է բազում անգամներ ավերման և ավելի քան 14 անգամ անցել է ձեռքից ձեռք: 1679 թվականի երկրաշարժը մեծ աղետներ է պատճառել Երևանին: 1828 թվականին, ցարական տիրապետության շրջանին, Երևանը դառնում է նախկին Երևանի և Նախիջևանի խանություններից կազմավորված հայկական մարզ: 1840 թվականին՝ Երևանի գավառի կենտրոն, 1850-ին կազմակերպվում է Երևանի նահանգը՝ կենտրոն ունենալով Երևանը: Ընդհուպ մինչև ԺԹ դարի վերջերը Երևանը մնում էր որպես հետամնաց գավառական քաղաք՝ 25—30 հազար բնակչությամբ:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով և հայ ժողովրդի շինարար ձեռքով ու կառուցողական տաղանդով, Երևանը դարձավ լույսի, մշակույթի արդիական քաղաք, բարեշեն, գեղեցիկ մայրաքաղաքը հայոց:

Նոր Երևանի հոյաշեն կառույցները պայծառ ապացույցն են մեր ժողովրդի շինարարական անսպառ եռանդի, ճարտարապետական հանճարի: Նոր Երևանը հայ ժողովրդի ստեղծագործ ոգու փայլուն արգասիքն է, մեր նոր Արմավիրը, մեր Դվինը, մեր Անին:

Հայաստան այցելած ամերիկացի ականավոր գրող Ռոքուել Քենտը Հայաստանի մասին իր տպավորությունների մեջ արդարորեն գրում էր.

«Մենք այստեղ գտանք մի ժողովուրդ, կենսալեցուն, տաղանդավոր մի ժողովուրդ, որը զբաղված է ոչ թե ապաստարաններ փորելով, այլ նոր ու գեղեցիկ քաղաքների շինարարությամբ: Ձեր ժողովուրդը հավերժ երիտասարդության հեքիաթային աղբյուրն է: Ձեր երկրի յուրաքանչյուր մարդ հավատում է իր ու համայն մարդկության պայծառ ապագային: Այդ հավատի աղբյուրից սնվելով, դուք կառուցում եք ձեր նոր աշխարհը, որտեղ թագավորում է խաղաղ, ստեղծագործ աշխատանքը:

Մենք բնավ չենք մոռանա այն օրերը, որ անցկացրինք ձեր գեղաձիծաղ, հեքիաթային երկրում: Ինձ եթե հարցնեն, թե մեր մոլորակի վրա ո՞րտեղ կարելի է առավել շատ հրաշքների հանդիպել, ես առաջինը կտայի Հայաստանի անունը: Ժողովրդական տնտեսության, գիտության, մշակույթի, արվեստի բնագավառում ձեր հանրապետության վերափոխումները իրոք հրաշքի են նման: Ես սիրեցի ձեր երկիրը, նրա շնորհալի մարդկանց: Եվ ահա ես մեկնում եմ այստեղից սիրտս թողած այստեղ»:

Բյուր ողջո՞ւյն և օրհնությո՞ւն ս. Էջմիածնից մեր նոր ոստանին, հայոց քաղաքամայր Երևանին, միշտ երիտասարդ, միշտ պայծառ, գարուն Երևանին:

ՄԵԾ ՀԱՐԳԱՆՔՈՎ ԵՎ ԱՆԿԵՂԾ ՍԻՐՈՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ՁՈՆ

Երաժշտություն՝ ԱԼ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Maestoso

S. A.

T.

B.

Երգչախումբ

Դաշնամուր

Փառք Քեզ փառք,

Փառք Քեզ փառք,

Փառք Քեզ փառք,

Մեծ Հայ-ռա- պես Ա - մե - նայն Հա - յու-

Մեծ Հայ-ռա- պես Ա - մե - նայն Հա - յու-

Մեծ Հայ-ռա- պես Ա - մե - նայն Հա - յու-



*) Կրկնության ժամանակ այլասերվել է Լեռն


Քեզ եր- կար կյանք.
եր - կար կյանք,
եր - կար կյանք,
Քեզ եր- կար կյանք,


Coda
եր - կար կյանք. փառք, միայն Քեզ փա՜ռք:
եր - կար կյանք. փառք, միայն Քեզ փա՜ռք:
Քեզ եր- կար կյանք. փառք, միայն Քեզ՝ փա՜ռք:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Սեպտեմբերի 28-ին, շաբաթ օրը, ժամը 3-ին, Վեհարանում Մայր Աթոռ ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակի, կազմակերպում է պաշտոնական ընդունելություն, որին մասնակցում են շուրջ 60 հրավիրյալներ:

Ընդունելությանը ներկա են՝ ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, տեղակալ Ս. Հովհաննիսյանը, խորհրդի անդամներ, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության նախագահ Ռ. Պարսամյանը, Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի քարտուղար Հ. Խաչատրյանը, Ներգաղթ կոմիտեի նախագահ Ս. Գասպարյանը, պետական կենտրոնական արխիվի վարչության պետ Ա. Հարությունյանը, Էջմիածնի շրջանային սովետի գործկոմի նախագահ Հ. Սեդրակյանը, Էջմիածնի քաղսովետի նախագահ Գ. Մանուկյանը, «Հայրենիքի ձայն» թերթի խմբագիր Կ. Վարդանյանը, Մաշտոցի անվան Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանը, բանաստեղծուհիներ Ս. Կապուտիկյանը և Մ. Մարգարյանը, բանաստեղծ Գ. Էմինը, կոմպոզիտոր Ալ. Հարությունյանը, ակադ. Ա. Ղարիբյանը, նկարիչ Գր. Խանջյանը, ճարտարապետ Վ. Հարությունյանը: Ընդունելությանը ներկա էր նաև Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի ներկայացուցիչ Յու. Գ. Զեպիժևը:

Ներկաների թվում էին տ. Հայկազուն, տ. Հուսիկ, տ. Տիրայր, տ. Վահան սրբազանները, Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմը, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական-տեսչական կազմը՝ տեսուչ տ. Ներսես ծ. վարդապետի գլխավորությամբ, Մայր Աթոռի տպարանի տեսչությունը, դիվանապետը, ֆինանսական, տնտեսական բաժնի վարիչները, Երևանի թեմական խորհրդի անդամներ, Մայր Աթոռի ճարտարապետները և ուրիշներ:

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը:

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը ընդունելության ժամանակ ընթերցում է ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Մուրադյանի և ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Վ. Կուրոյեդո-

Վեհափառ Հայրապետի ՃՁՀդյաՃ ԹՕ-ամյակի առթիվ պատրաստված հայկական սափոր՝
օնիքս քարից. Ոսկեր հայ եկեղեցու գործերի խորհրդի կողմից
(1968 թ. սեպտեմբերի 28, Մայր Աթոռ)

վի շնորհավորական հեռագրերը՝ 20 և 19 սեպտեմբեր 1968 թվակիր։

Այնուհետև Կ. Դալլաքյանը, հանուն կառավարության և եկեղեցական գործերի խորհրդի ջերմորեն շնորհավորելով Վեհափառ Հայրապետի 60-ամյակը և պետական շքանշանով պարգևատրվելը, Նրան մաղթում է հետագա տարիներում ևս հայրենասիրական-խաղաղասիրական գործունեություն՝ ի փառս մեր ժողովրդի։ ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահը ապա Վեհափառ Հայրապետին է հանձնում մի թանկարժեք նվեր՝ հայկական սափոր՝ օնիքս քարից պատրաստված, Վեհափառ Հայրապետի նկարով։

Այնուհետև խոսք է առնում Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի ներկայացուցիչ Յու. Գ. Զեպիժևը, որը հանուն Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի նախագահ Ն. Տիխոնովի շնորհավորում է Հայոց Հայրապետի 60-ամյակը և հանուն Կոմիտեի՝ հանձնում Խաղաղության պաշտպանության ոսկե մեդալը՝ իր վկայականով։ Հայկազուն արքեպիսկոպոսը բաժակ է առաջարկում Վեհափառ Հայրապետի կենաց։ Հայոց Հայրապետին ջերմ ելույթներով և սրտագին խոսքերով շնորհավորում են՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը, Ներգաղթ կոմիտեի նախագահ Ս. Գասպարյանը, ակադ. Ա. Ղարիբյանը՝ հանուն հայ գիտնական-մտավորականության։ Բանաստեղծ Գ. Էմինը ընթերցում է Խաղաղության պաշտպանության Հայաստանի կոմիտեի շնորհավորականը։ Կոմպոզիտոր Ա. Հարությունյանը Վեհափառ Հայրապետին է ներկայացնում իր «Զոնա»-ի՝ իր բառերով և երաժշտությամբ, և այն կատարում դաշնամուրի վրա։ Մաշտոցի անվան Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանը գրաբար կարդում է հետևյալ գեղեցկահյուս ուղերձը.

«Առ վսեմափառ և իմաստնախոհ Գահակալն Միածնաէջ Աթոռոյն Տ. Տ. Վազգէն Ա. հանուրց Հայաստանեայց Կաթողիկոսն

Զձերոց ազգանուէր արարմանց աւելորդ վարկանիմք բազում հանգամանս ի գիր արձանացուցանել, զի յայտ են ամենեցուն և յամենեցունց արժանացեալ խորին երախտանաց։ Բայց մեք, որ գամք առ Ձեզ ի Մեծի Տանէն մեսրոպատաւ ձեռագիր մատենից, բերեմք զորդիական շնորհաւորանս եւ զբա-



Հանրապետության խաղաղության պաշտպանության կոմիտեի շնորհավորագիրը



Մաշտոցյան Մատենադարանի գրաբար շնորհավորական ուղերձի բնագիրը

ռեմաղթութիւնս յառիթ վաթսունամեայ Սենդեան Ձերոյ եւ պետական պարգեւատրութեան, եւ պարտ համարիմք լիով սրտի զրանս ջերմեռանդ յարգանաց մերոց եւ սիրոյ առ Ձերդ վեհափառութիւն:

Զտեղին հանգստեան նախամեծարագոյն առն թորգոմեան ազգիս՝ Մեսրոպայ Մաշտոցի, որ յաւանն Օշական, Դուք արարիք լուսաւոր եւ վայելուչ, զի ոչ էր պատիւ ժողովրդեան մերում ունել զդամբան նորա յայնմ անշքացեալ վիճակի:

Ակն պարծանաց են հնադարեան վանօրայք Հայաստանեայց աշխարհի: Գիտեմք, եթէ Ձեր է գործ նորոգութեան քանի մի ի նոցունց, զի ոչ մնասցեն ողբէս կարեկէր աւերակս առաջի աչաց մերոց: Իցի՞ւ թէ հայրենանուէր Ձերդ ձեռնարկութիւն հասանի մինչ յայն կէտ վախճանի, որ նոքա ամենեքեան յառնեն ի փլատակաց եւ վերստին արձակեն զշողս հայկեան վսեմական հանճարոյ:

Ոչ մոռանամք, եթէ մինչդեռ վարդապետ էիք եւ առաջնորդ յաշխարհն Ռումանիոյ բազում հոգս կալաք վասն հայրենադարձութեան ձեռագիր մատենից եւ բազում այլ գանձուց: Քաջ գիտեմք, եթէ նուիրականագոյն իղձ և միտք քանի Ձեր է ունել ընդ հայրական թեօք Ձերովք զվերջին թեկոր աշխարհասփիւռ զաւակաց Ձերոց: Ո՞չ ապաքէն կարօտ եւ մտահոգութիւնք համազգայինք կոչեն զՁեզ յայցելութիւն նոցա ցաշխարհն Հնդկաց, մինչ յԱմերիկա եւ ի Բրազիլ...

Բայց մարդասիրութիւն Ձեր ոչ է միայն վասն ժողովրդեան եւ հայրենեաց Ձերոց հարազատաց, այլ եւ վասն հանուր մարդկան ազգի: Այդու քաջակորովս մարտնչիք ընդդէմ թշնամեաց խաղաղութեան, զի ոչ երբէք վտանգեսցի ստեղծագործ կեանք ի վերայ երկրի եւ մանկունք ուրախաձայն ճոռոմեսցեն յամայրամս ժամանակաց:

Կեա՛ց Հայրապետդ Հայոց, կեա՛ց անսասան եւ յաւէտ առ ի պայծառութիւն ազգին եւ հայրենեաց մերոց:

Ի դիմաց Տեսչութեան
Մաշտոցեան Մատենադարանի՝ Լ. Խաչիկեան

Ի թուին Հայոց ՌՆԺԷ
յամսեանն Հոռի Ի»:

Դարձյալ շնորհավորական ջերմ խոսքեր են ասում՝ Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության նախագահ Ռ. Պարսամյանը, բանաստեղծուհիներ Ս. Կապուտիկյանը, Մ. Մարգարյանը, ճարտարապետ Վ. Հարությունյանը, հոգևոր ճեմարանի տե-

սուչ տ. Ներսես ծ. վարդապետը և Ս. Արևշատյանը:

Վերջում սրտագին շնորհակալության, գոհունակության ջերմ խոսք է ասում Վեհափառ Հայրապետը կենտրոնական կառավարությանը, Խաղաղության պաշտպանության միութենական կոմիտեին, հայրենի կառավարությանը, ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահությանը, նշելով, որ այս պարգևատրումները և սրտագին արտահայտությունները մղում են Իրեն շարունակելու է՛լ ավելի արդյունավորությամբ այն եկեղեցաշեն, հայրենանվեր և խաղաղության պաշտպանության գործում տարած աշխատանքները, որոնք Իր կյանքի նպատակները եղան 18 տարիներից ի վեր, տարիներ, որոնք իզուր չանցան:

Այնուհետև Իր խոսքի մեջ Վեհափառ Հայրապետը շեշտում է, որ Էջմիածնի դերը և առաքելությունը այսօր մանավանդ ինչպես հայրենի հողի վրա, այնպես էլ սփյուռքի պայմանների մեջ հասկացվում են այնքան պայծառ և հստակ կերպով, հանգամանքներ, որոնք իրեն նոր ուժ և եռանդ են տալիս՝ շարունակելու Իր մեծ գործը:

Ընդունելությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ:



Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի շնորհավորագիրը

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 25-ին՝ շաբաթի.—*Այսօր Մայր Աթոռ ս. էջմիածին ժամանեցին Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ գեր. տ. Տիրայր եպս. Մարտիկյանը և ռումինահայ հայտնի բանասեր Հ. Ճ. Սիրունին։*

* * *

Սեպտեմբերի 26-ին՝ հինգշաբթի.—*Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողությունը և դասախոսական կազմը մեկօրյա պտույտով մեկնեցին Սաղմոսավանք։*

* * *

Սեպտեմբերի 27-ին՝ ուրբաթ.—*Այսօր Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ ժամանեցին բարերարներ պրն. Հայկ Գավուքճյանը, պրն. Տատուր Տատուրյանը և պրն. Հարություն Թաթոսյանը՝ իրենց տիկնանց հետ։*

* * *

Սեպտեմբերի 28-ին՝ շաբաթ.—*Այսօր երեկոյան Մայր Աթոռ ժամանեց Հյուսիսային Կովկասի և Ռուսաստանի հայոց թեմերի առաջնորդ գեր. տ. Պարգև եպս. Գևորգյանը։*

* * *

Սեպտեմբերի 29-ին՝ կիրակի.—Գ կիր. զկնի Սրբոյ Խաչի։ Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Ս. պատարագին ներկա էին նաև շուրջ 200 հայ ուխտավորներ՝ Միացյալ Նահանգներից, Բրազիլիայից, Արգենտինայից, Ֆրանսիայից։

Հավարտ ս. պատարագի Վեհարանում Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել և իր օրհնությունը բաշխել ուխտավորներին։

* * *

Հոկտեմբերի 2-ին՝ շաբաթի.—*Այսօր Վեհափառ Հայրապետն այցելեց ս. Գեղարդավանքը՝ մոտիկից ծանոթանալու կատարված շինարարական աշխատանքներին։*

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին գեր. տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, բարերարներ պարոնայք Հայկ Գավուքճյանը, Տատուր Տատուրյանը, Հարություն Թաթոսյանը՝ իրենց տիկնանց հետ, բարեշնորհ Հակոբ Գյոկչյան և Հովսեփ Հակոբյան սարկավագները։

* * *

Հոկտեմբերի 6-ին՝ կիրակի.—Դ կիր. զկնի Սրբոյ Խաչի.

Այսօր Վեհափառ Հայրապետի գահակալության 13-րդ տարեդարձն է։ Այս առթիվ Մայր տաճարում պատարագեց և քարոզեց Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ գեր. տ. Տիրայր եպս. Մարտիկյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Ս. պատարագին ներկա էին նաև ամերիկահայ պարոնայք Հայկ Գավուքճյանը, Տատուր Տատուրյանը, Հարություն Թաթոսյանը՝ իրենց տիկնանց հետ, և բազմաթիվ սփյուռքահայ ուխտավորներ։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հայրապետական մաղթանք՝ Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ։

Մաղթանքից հետո Մայր Աթոռի միաբանությունը և ուխտավորների մի հոծ բազմություն Վեհափառ Հայրապետին թափորով ուղեկցեցին Վեհարանի գահասրահը, ուր Մայր տաճարի լուսարարապետ գեր. տ. Հայկազուն

արքեպ. Աբրահամյանը բոլոր ներկաների և համայն հայ ժողովրդի անունից շնորհավորեց Վեհափառ Հայրապետի գահակալության 13-րդ տարեդարձը։

Վերջում Վեհափառ Հայրապետը Իր գոհունակությունը հայտնելով ներկայացված շնորհավորանքների համար, նշեց նաև, որ այս օրերին մայր հայրենիքի և սփյուռքի ողջ հայությունը համազգային ցնծությամբ նշում է Երևանի 2750-ամյա տարեդարձը։

Վերջում Վեհափառ Հայրապետը Իր օրհնությունը բաշխեց բոլոր ներկաներին։

Ժամը 3-ին, ի պատիվ հյուրերի, Վեհարանում տեղի ունեցավ ճաշկերույթ։

•
• •

Հոկտեմբերի 12-ին՝ շաբաթ.—Այսօր Վեհարանում Վեհափառ Հայրապետին այցելեցին շուրջ 200 ամերիկահայ ուխտավորներ, որոնք հրավիրված էին մայր հայրենիք Երևանի 2750-ամյակի կապակցությամբ։ Վեհափառ Հայրապետը ընդունեց նրանց և Իր օրհնությունը բաշխեց։

•
• •

Հոկտեմբերի 13-ին՝ կիրակի.—Ե կիր. զկնի Սրբոյ Խաչի.

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողոսյանը՝ օնմանեալ Մովսէսի տէր վարդապետ. բերելով զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ» բնաբանով։

•
• •

Հոկտեմբերի 17-ին՝ հինգշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետին այցելեց հռչակավոր երգահան Արամ Խաչատրյանը։

Վեհափառ Հայրապետի և մեծ երգահանի միջև Վեհարանում տեղի ունեցավ ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում։

•
• •

Հոկտեմբերի 20-ին՝ կիրակի.—Զ կիր. զկնի Սրբոյ Խաչի.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

•
• •

Հոկտեմբերի 23-ին՝ շաբաթ.—Այսօր, հետ միջօրեի ժամը 2.30-ին, խմբով Վեհափառ Հայրապետին այցելեցին, Երևանի 2750-ամյակի առթիվ ուխտավորաբար մայր հայրենիքում գտնվող, հասարակական-մշակութային կազմակերպությունների և մամուլի ներկայացուցիչներ՝ շուրջ 30 հոգի։ Այդ թվում՝ «Զարթոնք» թերթի խմբագիր Գերսամ Ահարոնյանը՝ Բեյրութից, «Արարատ» թերթի խմբագիր Ժիրայր Նաիրին՝ Բեյրութից, «Աշխարհ» թերթի խմբագիր Ավետիս Ալեքսանյանը՝ Փարիզից, հայտնի հայագետ պրոֆ. Ֆրեդերիկ Ֆելդին՝ Փարիզից, ճարտարապետ Էդ. Ութուջյանը՝ Փարիզից, ԺԱՄ-ի նախագահ Գևորգ Սարաֆյանը՝ Փարիզից, հասարակական գործիչ Աստուր Կյուզելյանը՝ Լոնդոնից, պրոֆ. Ա. Գյոնչյանը՝ Մոնրեալից, երգչուհիներ Արփինե Փեհլիվանյանը և Սոնիկ Ղազարյանը՝ Բեյրութից, և այլ հրավիրյալներ Դամասկոսից, Բեյրութից, Բրազիլիայից։

Վեհափառ Հայրապետը ողջունեց նրանց ներկայությունը և խոսեց սփյուռքում ապրող հայ մտավորականությանը միճակված թեև դժվարին, բայց քաղցր հայրենասիրական ուղեկեղեցաշեն գործունեության մասին։

Ժամը 3-ին բոլոր հյուրերը ներկա եղան Վեհարանում իրենց պատվին տրված ճաշկերույթին։

•
• •

Հոկտեմբերի 24-ին՝ հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռ այցելեց Սովետական Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը իր տիկնոջ հետ։ Նա հրավիրված էր Հայաստանի կառավարության կողմից մասնակցելու համար Երևանի 2750-ամյա հոբելյանական հանդիսություններին։

Հարգելի հյուրը եղավ նաև Վեհափառ Հայրապետի մոտ և ջերմ զրույց ունեցավ Նրա հետ՝ սրտագին մթնոլորտում։

•
• •

Հոկտեմբերի 25-ին՝ ուրբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետին այցելեց հանրածանոթ գրող Մարիետա Շահինյանը։

Վեհափառ Հայրապետի և ականավոր գրողի միջև Վեհարանում տեղի ունեցավ ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում։

•
• •

Հոկտեմբերի 27-ին՝ կիրակի.—Է կիր. զկնի Սրբոյ Խաչի. Գիւտ Խաչի.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը։

ԵՐԵՎԱՆ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՊԱԼԱՏԸ



ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵՐ ՀԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արամանյակը տարիներ ապրելուց հետո սերեց Արամայիսին, որից հետո էլ բավական տարիներ ապրելով մեռավ: Նրա որդին՝ Արամայիսը, իր բնակության համար տուն է շինում գետի ափին մի բլուրի վրա և իր անունով այն կոչում է Արմավիր, իսկ գետի անունը իր թոռան անունով դնում է Երասխ:

(Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968 թ., էջ 91)

* * *

Բայց (Մար Աբասը) պատմությունը շարունակում է այսպես. Արայան Արան պատերազմի մեջ մեռնում է Շամիրամի հետ՝ թողնելով արու զավակ՝ շատ գործունյա հանճարախոս Անուշավան Սոսանվերին, որովհետև նա պաշտամունքի համաձայն նվիրված էր Արմենակի՝ Արմավիրում գտնվող սոսի ծառերին, որոնց տերևների սոսափյունից՝ նայելով քամու ուժին և ուղղությանը՝ մեր հայոց աշխարհում սովորեցին գուշակություններ անել և այն էլ երկար ժամանակ:

(Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968 թ., էջ 105—106)

* * *

Սրա ժամանակ արքունիքը Արմավիր կոչված բլրից փոխադրվում է, որովհետև Արաքս գետը հեռացել էր, և ձմեռն երկարելիս, երբ հյուսիսային ցուրտ քամիներ էին փչում, վտակը սառչում էր բոլորովին, և թագավորանիստ տեղի համար խմելու բավական ջուր չէր ճարվում: Սրանից Երվանդը նեղվելով, մանավանդ մի ավելի ամուր տեղ փնտրելով՝ արքունիքը տեղափոխում է դեպի արևմտյան կողմը, միակտուր ապառած բլուրի վրա, որը շրջապատում է Արաքսը, իսկ դիմացից էլ հոսում է Ախուրյան գետը: (Երվանդը) բլուրը պարսպում է, իսկ պարսպից ներս շատ տեղերում քարերը կտրել տալով իջեցնում է մինչև բլրի հատակը, գետի (մակերևույթին) հավասար, այնպես որ գետից ջրերը հոսեն այդ փորված տեղը, խմելու ջուր մատակարարելով: Միջնաբերդն ամրացնում է բարձր պարիսպներով, պարիսպների մեջ պղնձե դռներ է դնում և երկաթե սանդուղքներ ներքևից մինչև վեր, մինչև դուռը. սանդուղքի վրա, աստիճանների միջև, գաղտնի որոգայթներ է շինում, որպեսզի եթե մեկը կամենա գաղտնի բարձրանալ թագավորին դավելու նպատակով, բռնվի: Սանդուղքը, ասում են, երկու տեսակ էր սարքված, մեկը գերեկվա ճանապարհ արքունի սպասավորների և ընդհանրապես ելումուտի համար, իսկ մյուսը գիշերային էր և դավադիրների դեմ:

(Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968 թ., էջ 174—175)

* * *

Այս բոլորից հետո (Վաղարշակ թագավորը) Արմավիրում մեհյան շրջելով՝ արձաններ է կանգնեցնում արեգակին, լուսնին և իր նախնիներին:

(Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968 թ., էջ 140)

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*
* *

Ասիայում գտնելով Արտեմիդի, Հերակլի և Ապոլոնի պղնձաձույլ ոսկեզօծ արձանները, բերել է տալիս մեր երկիրը, որպեսզի կանգնեցնեն Արմավիրում: Քրմապետները, որոնք Վահունիների ցեղից էին, Ապոլոնի և Արտեմիդի արձաններն առնելով կանգնեցրին Արմավիրում, իսկ Հերակլեսի արձանը, որ Սկյուդեսի և կրետացի Դիպինոսի գործն էր, իրենց նախնի Վահագնը համարելով, կանգնեցրին Տարոնում, իրենց սեփական Աշտիշատ գյուղում Արտաշեսի մահից հետո:

(Մ. Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 144)

*
* *

Բայց այն արձանները, որ Վաղարշակը շինել տվեց իր նախնիքների պատկերներով, ինչպես և արեգակի և լուսնի պատկերներն Արմավիրում, որոնք Արմավիրից փոխադրվեցին Բագարան և նորից Արտաշատ, Արտաշիրը հրամայում է փշրել: Մեր երկիրը նա հարկատու է դարձնում և ամեն քանում իր անունն է հաստատում:

(Մ. Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 212)

*
* *

Արտաշես վերջինի գործերից շատ բան հայտնի են քեզ այն վիպասաններից, որոնք պատմում են Գողթնում, ինչպես քաղաքը շինելը, խնամությունն Ալանների հետ, նրա սերունդների ծնունդը և Սաթենիկի իբր թե սիրահարությունը առասպելական վիշապազուններին, այսինքն՝ Աժդահակի սերունդներին, որ գրված ունեն Մասիսի ամբողջ ստորոտը, կռիվը նրանց հետ, նրանց իշխանության քայքայումը, նրանց սպանությունը և շինվածքների հրկիզումը, և Արտաշեսի որդիների նախանձը և իրար դեմ գրգռվելը կանանց միջոցով: Այս բոլորը, ինչպես ասացինք, քեզ հայտնի են վիպասանների երգերից, բայց մենք ևս կարճառոտ կհիշատակենք և այլաբանությունը կճշմարտենք:

Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Արաքսը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ բլուրը հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ: Արաքսն էլ օգնում է նրան անտառի փայտով: Ուստի առանց դժվարության և արագ շինելով՝ այնտեղ մեհյան է կանգնեցնում և Բագարանից այնտեղ է փոխադրում Արտեմիսի արձանը և բոլոր հայրենական կուռքերը: Բայց Ապոլոնի արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս ճանապարհին մոտ: Երվանդի քաղաքից դուրս է բերում հրեա գերիներին, որ այնտեղ տարված էին Արմավիրից, և բերում նստեցնում է Արտաշատում: Նաև Երվանդի քաղաքի ամբողջ վայելչությունները, ինչ որ նա փոխադրել էր Արմավիրից, և ինչ որ հենց ինքն էր շինել, բերում է Արտաշատ, և ավելի շատ բան էլ իր կողմից շինելով՝ սարքավորում է իբրև արքայանիստ քաղաք:

(Մ. Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 182—183)

*
* *

Նաև արքունիքը փոխադրում է անտառից վերև մի բլուրի վրա և շինում է արևից պատրաստված ապարանք. (տեղը) պարսկական լեզվով կոչվում է Դվին, որ նշանակում է բլուր: Որովհետև այդ ժամանակ Հրատն ուղեկցում էր Արեգակին և անմաքուր ջերմ օդը գարշելի հոտ էր բուրում, ուստի Արտաշատում բնակվողներն այս բանին չդիմանալով՝ կամավոր հանձն առան այս տեղափոխությունը:

(Մ. Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 245)

*
* *

Եվ հրաման տվեց թագավորը իր զորավարին՝ երկրից բազմաթիվ մշակներ հանել, անտառներից վայրի կաղնի բերել ու տնկել Այրարատյան գավառում՝ սկսելով արքունի ամուր բերդից, որին ասում են Գառնի, մինչ Մեծամորի դաշտը, այն բլուրը, որ կոչվում է Դվին և գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում: Եվ այսպես անտառ տնկեցին գետի ընթացքով դեպի ներքև, մինչև Տիկնունի ապարանքը: Նա այս անտառը կոչեց Տաճար մայրի: Մի ուրիշ անտառ էլ տնկեցին նրանից դեպի հարավ, եղեգնուտի եզերքով, և ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով. սրա անունն էլ դրին Խոսրովակերտ: Նույն տեղում շինեցին նաև արքունական ապարանքներ: Երկու անտառներն էլ պարիսպներով փակեցին առանց իրար հետ կցելու, անցուդարձի ճանապարհի համար: Անտառն աճեց ու բարձրացավ: Հետո թագավորը հրամայեց ամեն տեսակ որսի կենդանիներ ու գազաններ հավաքել ու լցնել պարսպապատված տեղերը, որպեսզի նրա թագավորության որսի և ուրախության տեղեր դառնան: Վայե զորավարը անմիջապես կատարեց թագավորի ասածները:

(Փ. Բուզանդ, Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 77—78)

*
* *

Այնուհետև եկան Արտաշատ մեծ քաղաքը, գրավեցին, նրա պարիսպները կործանեցին. այնտեղ էլ պահված գանձերը առան և ամբողջ քաղաքը գերի վարեցին: Արտաշատ քաղաքից գերի տարան ինը հազար տուն հրեա, որոնց Արշակունի Տիգրան թագավորը գերի էր բերել Պաղեստինից և քառասուն հազար տուն հայ: (Այնքան մարդ) Արտաշատ քաղաքից տարան: Քաղաքի շինություններից փայտաշենները կրակ տվին այրեցին, քարաշենները քանդեցին, նույնպես և պարիսպը. քաղաքի բոլոր շինվածքները հիմնահատակ կործանեցին, ոչ մի քար քարի վրա չթողին, քաղաքը բնակիչներից թափուր, անմարդի, ավերակ դարձրին:

(Փ. Բուզանդ, Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 218)

*
* *

Ինձ համար քաղցր է պատմել նաև գեղեցիկ Երվանդակերտ դաստակերտի մասին, որ նույն Երվանդը շինեց գեղեցիկ և չքնաղ հորինվածքով: Որովհետև մեծ հովտի միջին մասը լցնում է բնակչությամբ և պայծառ շինություններով, լուսավոր, ինչպես աչքի բիբը, իսկ բնակության շուրջը կազմում է ծաղկանոցներ և բուրաստաններ, ինչպես բբի շուրջը աչքի մյուս բոլորակը: Իսկ այգիների բազմությունը նմանվում էր խիտ արտևանունքի գեղեցիկ գծին, որի հյուսիսային կողմի կամարաձև դիրքը իսկապես համեմատվում էր գեղեցիկ կույսերի հոնքերին: Իսկ հարավային կողմից հարթ դաշտերը (հիշեցնում էին) ծնոտների գեղեցիկ ողորկությունը: Իսկ գետն իր երկու ափերի բարձրություններով պատկերանում էր մի բերան, իր երկու շրթունքներով: Եվ այս գեղեցիկ դիրքը կարծես անթարթ հայացքն ուղղել է թագավորանիստ բարձրավանդակի վրա: Արդարև բերրի և թագավորական դաստակերտ:

(Մ. Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 178)

*
* *

Այս էլ է պատմվում, թե այս գործը վերջանալուց հետո (Տիգրանը) իր քույր Տիգրանուհուն թագավորավայել ու մեծ բազմությամբ ուղարկում է Հայաստան՝ այն ավանը, որը Տիգրանը շինեց իր անունով, այսինքն՝ Տիգրանակերտ, և այն գավառները հրամայում է նրա ծառայության մեջ դնել: Եվ այդ կողմերի ոստան կոչված ազնվական դասակարգն, ասում է, սրա սերունդից է առաջացել, իբրև թագավորական սերունդ:

(Մ. Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 117—118)

*
* *

Իսկ Շապուհը գալիս հասնում է մեր Տիգրանակերտ քաղաքը: Նրան դեմ են կանգնում քաղաքի մարդիկ և քաղաքապահ զորքը, որովհետև Սյունյաց Անտիոք նահապետը, որ Արշակի աներն էր և քաղաքի վերակացուն, հրամայեց քաղաքի դռները կողպել Շապուհի առաջ: Եվ ոչ միայն արգելեց մտնել, այլև ոչ պատգամավորներ ուղարկեց նրա մոտ, ոչ էլ նրա ուղարկածներին ընդունեց: Տեղի ունեցավ խիստ կռիվ, որի ժամանակ շատ պարսիկների սպանեցին. Շապուհի զորքը պարտություն կրելով նորից Մծբին դարձավ:

(Մ. Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 281)

*
* *

Իսկ Շապուհը եկավ Տիգրանակերտ: Դրները դարձյալ կողպեցին ընդդիմանալու նրան և պարսպի վրա բարձրանալով աղաղակում էին. «Հեռացի՛ր մեզանից, Շապուհ, ապա թե ոչ պատերազմով քեզ առաջինից ավելի մեծ չարիքներ կհասցնենք»:

(Մ. Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 283)

*
* *

Գրավեցին Վաղարշապատ քաղաքն էլ. քանդում, բրում, հիմքից կործանում էին. այս քաղաքից էլ գերի տարան տասնինը հազար տուն: Ամբողջ քաղաքում չենք չթողին, բոլորը քարուքանդ արին, կործանեցին: Ասպատակներ ուղարկելով՝ բոլոր չափահաս մարդկանց կոտորում էին, կանանց, երեխաներին գերի էին վերցնում: Հայոց թագավորության բոլոր բերդերն առան, մեծ քանակությամբ պաշարեղեն հավաքեցին նրանց մեջ և բերդապահներ թողին: Առան Երվանդաշատ մեծ քաղաքն էլ. այստեղից դուրս բերին քսան հազար տուն հայ և երեսուն հազար տուն հրեա, իսկ քաղաքը հիմնահատակ կործանեցին:

(Փ. Բուզանդ, Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 218—219)

*
* *

Տիգրանի մահից հետո թագավորում է նրա որդի Վաղարշը իր համանուն Վաղար-

շի՝ պարսից թագավորի երեսուներկուերորդ տարում: Սա ավան է շինում այն տեղը, որ նա ճանապարհին ծնվեց, երբ նրա մայրն Այրարատ ձմեռնոցից գնալու ժամանակ հանկարծ երկունքը բռնեց և նրան ճանապարհի վրա ծնեց, Բասեն գավառում՝ Սուրբ և Արաքս գետերի խառնուրդի մոտ: Այս ավանը շինելով՝ իր անունով կոչեց Վաղարշավան: Սա պարսպով պատեց նաև Վարդգեսի հզոր ավանը, որ գտնվում է Քասախ գետի վրա և որի մասին առասպելներն ասում են.

«Գաղթեց գնաց Վարդգես մանուկը
Տուհաց գավառից, Քասախ գետի մոտ,
Եկավ ու նստեց Շրեշ բլրի
Արտեմիդ քաղաքի, Քասախ գետի մոտ,
Երվանդ արքայի դուռը թակելու»:

(Մ. Խորենացի. Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 200)

* * *

Բայց Արշակն ավելի ևս հանդգնելով մի անմիտ գործ գործեց: Մասիս լեռան թիկունքում նա շինեց մի դաստակերտ՝ մեղավոր մարդկանց ժողովատեղի. և հրաման արձակեց, թե ով կարողանա ազատել ընկնել ու բնակվել, նրա վրա դատական օրենքը չի գործի: Անմիջապես ամբողջ հովիտը ծովացած լցվեց մարդկանց բազմությամբ, որովհետև ավազակներն ու սարտապանները, ծառաները ու հանցագործները, գողերն ու մարդասպանները, ուրիշների կանանց փախչողները և ուրիշ սոնց նմանները փախչում աստաստանում էին այնտեղ,—և նրանց դեմ, հարցաքննություն ու դատաստան չկար: Նախարարները շատ անգամ բողոքեցին, բայց Արշակն նրանց չլսեց, այն աստիճան, որ նրանք մինչև Շապուհին դիմեցին:

(Մ. Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 262)

* * *

Իսկ հայոց նախարարները հավաքվելով դիմեցին թագավորական դաստակերտ Արշակավանի վրա, որով կոտորեցին տղամարդկանց և կանանց, բացի ծծկեր երեխաներից, որովհետև նրանք յուրաքանչյուրը կատաղած էին իրենց ծառաների և հանցավորների դեմ:

(Մ. Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 262—263)

* * *

Այս ժամանակ (Արշակ) թագավորը իր համար մի դաստակերտ շինեց Հուլիտ կոչված Կոգ գավառում և իր իշխանության բոլոր գավառներին հրաման ուղարկեց. հրամայեց, որ ամեն տեղ մունետիկները կանչեն հրապարակներում, բոլոր գավառներում, բոլոր կողմերում հայտնեն թագավորական հրամանը, որ «Եթե մեկը մեկին պարտք է, եթե մեկը ուրիշին մի բանով վնասել է, թող բոլորը գան այդ դաստակերտը և ապահով կլինեն: Եթե մեկը (ուրիշի) արյուն է թափել, մեկին վնասել է, կինը տարել է, կամ պարտապան է, կամ մեկի գույքը գրավել է, կամ որևէ մեկից երկյուղ ունի, թող գա այնտեղ. նրա դեմ դատ ու պահանջ չի լինի: Եվ եթե մեկը մեկին մի բան պարտք է, և պարտատերը այդ տեղը գա (պահանջելու), նրան առանց դատի ու արդարադատության բռնեն և դուրս հանեն»:

(Փ. Բուզանդ, Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 159)

* * *

Իսկ այն տեղը ավան ու քաղաք դարձավ, մեծացավ, բազմամարդացավ, ամբողջ հովիտը բռնեց: Արշակ թագավորը հրամայեց այդ դաստակերտի անունը իր անունով դնել Արշակավան: Նրա մեջ նաև թագավորական ապարանք շինեցին:

(Փ. Բուզանդ, Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 160)

* * *

Երանելի Ներսեսի բերանից ելած այս խոսքերից հետո հազիվ էր անցել երեք օր, որ Աստված Արշակավանի գյուղաքաղաքը հարվածների ենթարկեց: Մարդկանց և անասունների վրա սկսեցին դուրս գալ չարորակ պալարներ, որ ոմանք կոչում են ժանտ: Այս հարվածը երեք օրից ավելի չտևեց, որ (քաղաքը) անմարդացավ, մոտ քսան հազար ընտանիք կոտորվեց, մարդկանցից ոչ ոք կենդանի չմնաց, որովհետև բոլորը հանկարծակի կոտորվեցին, ոչնչացան. կոտորածն ընդհանուր էր:

(Փ. Բուզանդ, Պատմություն հայոց, Երևան, 1968 թ., էջ 164)

ԷՐԵԲՈՒՆԻ — ԵՐԵՎԱՆ

Բազմադարյան և ելևէջներով հարուստ պատմություն ունի Երևանը: Հնագույն ժամանակներից ի վեր, Երևանի տեղը բնակեցված է եղել: Այստեղ, տակավին մեզանից 8000 տարի առաջ, այժմյան քաղաքի Շենգավիթ թաղամասի տերում գտնվում էր պղնձի-քարեդարյան (էնեոլիթի) բնակավայր-ամրոցը, որի հետքերը՝ հնագույն բնանելի տների, գերեզմանոցի, դեպի Հրազդան գետը տանող ջրի ճանապարհի մնացորդները, նշմարվում են և այսօր:

Սակայն Երևանի պատմությունը, որպես քաղաք, սկսվում է 8-րդ դարից (մ. թ. ա.), երբ ուրարտական Արգիշտի 1-ին թագավորը 782 թ. (մ. թ. ա.) այժմյան Երևանի հյուսիս-արևելյան կողմում, Առին-բերդ ցոի վրա և նրա շրջակայքում հիմնադրում է Էրեբունի կամ Երեբունի քաղաքը, որը հետագայում, հավանաբար 6-րդ դարում (մ. թ. ա.), հայերեն տառադարձությամբ կոչվել է Երևան:

ԷՐԵԲՈՒՆԻԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Փորագրված բնագիրը բաղկացած է 13 տողից: Պահպանված է հիանալի: Բնագիրը սկսվում է ուրարտական արձանագրություններին հատուկ նախաբանով.

Խալդյան մեծությամբ,
Արգիշտին Մենուայան
Այս բերդը հոյանապ կառուցեց,
Կոչեցի քաղաք Էրեբունի անվամբ՝
(Որպես) Բիայնա երկրների փառք,
Թշնամու երկրներին ի սարսափ:

Մոտ 100 տարի դրանից առաջ, այժմյան քաղաքի հարավ-արևմտյան կողմում՝ Կարմիր-բլուրի վրա կառուցվում է մի այլ բերդաքաղաք՝ Թեյշեբաինին, որը սակայն կարճատև նշանք է ունենում. 6-րդ դարի սկզբներին (մ. թ. ա.) այն կործանվում է սկիթների կողմից: Մինչդեռ Էրեբունի-Երևանը ընդմիշտ շարունակում է իր գոյությունը, 4—3-րդ դդ. (մ. թ. ա.) նախկին տեղից «գաղթելով» մի փոքր դեպի հարավ-արևմուտք, դեպի այժմյան քաղաքի կենտրոնական մասերը:

Էրեբունի-Երևանը ուրարտական ժամանակաշրջանում նշանավոր բերդ էր, պետության հյուսիսային երկրների գլխավոր կենտրոնը և երկրի խոշորագույն քաղաքներից մեկը: Նրա բերդը, իշխանական պալատը, տաճարները, միջնաբերդի պարիսպը, աքեմենյանների շրջանի պլանագարդ հանդիսասրահը, զանազան կառույցների վրա արված որմնանկարները, ուրարտական թագավորների մակագրությամբ՝ սաղավարտներ ու վահանները, արդուզարդի առարկաները ցույց են տալիս, որ Երևանը հնագույն շրջանի հայտնի քաղաքներից էր ընդհանրապես: Նրա այդ ժամանակաշրջանի պատմությունը վերանանգնվում է գրեթե բացառապես հնագիտական նյութերի հիման վրա:

* * *

Մեր մայրաքաղաքի պատմության մի խոշոր ժամանակահատվածը, մ. թ. ա. 4-րդ դարից մինչև մ. թ. 7-րդ դարի սկիզբը, մեծ մասամբ ծածկված է անհայտության քո-

ղով: Ավելի քան հազարամյա այդ ժամանակաշրջանից Երևանի մասին մեզ գրավոր տեղեկություններ չեն հասել: Մինչև այժմ չեն հայտնաբերվել նաև այդ հազարամյակին վերաբերող ճարտարապետական հուշարձաններ, ինչպես և նյութական մշակույթի քիչ թե շատ նշանակալից մնացորդներ: Անկասկած է, որ կործանարար ժամանակը, օտարերկրյա նվաճողները և աճավոր երկրաշարժերը ոչնչացրել են դրանց մեծագույն

Էրեբունիի հիմնադրության ուրարտական սեպագիր արձանագրությունը

մասը: Այնուամենայնիվ, հիշյալ հազարամյակը որոշ հետքեր է թողել Երևանում:

•
• •

Հնագիտական, հատկապես դրամագիտական նյութերը ոչ միայն ցույց են տալիս, որ Երևանը իբրև բնակավայր անընդմեջ գոյություն է ունեցել նաև ետբիայնական շրջանում, այլև հանդիսացել է դրամական տնտեսությանը վաղուց ծանոթ, առևտրի մեջ ընդգրկված Հայաստանի ավաններից մեկը:

Հայկական մատենագրության մեջ Երևանի անունը առաջին անգամ հիշատակված է Աբրահամ Աղբաթանեցի (607—615) կաթողիկոսի կողմից հրավիրված 607 թ. Դվինի ժողովի կապակցությամբ: Այդ ժողովին հայոց կաթողիկոսի, Սմբատ մարզպանի, նշանավոր եպիսկոպոսների ու հոգևորականների հետ միասին մասնակցել է նաև «Դատիթ Երևանայ» Վանաներեցը: Երկրորդ անգամ Երևանը հիշատակված է Սեբեոսի «Պատմության» մեջ՝ 650 թ. արաբական երկրորդ արշավանքի առնչությամբ: Խոսելով Արարատյան դաշտը ներխուժած արաբների մասին, Սեբեոսը վկայում է. «Եվ եկան հավաքվեցին Երևանում, մարտ տվեցին բերդի դեմ, բայց չկարողացան գրավել»: Նույն այս դեպքը Հովհաննես Դրասխանակերտցին և Սամուել Անեցին անվանում են «Երևանու կռիվ»: Դվինի ժողովին Երևանի հոգևոր ներկայացուցչի մասնակցությունը, Երևանը ամուր բերդ ունենալու ուշագրավ փաստերն անվիճելիորեն հաստատում են, որ մեր մայրաքաղաքը 7-րդ դարի սկզբում հանդիսացել է Արարատյան դաշտի մեծ և երևելի բնակավայրերից մեկը:

•
• •

10-րդ դարի առաջին կեսի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին (898—929) Երևանը անվանում է «քաղաքագյուղ»: 9-րդ դարի վերջին քառորդից սկսած Երևանը հաճախակի հիշատակվում է նաև հայերեն վի-

Արին-բերդը և Էրեբունի փողոցը

մական արձանագրությունների մեջ: Սևանի Առաքելոց եկեղեցին կառուցող Սյունյաց տիկին Մարիամը 874 թ. թողած արձանագրության մեջ եկեղեցուն կատարած իր նվերների թվում հիշում է նաև «այգի ի Գառնի և Երեվան», իսկ Մաքենիս վանքը կառուցող Սյունյաց Սուրհան իշխանը 901 թ. այդ վանքին տալիս է «հինգ այգի յԵրևան»: Հետագա դարերում ևս Երևանից այգիներ են նվիրվել Հառիճի, Կեչառիսի, Հաղարծնի, Բագնայրի, Գեղարդի վանքերին, Հովհաննավանքին, Անիի ս. Գրիգոր և Օշականի եկեղեցիներին: Վանքերին կատարված նվերներից երևում է, որ միջնադարում Երևանը հանդիսացել է այգեշատ մի փոքր քաղաք, որի բնակիչները, բացի արհեստներից ու առևտրից, զբաղվել են նաև այգեգործությամբ ու երկրագործությամբ:

19-րդ դարի պատմիչ Մխիթար Այրեվանցին, որը ծնվել է Երևանում, տեղեկացնում է, որ հայոց մեծ իշխանը, 12000 հեծելազորի տեր Ապիրատը կառուցել է Կեչառիսի վանքը և 1091 թ. հանել Երևանի առուն: Ուսումնասիրողները ճիշտ կերպով նշում են, որ Ապիրատի հանած առուն եղել է հետագայում հայտնի մամոի ջրանցքը: Այս առուն հնում հանդիսացել է Հրազդանի ձախ ափից հանված ջրանցքը, որը գրեթե ծայրեծայր անցել և ոռոգել է միջնադարյան Երևանի հողերը:

*
* *

Իր կյանքի վերջին տարիները Երևանում ապրել և այնտեղ էլ մահացել է հայ նշանավոր գիտնական, տոմարագետ և մատենագիր Հովհաննես Կոզեռն վարդապետը: Նա թաղվել է այժմյան Բարեկամության փողոցի աջ թևի բլրի վրա գտնվող գերեզմանատանը, որը հետագայում նրա անունով կոչվել է «Կոզեռն»:

*
* *

Կեչառիսի վանքի 1204 թ. անթվական երկու արձանագրությունների մեջ իբրև Երևանի տեր հիշատակված է պատրոն կամ պարոն Վարդը, որը Երևանից այգիներ է նվիրել վանքին:

*
* *

13-րդ դարի առաջին կեսում կառուցվում է Երևանի Կաթուղիկե եկեղեցին, որը գտնվում է Աբովյան փողոցի վրա, ակադեմիայի շենքի բակում: Դա 13-րդ դարին հատուկ ոճով կառուցված, կենտրոնագմբեթ գեղեցիկ եկեղեցի է: Այն եկեղեցին բացառիկ արժեք ունի, որովհետև Երևանում հայկական հին ճարտարապետության կանգուն մնացած միակ կոթողն է, որը դիմացել է ժամանակի բոլոր արհավիրքներին: Մեր մայրաքաղաքի միջնադարյան պատմության ուսումնասիրության տեսակետից արժեքավոր են նաև Կաթուղիկեի պատերի վրայի արձանագրությունները: Հավանաբար, 13-րդ դարում են կառուցվել նաև Գեթսեմանի և Անանիայի մատուռները, ինչպես և 1679 թ. երկրաշարժից հիմնահատակ կերպով կործանված Երկու-ելուզի, այսինքն՝ երկու բեմ ունեցող եկեղեցին, որը, 1679 թ. Երևան այցելած ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենի վկայությամբ, գտնվել է քաղաքի շուկայի մոտ: Ժան Շարդենը Երևանում տեսել և նկարագրել է նաև հին ժամանակներում կառուցված, հայերեն արձանագրություններով աշտարականման մի կոթող, որի շուրջը փռված են եղել մի խոշոր շինության ավերակները: Այս կոթողը, որի տեղը և բնույթը մինչև այժմ անհայտ են մնում, նույնպես հիմնահատակ կործանվել է 1679 թ. երկրաշարժի ժամանակ:

Նոր եկեղեցիների ու սրբավայրերի կառուցումը, նրանց տեղադրումը ապացուցում են, որ 13-րդ դարի առաջին կեսում ոչ միայն զգալի չափով աճել էր Երևանի բնակչության թիվը, այլև ընդարձակվել, զարգացել և քաղաքագյուղից վերածվել մի փոքր քաղաքի:

13-րդ դարի հեղինակ Վարդանը իր «Աշխարհացույց»-ի մեջ արդեն Երևանը անվանում է քաղաք: Նա գրում է՝ «Կոտայք Երևան քաղաքն է իր վիճակովն» : Այս վկայությունից հետևում է նաև, որ Երևանը հանդիսացել է Կոտայք գավառի կենտրոնը:

*
* *

Այնուհետև Հայաստանը ընկնում է Մերձավոր Արևելքի մոնղոլական պետության կամ Էլխանության ծանր և անարգ լծի տակ: Մոնղոլները իրենց նվաճած բոլոր երկրներում, այդ թվում և Հայաստանում, հաստատում են կողոպուտի, սիստեմատիկ սպանությունների և տեռորի ռեժիմ:

Մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանի Երևանի մասին մենք որոշ տեղեկություններ ենք ստանում Կաթուղիկե եկեղեցու պատերի վրա գտնվող արձանագրություններից: Թվակիր ամենահին արձանագրության առաջին մասում կարդում ենք. «Ի թուին ՉԺԳ, (713+551=1264 թ.) Աստուծոյ ողորմութեամբն և ելոյանին ուժովն ես Սահմադինս պարոն Աւետեաց որդիս զԵրեվան գնեցի հողով և ջրով»:

*
* *

Երևանը 15-րդ դարի 40-ական թվականներից դարձել է նախկին Այրարատյան «աշխարհի» մեծ մասն ընդգրկող մի կուսակալություն՝ Երևանի խանության կենտրոնը: Այդ ժամանակից սկսած Երևանը մեր մատենագիրների երկերում հիշատակվում է որպես «Այրարատյան աշխարհի մայրաքաղաք», թեև Հայաստանը չուներ իր պետականությունը և ենթակա էր օտարների ծանր տիրապետությանը:

*
* *

1441 թվականին, Երևանի Ցաղուպ խանի օրով, ս. Էջմիածնում գումարվում է ազգային-եկեղեցական մեծ ժողով, որը որոշում է՝ Հայրապետական Աթոռը Սսից տեղափոխել իր «բնիկ» վայրը՝ ս. Էջմիածին:

Երևան հավաքված 300 պատգամավորները, Ցաղուպ խանի հրամանով, «փողով և թմբկով և գոչմամբ բարձրագունի» գալիս հասնում են Վաղարշապատ (Թովմա Մեծոփեցի, «Ցիշատակարան», Թիֆլիս, 1892, էջ 88):

*
* *

Բայց թուրքմենական ցեղերի և օսմանյան թուրքերի ու պարսիկների միջև մղվող պա-

Էրեբունի. Սուսի տաճարի մուտքը

տերազմների հետևանքով, 15—18-րդ դարերում Երևանը բազմաթիվ անգամ ենթարկվել է ավերման և ավելի քան 14 անգամ անցել ձեռքից-ձեռք: Ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջերը, Երևանը մնում էր որպես հետամընաց գավառական քաղաք:

* * *

Ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ժամանակ (1826—1828 թթ.) Արևելյան Հայաստանի մեծագույն մասը միացվում է Ռուսաստանին: 1827 թ. հոկտեմբերի 1-ին ռուսական զորքերը, որոնց օգնում էին բազմաթիվ հայ կամավորներ ու բնակչության զանգվածներ, Երևանը ազատագրում են պարսկական լծից: 1828 թվականին Երևանը դառնում է նախկին Երևանի ու Նախիջևանի խանություններից կազմավորված հայկական մարզ, իսկ 1840 թվականին՝ Երևանի գավառի կենտրոնը: Հետագա տարիներին վարչական նոր փոփոխությունների շնորհիվ կազմակերպվում է Երևանի նահանգը (1850 թ.), որի կենտրոնը դարձյալ Երևանն էր:

* * *

Լեռ քարափի վրա՝ ցից գլուխը բարձրացնում, թամաշա լա անում հանդարտ՝ հազար գլխանի դևի պես՝ **Երևանու**՝ հազար տարեկան քավթառ, պառաված, չորս կողմը խանդակով կապած, բրջերով ղայիմացրած, սո՛ւր սո՛ւր ատամները գլխին շարած, հինգ գազաչափ հաստ պարսպով երկու տակ բռնած, մեկ ոտը **Կոնդումը**, մեկ ոտը **Դամուրբուլաղի** գլխին դրած, մեկ բերանը հյուսիս, մեկը հարավ բաց արած, չորացած գլուխը երկինքը ցցած, լեռ փեշերը երկրումը փռած, անամոթ երեսը կոկած, սվաղած, հազար բնով, հազար փանջարա աչքերը դես ու դեն չռած, ջուխտ չանգերով Զանգվի՝ քարոտ, զարհուրելի, սևադեմ ձորը խտտած, դոշին կպցրած, անմազ, անլեզու, մարդակեր **բերդը**, ու դեղնած երեսը հեռու տեղից ծածկում, ագահ աչքերը գետնին քցում, որ միամիտ տեսնողին դևա շուտով խաբի, դևա հեշտ իր ճոցը քաշի ու բիրադի, անձեն, անսաս կուլ տա, փչացնի:

Պարսիկ նրան շինեց, խորամանկ, խաբեբա, թե Օսմանցի նրա հիմքը դրեց՝ կատաղի, անհաշտ, ո՛չ գիր կա, ո՛չ թարեղ: Նրա պատմությունը խավարի միջումն ա, մարդ ուղիղ չի՛ գիտի, չի՛ լսել:

(Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, Երևան, 1959 թ., էջ 60)

* * *

Երևանու բերդն, Հայաստանու հողն՝ որ հազար տարուց հետ սկսած՝ դառել էր գո-

ղի ու ավազակի բնակարան: Է՛ն հողը, էն հիանալի աշխարհը, ուր տեղ որ դրախտն էր եղեմական, ուր որ Աստված՝ բոլոր աշխարը ջրհեղեղովը երբ որ կործանեց, Հայոց սուրբ Մասսա սարը միայն արժան տեսավ, որ Նոյան տապանը նստի ու Հայոց երկրիցը էլ եղ մարդիկ բազմանան ու ուրիշ երկրներ էլ շինություն քցեն: Է՛ն սուրբ հողը, ուր որ անպարտելին Հայկ՝ անաստված Բելա չար մտքին չհավանելով՝ իր ընտանիքը, իր քաջ, պատվական զորքը հավաքեց, եկավ ու Հայաստանի զարմանալի սարերի, սիրուն դաշտերի տեսույն մայիլ մնացած, Զանգվի դրախտանման ձորը, Զանգվի փրփրադեզ, անահ ջուրը, Երասխի մարմանդ ծոցը, Մասսա ու Ալագյազի երկնանման գլուխը, Սևանա ծաղկափթիթ ձորերն ու սարերը տեսնելով, իր մզրախը ցցեց ու իր սուրբ անունովը Հայաստան կոչեց ու Բելա անհոգի մարմինը իր նետ ու աղեղին մատաղ արեց:

(Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, Երևան, 1959 թ., էջ 61)

* * *

Երևանո՛ւ բերդն, Երևանո՛ւ բերդն՝ ա՜խ՝ որ առավոտը բացվելիս՝ նրա էն լաչար գլուխը մարդի աչքով չէ՛ր ընկնում, հենց իմանաս՝ թե դժոխքն ա իր բերանը բաց անում, ատամները ղրճտացնում ու իր ապականալ, թունավոր դառը շունչը չորս կողմը փրփրալով փչում, ցրվում, փռնչացնում, որ կարենա՝ իր հոտած աղկների կերած, լափած արդար ջանը մարսի, էլի չանգերը դուրբարա քցի, էլի հազար անմեղ, արդար հոգի՝ անծամ կուլ տա, իր անկուշտ փորին մատաղ անի: Արեգակը մտնելիս հո՛ հենց իմանաս՝ թե Սադայելի որդիքն ու զավակները, նրա զորքն ու զորապետներն ելին իրենց դիվական խաղը խաղում, իրանց դժոխային քեֆն անում ու բրջերի գլխին՝ մեկ կտրած գլուխ էս տեղ էին, ոտի տակ տալիս, մեկ անգլուխ լաշ էնտեղ էին կտոր կտոր անում, վրեն թքում, ծակտ տալիս, ծիծաղում, հրհռում, քրքռում ու թրրով, մզրախով, լա փետով մեկ մեռած մարմին էս կողմն, էն կողմն գլորում, քացի տալիս ու ներքև քցում:

* * *

Երևանո՛ւ բերդը՝ Երևանո՛ւ բերդը, ա՜խ՝ աչքս դուրս գա, քանի՞ քանի ողորմելի Հայի միս ա կերել, քանի՞ քանի անմեղ հոգի՝ տարիքներով չարչարվելուց, տանջվելուց կենդանի նահատակ ելելուց, կրակի, բոցի, երկաթե շամփրի, թոխմախի, կրակած քարփչի տանելուց, համբերելուց եղը, կամ թոփի գլուլի հետ ա թռել, հազար կտոր էլել, կամ տարաղաչի (կախաղանի) վրա լա՝ գոռալով, երկինք, երկիր աղաչելով, իր միսն իր ատամներովը կոծելով, աչքերը դուրս տրաքելով, դուվում, դարդաշ, իրավորի, ազգականի, իր որդոց, զավակաց ձենը լսելով, տրորվելով, փոթոթվելով, հոգին ավանդել, երկինքը գնացել, որ պրծնի էս դառն աշխարքիցը, էն կատաղի գազանների ձեռիցը: Քանի՞ քանի ջահել երիտասարդ՝ մեկ սաղ օջաղի մեն մենակ որդի, մեկ աղքատ, չքավոր տան սին, մխիթարություն, մեկ տասը գոր-խ քյուլֆաթի տեր ու ապավեն, իր ծաղկած, դալար հասակին, իր ըմբրի ու արեվի նոր բաց էլած ժամանակին՝ կամ սաղ սաղ քերթվել ա, կամ իր պատվական գլուխը գառան պես թրին դեմ արել, որ երկնքումը իր ջահելությանը մուրազն առնի, վայելի, չունքի երկիրը նրա անարատ արնին էր ծարավ՝ որ շուտով խմի ու բալքի կշտանա:

(Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, Երևան, 1959 թ., էջ 66—68)

ՍԱՄՎԵԼ ԱՆԹՈՍՅԱՆ
(Բանասիրական գիտությունների թեկնածու)

ԵՐԵՎԱՆ՝ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՈՍՏԱՆԸ ՀԱՅՈՑ...

Այս մոլորակի վրա ապրող ամեն մի ժողովուրդ պատմականորեն իրեն բաժին ընկած հողատարածության վրա իր երկրի որևէ լեռ, գետ, անտառ և կամ լիճ իրեն ավելի հոգեհարազատ է համարում, հոգեկան աշխարհի թարգմանը և ֆիզիկական գոյության առհավատչյան: Եգիպտացիների համար աշխարհագրական այդ միավորը Նեղոսն էր. հույն պատմիչի արտահայտությամբ՝ Եգիպտոսը Նեղոսի պարգևն է: Հընդիկ բարի ժողովրդի գոյատևումը նշանաբանում է Գանգեսը, իսկ մեզ՝ հայերիս համար ամենանվիրականը Արարատ լեռն է և Արարատյան դաշտը: Աստվածաշնչի համաձայն Արարատը «մարդկայնոց ցեղի օրրան» է համարվում, իսկ մեր պատմահայրը Հայկ նահապետին Հայաստան աշխարհի ա՛յս կողմերն է առաջնորդում: Այս իմաստով բոլորովին պատահական չէ, որ հայ ժողովրդի հիմնած 12 մայրաքաղաքներից մեծ մասը Արարատ լեռան շրջագծի մեջ են, վեհապանծ Մասիսի պահպանող հայացքի տակ: Այդ մայրաքաղաքներից են Արմավիրն ու Արտաշատը, Վաղարշապատը, Դվինն ու Բագարանը: Հայոց հայրապետությունը նույնպես հաստատված է եղել և է Արարատյան աշխարհում՝ Էջմիածնում՝ Լուսավորչի մեծ տեսիլքի սրբավայրում, ուր և Մեսրոպ Մաշտոցը երկրորդեց մեծ տեսիլքը՝ իր ժողովրդի հարատևումը կապելով գիտության, լույսի, իմացության, բանականի հետ. «Քանզի յԱրարատեան գաւառին բլխեցին հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ»:

Երեբունի՞... այս բառն այսօր խորհրդանշում է հայ պատմություն, հայ քաղաքակրթություն, հայ կառուցողական հանճար: Նախահայկական պետականության նախահայր Արատյան Արամը մ. թ. ա. 9-րդ դարում հայոց բարձրավանդակում հիմնեց մի հզոր պետություն, որ մի քանի դար շարունակ կառույցներով պատեց երկիրը: Բիայնայի հզոր թագավորներից Մենուայի որդի Արգիշտի Ա-ն ս. թ. ա. 786 թ. գահ բարձրանալով՝ իր թագավորության 5-րդ տարում, ինչպես վկայում է Վանի Խոռխոռյան արձանագրությունը, կառուցեց Էրեբունի բերդաքաղաքը: Թշնամիներն ավերեցին այն, բնության տարերքն էլ իրենց հերթին, և դարեր շարունակ մայր հողն իր խորհրդավոր գաղտնարաններում էր պահում հին աշխարհի այդ գեղեցիկ բերդաքաղաքը, մինչ գիտնականներն աշխատում էին բացատրություն տալ Երևան քաղաքի հիմնադրման և նրա ավերման մասին: Եվ միայն 1894 թ. մի բարի գյուղացի ներկա Էրեբունի բերդաքաղաքի շրջակայքում իր հողը հերկելիս գտավ մի սեպագիր արձանագրություն, որ գիտնականները կարդում էին այսպես.

«Արգիշտի
Մենուայի որդի
Կառուցեց այս բերդը
Այս 10.100 քարերից»:

Հնագիտությունը գիտեր արդեն բերդի կառուցման մասին: Էրեբունիի պատմության համար բացառիկ պիտի մնա 1950 թվականը, երբ գիտությունների ակադեմիայի հնագիտության բաժնի մասնագետները հին բերդաքաղաքում պեղումներ կատարելիս գտան 13 տողանի հայտնի սեպագիր արձանագրությունը, որը հմուտ ուրարտագետ Մարգարիտ Իսրայելյանը կարդաց այսպես.

«Խալդյան մեծությամբ,
Արգիշտին Մենուայան
Այս բերդը հոյակապ կառուցեց,
Կոչեցի քաղաք Էրեբունի անվամբ՝
(որպես) Բիայնա երկրների փառք,
Թշնամու երկրներին ի սարսափ...»

թագավորությունից: Պատմական տարբեր դարաշրջաններում ինչ ցեղ կամ ազգություն էլ քաղաքական ու տնտեսական աշխուժություն ցույց տված լինի հայոց բարձրավանդակում, մինչև այն է, ժողովուրդը գոյատևում էր՝ անտարբեր մնալով իշխանավորների



Արին-բերդ. Որմնանկարի վերակազմություն (Կ. Հովհաննիսյանի)

Ինչպես է նույնանում Էրեբունին Երևանի հետ: Հնչյունական հայտնի օրենքով հայկական բարձրավանդակի հին տեղանունների բ հնչյունը հայերենում տալիս է վ. ասենք, այդ հնչյունները հենց նույն լեզվի մեջ ևս կարող են միմյանց փոխարինել: Մյուս կողմից՝ մեր կարծիքով, հայերենում երևան (գալ, հանել, բերել) բառի անկախ գոյությունը ժողովրդական ստուգաբանությամբ հին Էրեբունի ձևին պետք է որ հայի համար դյուրըմբռնելի և դյուրավ արտասանելի Երեվան ձևը տար: Էրեբունի-Երևան փոփոխությունը մի մասնիկն է այն մեծ առեղծվածի, թե ինչպես «նախահայկական» թագավորությունը հայոց բարձրավանդակում պատմական զարգացումով եկավ հանգեց Երվանդյանների և ապա Արտաշեսի հայկական թագավորությանը: Այժմ արդեն կամաց-կամաց համոզում է դառնում այն փաստը, որ չի կարելի անջրպետել Բիայնան հայկական խժդժություններին: Վերջին տարիներում կատարված լեզվաբանական ուսումնասիրությունները ևս ցույց են տալիս, որ ծագումնաբանական և լեզվական շատ աղերսակցություններ կան ուրարտերենի և հայերենի միջև: Մյուս կողմից՝ մեզ մեծապես կարող են օգնել Հայաստան աշխարհի տեղանունները, ազգանունները, որոնցից «ուրարտական» համարվածները դարեր շարունակ մերազգյա, ճշիրական ու սուրբ են դարձել մեր ժողովրդի համար: Եվ վերջապես, հայտնի է, որ Արամը ուրարտական պետության հիմնադիր թագավորն է: Ահա մոտ 3000 տարի հայ մայրը Արամ է կոչում իր որդուն, ըստ մեր պատմահոր Արամը հայրն է Արա Գեղեցիկի: Արդ, ինչպե՞ս կարող էր ժողովուրդը 3000 տարի պահել մի անուն, եթե սրտի թելերով, հոգեհարազատությամբ կապված չլիներ դրան:

Ռուսաս Բ-ի կողմից Թելշեբաինիի հիմնա-

դրությամբ Էրեբունին պետք է կորցրած լիներ իր ռազմական և պաշտպանական նշանակությունը, ահա ինչու լքվել է այն. մինչդեռ բերդաքաղաքում վերջերս գտնված արձանագրությունները ցույց են տալիս, որ Էրեբունին

Արին-բերդ. Որմնանկար

իր ռազմական-պաշտպանական նշանակությունը չէր կորցրել ոչ միայն Ուրարտու պետության վերջին շրջանում, այլ նաև Աքեմենյան-հայկական շրջանում: Հայաստանում մեծագործ արքաները հիմնում են նորանոր մայրաքաղաքներ հենց Արարատյան դաշտում, և Էրեբունի բերդաքաղաքը, կարծես, չկա այլևս, դարձել է պատմական հուշ: Սակայն ոչ. հայացած Էրեբունի-Երևանում կյանքը, ինչպես անթեղված կրակ, շարունակվում է և ահա՝ իր հիմնադրումից ուղիղ 1400 տարի հետո Երևանի մասին խոսվում է 607 թ. մի պատմական փաստաթղթի՝ «Գիրք թղթոցի» մեջ: Մովսես Եղվարդեցի կաթողիկոսի վախճանվելուց հետո գահակալած Աբրահամ կաթողիկոսն այն ժամանակվա հայոց մայրաքաղաք Դվինում եկեղեցական ժողով է գումարում, որին որպես պատգամավոր ներկա են լինում Երևանի եռեցներ Դավիթն ու Ջոջիկը: Այնուհետև 7-րդ դարի պատմիչ Սեբեոսը վկայում է, որ 642—643 թթ. Հայաստան արշաված արաբ հրոսակները պաշարում են Երևանը, ուր արյունահեղ մարտեր են մղվում: 10-րդ դարի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը Երևանի մասին խոսում է արդեն որպես գյուղաքաղաքի:

Ավելի ուշ Երևանում կառուցվում են մի քանի եկեղեցիներ՝ Կաթողիկեն (ԺԳ դար), Պողոս-Պետրոս եկեղեցին (հնագետների կարծիքով հիմնադրումը 5-րդ դարում) և այլն: Սակայն պետք էր ունենալ մի քաղաքամայր, մի հուսատու փարոս, որի վրա սեվեռվեր ամբողջ հայության հայացքը: Եվ ահա պատմական անհրաժեշտությամբ Երևանը դառնում է Այրարատյան աշխարհի քաղաքամայրը, իսկ պարսկական տիրապե-

Երևան. Մայրաքաղաքն հայոց

տության ժամանակաշրջանում՝ Երևանի խանության կենտրոնը՝ 24.000 քկմ. տարածությամբ: Տխուր և անուրախ ժամանակներ են բաժին ընկնում հայոց նորաստեղծ մայրաքաղաքին: 15—18-րդ դարերում թուրք-պարսկական 222-ամյա պատերազմների ընթացքում Երևանը 14 անգամ անցնում է մեկ Պարսկաստանի, մեկ Թուրքիայի ձեռքը: 1582—1583 թթ. օսմանցի Ֆահրադ փաշան կառուցում է Երևանի բերդը, որն այնուհետև դառնում է թուրքական ու պարսկական բռնակալության ամրոցը: 250 տարի շարունակ այդ բերդում դավեր են նյութվում հայ ժողովրդի, հայ եկեղեցու դեմ: Մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը խտացրած գույներով է նկարագրել արևելյան բռնապետության այդ անազդու ամրոցը: Հայ ժողովրդի ըմբոստ ու ազատասեր ոգին դարեր շարունակ պայքարեց օտար բռնակալների դեմ: Նշանավոր է հատկապես երևանցիների ու Արարատյան դաշտի բնակիչների ցույց տված դիմադրությունը թուրք Աբդուլլա փաշայի հրոսակների դեմ: 1724 թ. Երևանի խանը, Աշտարակում պարտություն կրելով թուրքական զորքից, գալիս ամրանում է Երևանի բերդում՝ թուրք հրոսակների քմահաճույքին հանձնելով իր խանության բնակիչներին: Սակայն հայ ազգաբնակչությունը կամավորական գնդեր կազմելով մոտ 2 ամիս դիմադրություն է ցույց տալիս թուրք հրոսակներին, մեծ վնասներ պատճառում, թեև թշնամու կանոնավոր զորքի գերակշռող ուժի դեմ ստիպված է լինում ընկրկել: Ըստ Աբրահամ Երևանցու, որ դեպքերին ականատես է եղել, կամավորների թիվը եղել է 9443, որոնք սրախողխող են արել թշնամու 6000 զորք՝ իրենք էլ ռազմի դաշտում թողնելով 1300 հոգի:

Այս դարերի պարսկական տիրապետության բոլոր բռնությունները գերազանցեց արյունռուշտ Շահ-Աբաս արքան, որը 1604 թ. Այրարատում առաջացող թուրքական բանակների առջևից նահանջելով՝ իր հետ քշեց տարավ նաև Արարատյան դաշտի հայ ազգաբնակչությունը: Դեպքերին ականատես Առաքել Դավրիժեցի պատմիչը արտասուք հաչու նկարագրում է, թե ինչպես գարնանային անձրևներից հորդացած մայր Արաքսը իր ալիքների վրա փայտի տաշեղի նման տանում էր ջրահեղձ եղած հայ մայրերի, դուստրերի և անմեղ մանուկների դիակներ:

Երևանը շարունակում էր մնալ աշխարհի տխուր ու հետամնաց մի անկյուն՝ տխուր տպավորություն թողնելով այցելուների վրա, որոնք Երևանը նկարագրում են որպես «մի ետ ընկած սովորական ասիական քաղաք՝ ծուռումուռ փողոցներով, կեղտոտ, փոշոտ...»: Իսկ բանաստեղծ Նաղաշ Հովնաթանը երգիծական մի բանաստեղծություն է գրել Երևանի մասին «Գովասանություն Երևանա քաղաքին» ծաղրական վերնագրով:

Այս բոլորի վրա գումարվեց նաև 1679 թ. «երևանյան երկրաշարժը», որ մեծ աղետի ենթարկեց գավառը՝ քանդելով և վնասելով ճարտարապետական շատ կառույցներ, որոնց թվում և Գառնիի հեթանոսական տաճարը:

Երևանի գրավման և Արևելահայաստանի՝ Ռուսաստանին միակցվելու պատմական իրադարձությամբ 1828—1840 թթ. Երևանը դարձավ Հայկական մարզի կենտրոն, 1840—1849 թթ.՝ Երևանի գավառի կենտրոն, իսկ 1850 թ.՝ Երևանի նահանգի կենտրոն: Այնուամենայնիվ Երևանը մնում էր հետամնաց, անհրապույր, կեղտոտ ու փոշոտ մինչև 1920-ական թվականները: «Ըստ իմ կարծյաց, Երևան բառն ավելի պետք է նշանակե դժոխք կամ դժոխային քաղաք... անկարելի է պատսպարվել անհնարին ապականութենեն, որով լցված է օդն, ջուրն և բույն դրած է հողին մեջ... Երևանու հին շուկան մի մեծ աղբակույտ է... անհնարին շատությամբ կմնան դեզ-դեզ գարշություն, ցեխ, աղբակույտ... ամեն տեսակի կենդանյաց ոսկորներ...»,—այսպես տխուր է նկարագրում Երևանը Դ. Լ. Մարդովցևը նույնիսկ 19-րդ դարի վերջերին, 1895 թ.: Երևանի մահաբեր կլիման կասեցնում էր ազգաբնակչության աճը. «Երևանա ոչ բարեխառն կլիմայի պատճառով բնակիչք չեն բազմանար, և մանուկները փոքրիկ հասակի մեջ բազմությամբ կմեռնին»,—գրում է Էփրիկյանը «Բնաշխարհիկ բառարան»-ում (Վենետիկ, 1905 թ.): Ահա ինչու Երևանի բնակչությունը 1829 թ. 11463 շնչի դիմաց 1880 թ. գրեթե աճ չէր տվել, իսկ 1912 թ. ընդամենը 36836 հոգի էր կազմում:

Վրա է հասնում Առաջին աշխարհամարտը: Հայ ժողովուրդն առավելագույնս է տուժում պատերազմում՝ դառնալով մեծ պետությունների ստոր հաշիվների քավության նոխազը: Աճում է Երևանի ազգաբնակչության թիվը, բայց ավա՜ղ, թուրքական յաթաղանից մազապուրծ եղած գաղթականության հաշվին, որոնք, ժամանակակիցների վկայությամբ, ջրի տեղ իրենց աղի արցունքն էին ծծում, իսկ հացի տեղ իրենց եղունգներն էին կրծում... Ստեղծվել էր մի վիճակ, երբ այլևս անկարելի էր որպես հայ ապրել այս մոլորակի վրա: Հայ բանաստեղծը նույնիսկ մրմնջում էր.

«Մի՛թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի...»:

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանը հռչակվեց Խորհրդային, իսկ Երևանը՝ նորա-

Երևան. Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի շենքը, դիմացը՝ «Կարապի լիճ»-ը

ստեղծ պետության քաղաքամայրը... Փոխվեց հայ ժողովրդի ճակատագիրը, դյուցազն Վահագնի պես վերածնվեց, ոտքը նահանջեց, հայն ունեցավ հայրենիք, դրոշ, բանաստեղծի բառերով ասած՝ «Երկինք մի մաքուր, արև մի բոսոր»: Հայոց նոր ոստանը դարձավ պետական հոգատարության առարկան. 1924 թ. հանձարեղ ճարտարապետ Ալ. Թամանյանին կառավարությունը հանձնարարեց կազմել Երևանի հատակագիծ: Ճարտարապետը նախագծեց 150000 բնակչի համար քաղաք: Բայց նա իրավունք ուներ. չէ՞ որ այդ թիվն այնուամենայնիվ քաղաքի այն ժամանակվա բնակչության համեմատ հընգապատիկ ավելի էր: Հանճարեղ ճարտարապետն իր ժամանակին շինանյութերի և շինարարական արվեստի աղքատ պայմաններում նախագծեց այնպիսի կոթողներ, ինչպես օպերայի և բալետի ակադեմիական թատրոնը, Լենինի անվան հրապարակի Կառավարական շենքը և շրջակա շենքերի ամբողջ խումբը, կառույցներ, որոնք այսօր իսկ հիացնում են մեծ երկրների՝ շատ շինություններ ու կոթողներ տեսած մարդկանց: Այստեղ արժե մեջ բերել ամերիկացի հայտնի արվեստագետ Ռոքուել Քենտի կարծիքը. «Երևանի Լենինի հրապարակը ճարտարապետական գլուխ-գործոց է համաշխարհային չափանիշով: Եթե հազար բնախնդիր մասնագետ այսօր կազմելու լինեն աշխարհի յոթը հրաշալի հրապարակների ցուցակը, ապա Երևանյանը կմտնի դրա մեջ»:

Քաղաքամայր Երևանը, թիկնելով իր պատմության 27 հարյուրամյակներին, վերջին հիսուն տարում անճանաչելիորեն փոխվեց. «Ես իմ կյանքում չեմ տեսել ոչ մի այնպիսի քաղաք, որն այսքան արագ աճեր, ինչպես Երևանը.... Ինձ ապշեցրին այն վիթխարի փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել այստեղ, համեմատաբար կարճ ժամանակում»,—գրում է անգլիացի գրող, թատերագիր Ջոն Պրիստլին: Եվ իրոք, 1913 թ. 30.000 բնակչի փոխարեն այսօր Երևանում բնակվում է 715.000 մարդ: Մի քաղաք, որտեղ կենտրոնացած շուրջ 90 գիտա-հետազոտական հաստատություններում աշխատում են 7000 գիտաշխատողներ, այնպես որ այսօրվա Երևանը ֆիզիկական իմաստով լույսով հեղեղված քաղաք լինելուց բացի հոգու, մտքի ու բանականի լույսով հեղեղված քաղաք է, որն իրոն խոհուն մայր իր գիրկն է բացել 11 բարձրագույն ուսումնական հաստատություններին, ուր սովորում են մոտ 50.000 ուսանողներ: Միայն 50 տարի առաջ ուսումնական հայորդիները օտար երկրներում էին նոթություն ստանում, մինչդեռ այսօր մայր հայրենիքն ուսում է տալիս իր տարագիր հարյուրավոր որդիներին: Այսօր Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են մի քանի հարյուր սփյուռքահայ պատանիներ ու աղջիկներ՝ խորամուխ լինելով դարի ամենայն կարգի գիտությունների մեջ: Ճշմարիտ է, որ այսօրվա հայ երիտասարդի գերագույն իդեալը բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելն է, անշուշտ, առավել բանիմաց դառնալով՝ առավելագույնս օգտակար լինելու համար իր ժողովրդին, մարդկային համայն քաղաքակրթությանն ու առաջընթացին...

Տարիների ընթացքում Երևանն ունեցավ բարձրագույն կրթությամբ հայորդիների բազմահազարանոց մի փաղանգ, որոնք մեծապես նպաստեցին ինչպես հասարակական գիտությունների ու արվեստների, այնպես էլ տեխնիկական գիտությունների զարգացմանը Հայաստանում: Նրա՛նց շնորհիվ է, որ հայ մտքի շողարձակումները այսօր տեսանելի են երկրագնդի շատ հեռավոր վայրերում, իսկ ձեռնարկությունների թողարկած ավելի քան 150 արտադրատեսակներ «Երևան» մակնիշով արտահանվում են արտասահմանյան 70-ից ավելի երկրներ: Բավական է բերել թեկուզ հետևյալ փաստը. 1913 թ. համեմատությամբ 1967 թ. Երևանի արդյունաբերական ձեռնարկությունների համախառն արտադրանքն աճել է... 415 անգամ:

Շատերն ուղղում են «մայրաքաղաք» բառը, պետք է ասել՝ քաղաքամայր, սակայն Երևանն այսօր նոր իմաստավորում է ստացել. նա քաղաք-մայր է, որ ապավինել են դառեր շարունակ օտար երկրներ տարագրված հայորդիները: Մեծ ու բարի է քաղաք-մոր սիրտը. այսօր էլ նա իր գիրկն է առնում իր պանդուխտ որդիներին, որոնք ազատ են իրենց աշխատանքով նաստեու հայրենիքի ծաղկմանն ու բարգավաճմանը, մեծ երթի ճանապարհին մտնելու նոր խրոխտաքայլ զավակների շարքերի մեջ:

Երևանը ճարտարապետական քարաք է. աստ ճշմարտությունը խոստովանում են նույնիսկ օտար մասնագետ ճարտարապետները ու Հայաստան ուղարկած օտարերկրյա հետազոտությունները. «Ինձ վրա հսկայական տպավորություն թողեցին հանրապետության մարզասարաի ճարտարապետական անսամբլները: Ինձ թվում է, որ ժամանակին Երևանը նոստնա աշխարհի ամենաաղեղեցիկ քաղաքներից մեկն»,—գրում է Պաբլո Ներուդան: «Երբ Երևանի վերանորոգումն ավարտվի, նա նոստնա աշխարհի գեղեցիկագույն և իր առգահին ճարտարապետական ոճով հնագույնս ուսումնասիրված մեկն»,—ասելիս է ամերիկացի գրող, ֆիզիկոս Միտչել Ուիլսոնը: Այսօր Երևանը զարդարում են

տասնյակ մայրուղիներ ու փողոցներ, որոնց երկայնքով շուրջանակի ընդարձակված են հայոց զվարթ վարդագույն տուֆով կառուցված հազարավոր բնակելի ու վարչական շենքեր, որոնցում ապրում ու ստեղծագործում է բարեկեցիկ ու տաղանդավոր, հնադարյան մի ժողովուրդ: Նորակառույց շենքերում իրենց հատկացված բնակարանները փոխադրվելը երևանցիների կյանքի անբաժանելի մասն է: Բավական է ասել, որ վերջին 47 տարիներին Երևանում կառուցված է մոտ 4 միլիոն քառ. մետր բնակելի տարածություն:

Հայտնի ասույթ է, որևէ երկրի բարեկեցության մասին գաղափար կազմելու համար պետք է նայել երեխաներին: Օտար այցելուների վրա զվարթ տպավորություն են գործում մաքուր ու կոկիկ հագնված, առողջ ու կայտառ կարմրաթշիկ հայ երեխաները: Ճիշտ է նկատում իտալացի Ալբերտո Յակոմետին, թե «բարեկեցիկ կյանքի շնորհիվ չորս-հինգ տասնամյակում հայերը վերագտել են իրենց ազգային բնական տեսքը: Ինչքա՜ն գեղեցիկ աղջիկներ ու տղաներ կան Երևանում»:

Հայ ժողովուրդն այսօր ոչ թե միայն հետաքրքրության սահմաններում է հաղորդակցվում համաշխարհային գիտությանն ու քաղաքակրթությանը, այլ նաև գործուն մասնակցություն է ցուցաբերում. Երևանում գումարվել են տասնյակ ու տասնյակ միջազգային գիտաժողովներ, ուր հիմնարար զեկուցումներով հանդես են եկել նաև հայ գիտնականները: Գաղտնիք չէ, որ շատ հայ ուսուցներ այսօր հայտնի են աշխարհի բոլոր մայրցամաքներում: Ամփոփ ասած՝ վերջին հիսնամյակում խորհրդային Հայաստանը խաղաղության պայմաններում, ապահով ու ստեղծագործ կյանքի շնորհիվ ստեղծեց անանախընթաց ու համաշխարհային չափանիշով նախանձելի մակարդակ ունեցող տնտեսություն, գիտություն և մշակույթ: Եվ, անշուշտ, չի չափազանցում անգլիացի հայտնի գրող Ջեյմս Օլդրիջը, երբ ասում է. «Եթե այսօր ես հայ լինեի, խորապես հպարտ կլինեի և՛ հայ ժողովրդի պատմությամբ, և՛ ներկա Հայաստանով»:

Արդար լինելու համար պետք է խոստովանել, որ այս բոլորի մեջ Երևանը մեծ, շատ մեծ բաժին ունի:

ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ

ԳՈՎԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆԱՅ ՔԱՂԱՔԻՆ*

Կամիք գովել՝ դուք՝ Երևան...
Հաւէն վնաս որպէս ըզհուր,
Ջերմ և կանանչ աղտեղի՝ ջուր,
Գորտի ք.. է և փիս փրփուր,
Որպեսզ ծառի ծանգ և թրթուր:

Առաւօտուց կերթաս քազար,
Բոլ կու ծախեն բոդկ ու գազար,
Թթու մածուն, չանախ-հազար,
Խմոր հացն կուտայ նազար:

Սափոր ու կուժ՝ ամենն ծակ,
Քանի ջուր կածես՝ թէ դարտակ,
Ոչ աղբիւր կայ և ոչ վտակ:

Բաքուն չունէն պօրկչոց շալակ,
Գտակ կարեն, ձգեն թալակ,
Ծայրն երկայն, որպէս սալակ,
Մէջն պատի հատտ քօչալակ:

Թէ մէյտանն անես օրօն,
Շատ կայ տտիս շրպլեղ, տօրօն,
Շերեփ, գդայ՝ խիստ խտօրօն,
Ամէնն ածես մէկ վատ թօրոն:

Զուն մէկ գովելոյ պատճառ,
Բազաստանն փնթի, մուտտառ,
Կու ծախեն խիստ խաշար, աստառ,
Թօրփա, քէչա՝ աթառ-փաթառ:

Հաւուզի փող տաս մէկ բուռն,
Հարկիզ մէկն չառնիլ ձեռն,
Աչքն կոխես շամփուրի կեռն,
Խմեցնես էշի ...ն:

Կուզեն ելնեն ամենն քօչ,
Լի է մոծակ, մժիկ, բղօչ,
Ալիշվերիշն է խիստ փօչ,
Տալոյ՝ նամարդ, առնելոյ՝ դօչ:

Նաղաշն Երևան շատ կացաւ,
Ջիկարն այրեց, հիւանդացաւ,
Սպիտակ սառուցին զարմացաւ,
Խմեց՝ սրտիկն հովացաւ:

* Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, Եվան, 1951, էջ 99—100:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

ԵՐԵՎԱՆ

Իմ հուշերի մի աչքի մեջ տրդատակերտ չքնաղ Անին՝
Էրեբունի բլրին կանգնած՝ ես նայում եմ Երևանին,
Մի աչքովս ետ եմ նայում, մի աչքովս նայում առաջ՝
Կըշռում եմ նորն ու հինը՝ զույգ աչքերով կշեռք դառած,
Վեր ու վար են անում, սակայն, երկու թաթերն իմ կշեռքի,
Զույգն էլ քանզի իրենց վրա վաստակն ունեն հայոց ձեռքի։

Օ՜, չեմ կարող ես մի աչքով նայել ընկած հին հրաշքին,
Ում ավերակ մի տաճարն էլ հիացմունք է գոռոզ աչքին,
Նորի տված պատառ հացս թեկուզ լինի կաթն էլ իմ մոր՝
Նորից հինը մորս կեսն է, մյուս կեսը ելնողն է նոր,
Ընկած մորից երես դարձնե՞մ, լավ է երես դարձնեմ կյանքից,
Լավ է թաղվեմ, քան թե մի կեղծ շշուկ ծնվի իմ շրթունքից։

Ու նայում եմ Երևանին, կանգնած բլրին Էրեբունի,
Հին Անիս է վերածնվում բարուրի մեջ Երևանի,
Վեր կամարվում ժայռաբարուր հազարագեղ գմբեթներով,
Մի նոր հայոց հրաշք դառնում՝ մայր Անիին նմանվելով,
Հազար ու մի եկեղեցիք փոխվում են ճոխ պալատների,
Սուրբ զանգերի ղողանջի պես ժխորն է բյուր հայ մուրճերի։

Ելնում է նորն հնի ձևից, մասիսաչափ ձվից անմեռ,
Մեծ Տրդատից՝ Թամանյանը, Թամանյանից նորերը դեռ,
Ամեն Մեսրոպ Մաշտոցն ինքն է մոնումենտվում նոր արձանով,
Վեր գմբեթվում հազարասյուն, հազարաձայն Երևանով։

ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԷՐԵԲՈՒՆԻ—ԵՐԵՎԱՆ

Դու շատ ես տեսել կռիվ ու ավեր.
Քո ճամփի վրա եղել են դավեր.
Ազգեր են եկել՝ կիրթ ու վայրենի,
Սրով ներխուժել հողդ հայրենի։

Այրել են այն, ինչ արյամբ ես կերտել.
Քանդել են այն, ինչ ձեռքով ես րերդել,
Եղծել երազն ու երգը քո հոգու
Իրենց մթությամբ՝ քիրտ ու ահարկու։

Դու լոկ ուզել ես մնալ անաղարտ
Ու մատյաններում քո սուրբ մագաղաթ
Ապրել երկնելով, քրտինքով արդար
Եվ պահել հոգուդ երգերն անվթար։

Բայց ճամփաներում անցած դարերի
Քո սիրտը եղավ հետսաձ սրերի,
Մաշվեցիր, և քո հոգին գանձաշատ
Բյուրեղանալով՝ դարձավ ադամանդ։

Քեզ շիրմաստաններ թողեց թշնամիդ՝
Տեղ թողեց, որ դու ավանդես հոգիդ,
Լերկ լեռներ թողեց ու մի փշուր հող,
Որ այնտեղ մեռնես սոված, սրտադող։

Քեզ կիսեց Մշո ճառընտիրի պես,
Քո որդոց նման արեց երկու կես,
Եվ հոգուդ երգը վանեմ, վեհափառ
Ցրեց աշխարհում՝ տարագիր, թափառ։

Բայց կերտվածքը քո ադամանդակուռ,
Հոգու հանճարով այնպես ոսկեհուռ
Մոխրի տակից էլ փայլեց աշխարհին,
Այրեց, կուրացրեց թշնամուն, չարին։

Եվ շիրմաստաններ լինելու տեղակ՝
Զոր փուշն էլ դարձրիր դու վարդ ու մեխակ,
Քո ժեռ քարերը դարձրիր Զվարթնոց,
Անապատներդ՝ հեքիաթ ոսկեզօծ։

Դու լույս քամեցիր քարից երփներանգ,
Եվ հուրը հոգու քո ամենաթանկ.
Քարի մեջ դրիր երգը քո սրտի
Եվ ամրությունը քո մեծ հավատի։

Մեր նոր Արմավիր ու Տիգրանակերտ,
Դու մեր նոր Անի՝ բյուրական մի բերդ.
Մեր նոր Արտաշատ ու Վաղարշապատ՝
Դարերից ձգված մինչ Սարդարաբադ։

Մեր քաղաքների քարահյուս ձուլվածք՝
Հայուս պատկերն ես աղսոր մասիսված,
Ադամանդաշար մատանու նման
Իմ Էրեբունի, իմ նոր Երևան։

Իմ Էրեբունի, դու պիտի ապրես,
Հյուսսից-հարավից պիտի հավաքվես՝
Քո նահրական երգերով անափ
Եվ հավերժական քո խաղաղությամբ։



ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Էրեբունի—Երևան: 2750 տարի: Այս անվանումները և նշված տարեքանակը ինքնին շատ բան են ասում: Երևանի պատմությունն՝ հայ ժողովրդի պատմությունն: Իսկ աշխարհի հնագույն քաղաքներից մեկի՝ Էրեբունի—Երեվանի հիմնադրման 2750-ամյակի տոնակատարությունը տոնն է նաև հայ ժողովրդի ավելի քան 3000-ամյա գոյատևման:

782 թվականին մ. թ. ա. ուրարտական Արգիշտի Առաջին արքան Արարատյան դաշտի Արին-բերդ բլրի վրա կառուցում է մի ամրոց և անվանում այն Էրեբունի: Դրանով էլ հենց սկիզբ է դրվում Երևան քաղաքի գոյության:

1968 թվականի հոկտեմբեր:

Հայ ժողովրդի կենսահաստատման մեծագույն վկաներից մեկի՝ Էրեբունի-Երևանի հիմնադրման 2750-ամյակ: Տոնական այս հանդեսներին մասնակցելու համար Սովետական Միության տարբեր քաղաքներից ու արտասահմանյան երկրներից Հայաստանի մայրաքաղաք են ժամանել բազմաթիվ հյուրեր:

Թանգարաններում թե պատկերասրահներում, գոյգահանդեսներում թե կինոթատրոններում, ամենուրեք մեծ հոբելյարին նվիրված միջոցառումներ են տեղի ունենում:

Բերկրանքն ու խինդն է թևածում հայոց հինավուրց ոստանում՝ Երևանում, ծովածավալ ցնծություն է հայոց հինավուրց լեռնաշխարհում: Քսանչորս ու կես երկար ու ձիգ դարերի ընթացքում աշխարհի տարբեր ծեգերում շա՜տ ու շա՜տ քաղաքներ են հայտնվել ու անհայտացել, բայց Էրեբունի-Երեվանը մնացել է կանգուն՝ իբրև իրեն կերտած ժողովրդի հանճարի ու արարչագործ ոգու հարատևման առհավատչյա:

Հոկտեմբերի 17-ին՝ հինգշաբթի.—Հոբելյանական հանդիսությունների սկիզբը հանդիսացավ Արին-բերդում կազմակերպված ծաղկի տոնը: Այդտեղ էին հավաքվել բազմահազարանոց բազմություն, որոնք իրենց մշակած ծաղիկներն էին ներկայացրել:

2750 տարի հետո Էրեբունին կարծես նորից կենդանություն էր ստացել: Բլուրը զարդարվել էր բազմերանգ ծաղկագույներով: Երգ, ծիծաղ, խնդություն: Էրեբունին կրկին կենդանություն էր ստացել, սակայն այդ կենդանությունը հատնել էր 20-րդ դարի շնչով:

Էրեբունի միջնաբերդի ստորոտին առավոտից մինչ երեկո պարում ու երգում էին Երեվանի ինքնագործ խմբերը:

Հոկտեմբերի 18-ին՝ ուրբաթ.—«Հաղթանակ» զբոսայգում երգի տոնով սկիզբ դրվեց Երևանի հիմնադրման 2750-ամյակին նվիրված մեծ համերգաշարին:

Այստեղ էին հավաքվել բազմահազար հայեր՝ տոնական համերգների:

Երգի տոնը բացում է գրող Գուրգեն Բորյանը: Նա խոսում է հայ ժողովրդի, նրա մշակույթի մասին, նրա հուզող, ոգևորող ու կյանք տվող և իրենից անբաժան ու իր մասը կազմող երգի մասին, շեշտում նաև, որ «Հայ ժողովրդի երգերը միշտ էլ սիրով, հիացմունքով են ունկնդրել օտարականները: Հայոց երգը թափառող մեր կռունկի նման մեր վրշտից, մեր սխրանքից է խոսել: Ու երգով մենք հմայել ենք, երգով ճանաչվել»:

Երգի տոնը սկսվում է ՍՍՀՄ և Հայկական ՍՍՀ պետական հիմների կատարմամբ: Այնուհետև «Երևան» փողային նվագախումբը կատարում է Ալ. Հարությունյանի «Տոնական նախերգանք»-ը: Ապա 2750 մարդուց բաղկացած քաղաքային երգչախումբը կատարում է Էդ. Հովհաննիսյանի «Երևան»-ը:

Զբոսայգին ողողվում է նաև Առնո Բաբաջանյանի, Ալ. Սպենդիարյանի և շա՜տ այլ երգահանների ստեղծագործությունների մեղեդիներով:

Տոնական համերգին իրենց մասնակցությունն են բերում ժողովրդական արտիստներ Արշավիր Կարապետյանը, Գոհար Գալաչյանը, Օֆելյա Համբարձումյանը:

Երգի տոնն ավարտվում է, և աշնանային

Երեկոն իր թևերն է փռում երգերով ողողված Երևանի վրա։

Հոկտեմբերի 19-ին՝ շաբաթ.—Առավոտյան ժամը 10-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Երևանի հիմնադրման 2750-ամյակին։

Նիստին ներկա էին բանվորներ, ծառայողներ, գիտության ու մշակույթի աշխատողներ, պետական ղեկավարներ։ Հանդիսավոր տոնակատարությանը ներկա էին նաև ինչպես Սովետական Միության, այնպես էլ սփյուռքահայության պատվիրակներ։

Հանդիսությանը Իր գեղեցիկ ներկայությունն էր բերել նաև Վեհափառ Հայրապետը՝ տ. Հայկազուն և տ. Կոմիտաս սրբազանների ընկերակցությամբ։

Հանդիսավոր նիստը բացում է հոբելյանական հանձնաժողովի նախագահ, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Մուրադյանը։ Նա իր խոսքի մեջ ասում է, որ Երևանը «հատակակիցն է Բաբելոնի և Պերսեպոլիսի՝ իրենց գոյությունը վաղուց դադարեցրած և ավերակների մեջ պառկած քաղաքների»։

Հարգելի նախագահը նշեց, որ Երևանը այժմ դարձել է մշակութային, գիտության, կրթության և արվեստների խոշորագույն կենտրոն, որ «Երևանը մայրաքաղաքն է ոչ միայն Սովետական Հայաստանի, այլև պատմության հողմերով աշխարհով մեկ սփռված ամբողջ հայության։

Ճքեղազարդ Արարատի հայացքի տակ աքանչելիորեն հառնած մեր մայրաքաղաքը այն լուսավոր փարոսն է, որին ուղղված են հայ ժողովրդի տարագիր զավակների կարոտած հայացքները։ Նրանց համար Երևանը սոսկ քաղաք չէ, հայ նոր պետության խորհրդանիշն է նա, հայկական վերածննդի մարմնացած ոգին։ Երևան ասելով հասկանում ենք հայրենիք, տուն, տունդարձի ճանապարհ, վերադարձ տարագրությունից»։

Ապա ձայնը տրվում է Ա. Քոչինյանին։ Նա իր խոսքի մեջ ասում է, որ «Թեև Երևանը հիմնադրվել է 2750 տարի առաջ, սակայն այժմ, իրավամբ, նա կարող է աշխարհի ամենաերիտասարդ քաղաքներից մեկը համարվել։ Նրա հոյաշեն պողոտաներն ու հրապարակները, ստվերախիտ պուրակները, հայելապատ ջրավազանները, ամեն ինչ նոր են, նորի նման լավ ու գեղեցիկ»։ Այս բոլոր պայմանները, իր խոսքի մեջ շեշտում է Ա. Քոչինյանը, ստեղծվել են 1920 թվականի նոյեմբերից, երբ «հայ ժողովուրդը ազատվեց հոգեվարքի ճիրաններից և ոտք դրեց վերածնության շեմին»։

Հոբելյարի մասին հանգամանորեն խոսում է Լ. Ղարիբջանյանը, նշելով, որ Էրեբունի-Երևանի անցած պատմական ուղին, սկսած ուրարտական շրջանից, սերտորեն կապված է հայ ժողովրդի պատմության հետ։ Երևանը, ինչպես և հայ ժողովուրդը, անցել է պատմության մահաբեր մրրիկների միջով, բայց հաղթանակով է դուրս եկել գոյամարտում։ Օտարերկրյա բազմաթիվ նվաճողներ կողոպտել, ավերել են երկիրը, բայց մշտապես թնաձել է ժողովրդի ազատատենչ ոգին։ Ամենածանր պայմաններում անգամ նա ստեղծել է մշակութային անզուգական արժեքներ։

Ելույթներ են ունենում նաև միութենական և արտասահմանյան պատվիրակության ներկայացուցիչներ։

Հոկտեմբերի 19-ին, երեկոյան ժամը 19-ին, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ մեծ համերգ, որին իրենց մասնակցությունը բերեցին հանրապետության լավագույն կատարողական ուժերը, Սովետական Միության տարբեր վայրերից և սփյուռքից ժամանած հայ անվանի արվեստագետներ։

Համերգի ընթացքում բեմը հաջորդաբար ձևավորվում է հին Էրեբունին պատկերող զանազան գեղարվեստական ձևավորումներով։

Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախումբը հանդես է գալիս Էդ. Հովհաննիսյանի «Էրեբունի» ստեղծագործության կատարմամբ։ ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ա. Քաթանյանի ղեկավարած օպերային թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի ուղեկցությամբ երգչախումբը հնչեցնում է Արգիշտի Առաջինի սեպագիր արձանագրության խոսքերով կոմպոզիտորի կանտատը։ Օպերային թատրոնի պարողները ներկայացնում են մարդկության հեռավոր անցյալի պատկերները՝ կատարելով «Հեթանոսական պար»-ը։

Այնուհետև ելույթներ են ունենում ժողովրդական արտիստ Մ. Երկաթը՝ Տ. Չուխաջյանի Արշակ Երկրորդի (համանուն օպերայից) արիայի, ժողովրդական արտիստ Ս. Քոչարյանը՝ հատված Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպից, Լ. Զաքարյանը՝ միջնադարյան շարականի կատարմամբ։

Ընդմիջումից հետո ներկայացվում է Ա. Տիգրանյանի «Դավիթ բեկ» օպերայից մի պատկեր՝ ժողովրդական արտիստ Ն. Հովհաննիսյանի մասնակցությամբ։ Ժողովրդական արտիստ Բ. Ներսիսյանը, դուդուկահարների անսամբլի նվագակցությամբ, ար-

Երեքշաբթի թատրոնի դիմաց հանդիսավոր բացումը

տասանում է Սայաթ-Նովայի «Աշխարհումս ախ չիմ քաշիլ» բանաստեղծությունը: Երգիչներ Հ. Բաղալյանի և Ռ. Մաթևոսյանի կատարմամբ հնչում է անմահ Կոմիտասի «Հորովել»-ը: Կոմիտասի «Կոռունկ»-ի կատարմամբ հանդես է գալիս Բեյրութից ժամանած երիտասարդ երգչուհի Սոնա Ղազարյանը: Տաղանդավոր երգչուհի Գոհար Գասպարյանը կատարում է Անուշի արիան վերջին գործողությունից (համանուն օպերայից): Ա. Խաչատրյանի ջութակի համերգի վերջին մասի կատարմամբ հանդես է գալիս միջազգային մրցույթների դափնեկիր, ջութակահար Ժ. Տեր-Մերկերյանը:

Տոնական համերգի եզրափակիչ համարում տաղանդավոր դիրիժոր Օհան Դուրյանի ղեկավարությամբ Հայաստանի պետական, երգչախմբային ընկերության, պետական համալսարանի, քաղաքի դպրոցականների միացյալ երգչախմբերը, շուրջ հազար հոգի, նվագակցությամբ ռադիոհաղորդումների և հեռուստատեսության սիմֆոնիկ նվագախմբերի, հնչեցնում են Ալ. Հարությունյանի «Ջոն Լենինին» ստեղծագործությունը:

Համերգում ելույթներ են ունենում նաև շատ այլ նշանավոր երգիչներ, ասմունքողներ, պարողներ և ուրիշներ:

Համերգն ավարտվում է հսկայական ցնծությամբ և հուզիչ տպավորությամբ:

Հոկտեմբերի 20-ին՝ կիրակի.—Երևանի հիմնադրման թանգարանի հանդիսավոր բացումը:

Այսօր Երևանի հիմնադրման 2750-ամյակի հանդիսավոր տոնակատարության վերջին օրն է: Էրեբունի հնադարյան քաղաքամրոցն են շարժվում հարյուր հազարավոր բազմություն՝ Երևանից և հանրապետության մյուս քաղաքներից ու շրջաններից, Սովետական Միության տարբեր վայրերից և արտասահմանից ժամանած հյուրեր:

Առավոտյան ժամը 10-ն է: Երկինքը ջինջ է ու արևաշող:

Սկսվում է Երևանի հիմնադրման թանգարանի բացման հանդիսավոր արարողությունը: Թանգարանը մի հոյակապ շինություն է, քանդակազարդված, որը գտնվում է Արին-բերդի բլրի լանջին, Էրեբունիի լայնահուն փողոցի վերնամասում:

Թանգարանի բացմանը ներածական խոսքով հանդես է գալիս Լ. Ղարիբջանյանը: Նա իր խոսքի մեջ ասում է, որ «Երևանը ունեցել է հայ ժողովրդի դաժան ճակատագիրը, և՛ ավերվել է, և՛ կառուցվել, ընկել է ու ոտքի կանգնել, ենթարկվել բազում արհավիրքների»: Բայց Երևանը վերջին տասնամյակների ընթացքում աննախընթաց ծաղկում ու զարգացում ապրեց: Այն դարձավ աշխարհի նշանավոր գիտության ու մշակույթի կենտրոններից մեկը:

Ելույթ են ունենում շատերը՝ բանվոր, ծառայող, գիտության և մշակույթի գործիչներ: Նրանք բոլորն էլ իրենց անկեղծ ցանկություններն են հայտնում Երևանի էլ ավելի բարգավաճման համար:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Մուրադյանը այնուհետև կընդունում է թանգարանը երիզող ժապավենը, և ժողովրդի անհատնում հոսանքը շարժվում է դեպի թանգարան՝ այնտեղից բարձրանալու համար պատմական քաղաք-ամրոց:

Ուրարտական զինվորի տարազ կրող 150 երիտասարդներ՝ հետևակներ և հեծյալներ, «հսկում են» ամրոցի անցորդը:

Մինչև ուշ երեկո մարդկանց անվերջանալի հոսքը շարժվում է դեպի քաղաք-ամրոց:

Հոկտեմբերի 20-ին, կիրակի օրը, երեկոյան ժամը 18-ին, Երևանի հանրապետական մարզադաշտ էին հավաքվել ավելի քան 40 հազար ներկայացուցիչներ, հյուրեր:

Ողջույնի, գովասանքի խոսքեր, սրտագին ցանկություններ...

Այստեղ ևս 2750 մարդուց բաղկացած երգչախումբը կատարում է Էդ. Հովհաննիսյանի «Երևան» երգը:

Այնուհետև հանդիսականներին է ներկայացվում թատերականացված մի պատկեր. շքեղ մարտակառքով կանաչ դաշտ է մտնում Արգիշտի Առաջինը՝ զինված պահակախմբի ուղեկցությամբ: Ապա ներս են գալիս շինարարները՝ իրենց հետ բերելով մի հսկայական ժայռաբեկոր: Սեպերի համաչափ հարվածների տակ նրանք փորագրում են Էրեբունիի հիմնադրման արձանագրությունը:

Տոնական համերգին իրենց մասնակցությունն են բերում մեր ազգի նշանավոր արվեստագետները:

Գեղարվեստական բաժնին հաջորդում է սպորտային տոնահանդեսը, որի ընթացքում մեր մարզիկներն ու մարզուհիները ցուցադրում են իրենց ուժն ու գեղեցկությունը:

Տոնահանդեսն ավարտվում է հրետանային հուժկու համազարկերով, և երևանյան երկնակամարը լուսավորվում է բազմերանգ գույներով:

ՏԻԳՐԱՆ ՊՈՅԱՃՅԱՆ

ՓԱՌՔԻ ՃԱՄՓԱՆ*

Սեպտեմբեր 19, 1918:

Թվականը հերոսական դրվագի մը, որուն հիշատակությունը կտխրեցնե մեզ, փոխանակ խանդավառելու:

Անոր ոգեկոչումը կհուզե մեզ, նույն ատեն դառնություն և զայրույթ կպատճառե մեզի:

Կհուզվինք՝ վերհիշելով խոյանքը հայ քաջերուն, որոնք՝ վրեժը իրենց սրտերուն և հայ ժողովուրդի հարությանն լուսապայծառ պատկերը իրենց հոգիներու աչքերուն առջև, արհամարհեցին մահը և փառքի ճանապարհով քալեցին դեպի անմահություն:

Կհուզվինք՝ երբ մեր աչքերուն առջև անգամ մը ալ կկանգնի Արարատ որ իր կազմավորումեն մինչև սեպտեմբեր 19, 1918, անհիշատակ դարերե ի վեր եղած ու մնացած էր անծանոթ, անշուք բլուր մը, որուն կողերուն վրա մողեսներ, կարիճներ և օձեր ապրած էին: Ու հանկարծ օր մը պիտի փառավորվեր, հայ զինվորին արյունով պիտի ներկվեր ու պիտի դառնար սրբավայր մը:

Կհուզվինք՝ երբ մեր աչքերուն առջև կը-տարածվի Արարատի կողքին փորված այն ընդարձակ փոսը, որուն մեջ կողք-կողքի շարվեցան զոհերը ճակատամարտին, իրենց լուսապայծառ երեսները հանձնված արևուն ճառագայթներու գգվանքին, կարծես գոհունակ ժպիտ մը գծված յուրաքանչյուրին շրթներուն վրա, լիովին անգիտակ այն իրողությանն որ մի քանի վայրկյանեն ցուրտ հողը, տամկացած մեր աչքերեն հոսող արցունքներով, պիտի վարագուրեր այդ ժպիտը և պիտի ծածկեր իրենց անշնչացած մարմինները:

Այսօր, հիսուն տարի վերջ, կրկին կհուզվինք, կփղձկինք և արցունքի խոշոր կաթիլ մը կհամառի կանգ առնել մեր կոկորդին մեջ մեզ շնչահեղձ ընելու աստիճան:

Ինչո՞ւ այդպես, սակայն: Ե՞րբ չենք ունեցած կորուստներ: Նահատակություն, մարտիրոսություն, մահափոխուն աղետներ անպակաս եղած են մեր ժողովուրդի գլխեն: Զարդ, տարագրություն, անլուր ու անիմանալի հարվածներ ու դժոխային տանջանքներ կոտորական են մեր ժողովուրդը, խլելով անկե միլիոնավոր զոհեր: Կողքանք մեր զոհերը անմխիթար սրտով. կբողոքենք Աստուծո որ կարծես այնքան անողորմ եղած է հայուն հանդեպ. չենք վարանիր անգամ, բանաստեղծին նման, զայն կոչելու «Աստված ոխերիմ»:

Ամեն տարի կոգեկոչենք հայ ժողովուրդի ազատագրության ի խնդիր մարտնչող ու նահատակվող սերունդներու հոգիները սպրիլյան հուշատոներով:

Ամեն տարի կփառաբանենք Վարդանանց դյուցազնամարտը իբր խորհրդանիշ հայ ժողովուրդի քաջության, նվիրումին և զոհաբերության և իբր ներշնչումի աղբյուր:

Տարին անգամ մը կպանծացնենք հայ մշակույթը, իր ոսկեդարով և իր կատարած նվաճումներով, ավելի քան երկու հազար տարիներու ընթացքին ճոխացած, հարստացած ու վսեմացած, իբր գանձարան հայուն ստեղծագործությանց:

Այս բոլորի բաղդատմամբ Արարատի հերոսամարտը անշուք դրվագ մը՝ է որ, հակառակ իր պատմական նշանակության, համազգային տոնախմբության արժանացած չէ: Քսանական թվականներուն ու անկե հետո երկոտասնյակ մը տարիներ լեգեոնականներ

* Արարատի հերոսամարտի 50-ամյակի կապակցությամբ հրատարակում ենք դեպքին մասնակից, ամերիկահայ ծանոթ և սիրված մտավորական Տիգրան Պոյաճյանի այս առթիվ գրած հուշերի և խորհրդածությունների մի որոշ մասը, մեր հարգանքի և երախտագիտության սրտագին տուրքը մատուցելով նաև Արարատի ճակատամարտում նահատակված հայ լեգեոնականների անմոռաց հիշատակին, որոնք նոր փառքով զարդարեցին հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության էջերը և հերոսի մահով ընկան, որպեսզի միշտ ապրի ցանկալի Կիլիկիան ու Կիլիկիայի հայությունը:

տեղ-տեղ իրենք իրենց մեջ վերհիշեցին Արարատ համեստ հավաքույթներով, ու հայ թերթեր ալ պարբերաբար հաճեցան խմբագրականներով ու հոդվածներով հարգել հիշատակը Արարայի հերոսներուն, սակայն արտասահմանի ու մայր երկրի հայ զանգվածները գրեթե բոլորովին անտեսեցին Արարայի տարեդարձը ու այժմ մոռցած են զայն ամբողջովին:

Հիսնամյակը նշանակալի թվական մըն է. կարծե գոնե համեստ չափով հարգել հիշատակը Արարայի անմահներուն և հարգանքով ու երկյուղածությամբ վերհիշել Կիլիկիո հողին վրա կատարված անգին զոհողությունները, որոնք, ավա՜ղ, անպտուղ մնացին:

Ըսինք վերև թե Արարայի հիշատակությունը մեզի առթած հուզումին հետ նաև դառնություն և զայրույթ կպատճառե մեզի:

Դառնություն՝ որովհետև մեր հույսերն ու ակնկալությունները չարդարացան, մեր ջանքերը հումպետս վատնվեցան, մեր երազները պղպջակներու նման օդը ցնդեցան, մեր խանդավառությունը մարեցավ և մեր զոհաբերությունները ապարդյուն եղան ու մենք բոլորովին հուսախաբ ու պարտվածի երեվույթով հեռացանք Կիլիկիո սրբազան հողեն:

Զայրույթ՝ անոր համար որ մեր կարծեցյալ պաշտպանները լքեցին մեզ, դավաճանեցին մեզի, մոռցան իրենց հանդիսավոր խոստումները և մեր ու իրենց թշնամիին հետ սերտ բարեկամության դաշինք կնքեցին:

* * *

Արարայի հիսուներորդ տարեդարձն է այսօր, հայկական լեգեոնի փառատոնը:

Զարդերն ու տարագրությունները ամայության վերածած ու անմարդաբնակ դարձուցած էին հայոց բնագավառը: Քար քարի վրա մնացած չէր: Տուն ու տեղ, եկեղեցի ու դպրոց, գյուղ ու քաղաք քար ու քանդ եղած էին: Անապատին մեջ, կիզիչ ավազի վրա պարտադիր բնակություն հաստատած եղեռնեն վերապրողները, ինկած ու պարտասած, անոթի ու անսվաղ, կառչած կմնային կյանքին որ այլևս հրապույր չուներ, և իրենց խաղաղությունը մահվան մեջ կփնտրեին:

Սփյուռքի տարածքին վրա ցրված հայերու այն մասը, որ ենթարկված չէր իր արենակիցներու դառնակսկիծ բախտին, չէր կրնար լուռ հանդիսատես մնալ իր ցեղին խաչելության հանդեպ, ոչ ալ կրնար զսպել իր ատելությունը հանդեպ այն պետության, անոր հրեշածին առաջնորդներուն և չարությամբ սնած ու ոճիրով ուռճացած հետեվորդներուն, որոնք մարդկային ամենատարրական առաքինություններեն զրկված ամբողջ ցեղ մը ոչնչացնելու դավը սարքեցին:

Հիմա որ թուրք իշխանավորները իրենց երկրին ու պետության ճակատագիրը կապած էին մեր այսպես կոչված բարեկամներու թշնամիներուն, հայոց համար պատեհություն ստեղծված էր կռվելու դաշնակից բանակներու կողքին, ոչ միայն վրեժ լուծելու, այլև դաշնակիցներու հաղթության պարագային, որ անխուսափելի կթվեր, արդար իրավունքով ակնկալելու ստեղծումը հայկական անկախ պետության մը իր պատմական հայրենիքի սահմաններուն մեջ, իբր արյան տուրք:

Եվ ահա հիմնական շարժառիթը կազմակերպյալ զինվորական ուժի մը պատրաստության:

Ավելորդ է մանրամասնել այն բոլոր տեսակցությունները որոնց եզրակացութենեն հառաջ եկավ կազմությունը առավելապես հայերե բաղկացած զինվորական խումբի մը ֆրանսական իշխանության ներքև: Համաձայնությունը գոյացած էր Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուպար փաշայի և ֆրանսական կառավարության ներկայացուցիչ Ժորժ Փիքոյի միջև, այն հասկացողությամբ որ պատերազմի վերջավորության պիտի հաստատվեր ինքնավար Հայաստան մը, ուր հայ ժողովուրդը պիտի ապրեր ու զարգանար, ուրույն պետականությամբ, Ֆրանսայի հովանավորության ներքև: Թվականն էր հոկտեմբեր 27, 1916:

Ըստ գոյացած համաձայնության,

ա. Հայ կամավորները պիտի կռվեին Թուրքիո դեմ, ազատագրելու իրենց մայրենի հողը.

բ. Դաշնակիցներու հաղթանակեն հետո Ֆրանսա իր հոգատարության ներքև պիտի ունենար ինքնավար հայկական պետություն մը Կիլիկիո մեջ:

Այդ համաձայնությունը հաստատվեցավ Ֆրանսայի Պատերազմական նախարարության կողմե 1916 նոյեմբեր 15-ին ու կազմվեցավ Արևելյան լեգեոն անունով զինվորական խումբ մը, որուն առաջին արձանագրյալները եղան Մուսա տաղի ազատագրյալները, որոնց հետզհետե միացան Եգիպտոսեն, Եվրոպայեն, Ամերիկայեն և այլ վայրերե հազարավոր խանդավառ, նվիրված, իդեալապաշտ և վրեժխնդիր հայ երիտասարդներ:

Ամերիկայի մեջ հազարավորներ արձանագրվեցան իբր կամավոր աշխատավորներ:

Հայ երիտասարդները, խումբ առ խումբ, տասնյակ մը բեռնակիր նավերով Բորդո

փոխադրվեցան, միշտ ենթակա գերման սուզանավերու հարձակման։

1917-ի վերջավորության Արևելյան լեգեոնի կազմը լրացած էր արդեն ու բոլոր արձանագրյալները Կիպրոս համախմբված կըմարզվեին։

Հայ կամավորը զինվորագրված էր ի խընդիր հայ ժողովուրդի ազատագրության, և անիկա հերոսական ոգիով կռվեցավ Արարայի կողքին, հաղթեց իր թշնամիին և զայն խուճապահար փախուստի մատնեց։

Արարայի հաղթանակը փառքով պսակեց հայ լեգեոնականի զոհությունը։ Անոր հաղթական մուտքը Կիլիկիա, ծովեն ու ցամաքեն, անօրինակ հուզումի, արդար ակնկալությունների, հայուն ապագայի մասին իր հավատքի հզորացման և անսովոր խանդավառության առիթ մը եղավ։

Հայ լեգեոնականը սակայն Կիլիկիո մեջ պիտի հանդիպեր շատ մը անախորժ և հուսահատեցուցիչ երևույթներու և վերաբերումի։ Հետզհետե ավելի հստակ կդառնար իր խաբված ըլլալը։ Կիլիկիան իրը նկատած էր ու այդ համոզումով ոտք դրած էր անոր հողին վրա։

Հայ լեգեոնականը իր անունը առավել ևս արժեցուց կիլիկյան հողի վրա։ Զարդերու և տարագրությանց ահավոր խժդժությունքներեն մազապուր ազատած հայ բեկորներեն մոտ 200,000 հոգի վերադարձան հայ զինվորներով գրավված ու պաշտպանված կիլիկյան քաղաքներն ու գյուղերը։ Մարաշ, Այնթապ, Հաճին, Ատանա, Տեորթ Եոլ, Տարսոն, Մերսին և շատ մը ուրիշ վայրեր լեցվեցան հայ տարագիրներով։ Ու Հայկական լեգեոնը կազմակերպված զինվորական միակ ուժն էր որ իր ազգակիցներուն պաշտպանություն կրնար ընծայել։

Գերեզմանեն վերադարձող տարագիր հայը խաղաղության կարիքն էր իր տունը շենցնելու և իրեն համար նոր կյանքի մը հիմերը հաստատելու։ Ճակատագիրը այդպես կամեցած չէր իրեն համար, դժբախտաբար։ Իրերամարտ քաղաքականություն մը դաշնակից պետությանց միջև, որ արդյունք էր շահախնդրության, կսպառնար քանդել ու փչացնել այն բոլորը զորս հայ ժողովուրդը շահած էր իր արյունով, հերոսությամբ ու խաչելությամբ։

Ֆրանսական իշխանությունները մերժեցին ճանչնալ Կիլիկիո քրիստոնյա համայնքներու հավաքական կամքով ու որոշումով հաստատված անկախությունը և սվիններու սպառնալիքով կառավարչատունեն վռնդեցին անկախության ակտի պատասխանատուները, և հրամանը պաշտոնական էր ու պաշտոնապես կուղղվեր հայ լեգեոնականներուն 1920 օգոստոս 19-ին զիրենք ազատ կացուցանելով այն պայմանագրութենեն զոր «վեհանձնորեն» ստորագրած էին։

Ֆրանսացիները Թուրքիո հետ ստորագրված նոր դաշնագրությունով լքեցին Կիլիկիան և բռնագաղթի ենթարկեցին իրենց իսկ քաջալերությամբ ու ջանքերով Կիլիկիո մեջ բնակություն հաստատող 200,000-ե ավելի հայերը։

Կիլիկիո հայությունը, այնքան դառն ու աղետավոր փորձառութենեն հետո, այլևս չէր կրնար ու չուզեց վստահիլ իր երեկի պաշտպաններու խոսքերուն ու խոստումներուն, ծերունազարդ Տ. Սահակ Բ կաթողիկոս Ավերակացի առաջնորդությամբ ձգեց իր տունն ու տեղը և հեռացավ կրկին անգամ անարգ թշնամիին ոտքի կոխան եղած իր հայրենի բնագավառեն։

* * *

Վերջացնենք մեր խորհրդածությունները Արարայի ճակատամարտին և անոր հաջորդող մահու և կենաց ոգորումներուն մասին, երկյուղածությամբ խոնարհելով հիշատակին առջև անոնց որոնք անվարանորեն, բացարձակ նվիրումով և գերագույն զոհաբերությամբ իրենց արյան տուրքը տվին ի խնդիր հայ ժողովուրդի ազատության իդեալին։

Հայկական լեգեոնը ձախողեցավ իր նպատակին մեջ, բայց այսօր Հայաստան մը ունինք, որով խանդավառվելու ամեն իրավունք և պատճառներ ունինք։ Հոն կծաղկի, կգեղեցկանա, կբեղմնավորվի ու իր բնական հարստություններով կուռճանա երկիրն հայոց։ Հոն կզարգանա, կստեղծագործե, կուժավորվի ժողովուրդն հայոց, ավելի և ավելի հիմնավորելով իր կյանքը իբր ազգ, իբր պետություն, իբր արժեքավոր ու հավերժական մասը մարդկային ընկերության։ Մեր վերածնած մայր հայրենիքը միակ գրավականն է մեր ազգային իդեալներու իրականացման։

Հիսնամյակի այս տարեդիցին առիթով, երբ կոգեկոչենք Արարայի և Կիլիկիո մեր նահատակներն ու մարտիրոսները, թող մեր մեջ զարգանա և հիմնավորվի հավաքական ծառայության ու նվիրումի ոգին, որպեսզի համերաշխ գործակցությամբ, միահամուռ և միասնական ջանքերով կարենանք հետապընդել մեր ազգային անկորնչելի և նվիրական դատն ու իդեալները։



ԷՋԵՐ ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ անվանի քերթող Դանիել Վարուժանի գրական ժառանգությունն ունեցել է իր յուրահատուկ ոդիսականը: Նրան վիճակվել է ապրել հայ ժողովրդի թափառական ու տառապալից կյանքը, լինել երկրագնդի տարբեր աշխարհամասերի երկնքի տակ, մինչև իր հայրենիքում վերջնական հանգրվան գտնելը, որ և տեղի ունեցավ վերջին մի քանի տարիների ընթացքում:

Սակայն կարծում ենք, որ հետաքրքրական կլինի հանրությանը, եթե սկսենք սկզբից և համառոտակի ծանոթացնենք մի քանի իրական փաստերի, որոնք հայտնի են դարձել վերջերս:

1915 թ. ապրիլյան արյունոտ օրեր...

Վարուժանի հետ թուրք ժանդարմերիայի արյունոտ ձեռքով ոստիկանությունն է տարվում նաև բանաստեղծի ձեռագրերը, որոնց վրա հեղինակը գիշերներ է լուսացրել և սրտի արյունով գրել իր ժողովրդի տառապալից, սակայն հերոսական պայքարի անմահ էջերը: Հեշտ չեն ստեղծվել նրա գեղակերտ քանդակները, սակայն ինքն իր էության հետ, անքուն գիշերներից հետո, լուսաբացին կիսել է իր ապրումներն ու տառապանքը, երբեմն նաև հաղթանակի հրճվանքը իր կնոջ՝ Արաքսի Թաշչյան-Վարուժանի հետ, որն իր հոգու աչքերով ու ներքին էությամբ ըմբռնում էր հայրենասեր բանաստեղծ-քաղաքացու և մտերիմ ընկերոջ հոգու տվայտանքները, ու դրվատանքի ջերմ խոսքեր շշնջում և քնքշությամբ փարում ամուսնուն, որովհետև ինքն էլ բանաստեղծ էր ծնված:

Գլորվել են օրերն ու ամիսները, արագ սահել են մի քանի երջանիկ տարիներ, գոհ են եղել նրանք իրարից, իսկ ընթերցող հասարակայնությունը գուշակել է իսկական քերթողի ի հայտ գալը ու հրճվանքի և օրհնանքի ջերմ խոսքեր մրմնջացել հայ տաղանդը ստեղծողի հասցեին:

Սակայն, որքան ստեղծագործական երջանկությունը հախուռն էր ու արդյունավետ, նույնքան էլ այն կարճատև եղավ: Վրա հասան Ապրիլյան եղեռնի մղձավանջային օրերը: Վարուժանի հետ ոստիկանական ճիրաններում էին թանկարժեք ձեռագրերը. պետք էր փրկել, ինչ գնով էլ լինի: Հաջորդ առավոտ նրա հետքերով գնաց ու օրեր, շաբաթներ մթնացրեց երիտասարդ կինը, մինչև կարողացավ գտնել արխիվի հետքերը: Բայց հեշտ չէր երկաթյա ճիրաններից դուրս կորզել ձեռագրերը: Աղերսանքներն ու արցունքներն անկարող եղան թափանցել քարացած ու գոսացած սրտերը: Սակայն, տիկին Արաքսին օրե-օր ավելի անհողդողդ ու համառ էր դառնում և հետապնդում վերադարձնել թանկագին ավանդը, որը միայն իրենց սեփականությունը չէր, այլև մի ամբողջ ժողովրդի, որն ստեղծել էր տաղանդների մի ամբողջ հույլ՝ Պեշիկթաշլյան ու Դուրյան, Մեծարենց ու Սիամանթո. իսկ Վարուժանը հաղթական քայլերով եկել էր համալրելու և մի նոր փայլ տալու եղած համաստեղությանը:

Այն, ինչ չկարողացան անել աղերսանքներն ու արցունքները, կատարեց կաշառքը, որի փայլից կուրացած հրապարակ եկան սև հոգիներ, որոնք բավարարություն տվին տիկնոջ առաջարկին ու վերադարձրին նրան բանաստեղծի ձեռագրերի մի մասը, թեկուզ և այն թերի վիճակում:

Տիկին Արաքսին գուրգուրանքով թանկագին գանձը սեղմեց կրծքին, որի տակ տրո-

փում էր երրորդ զավակի սիրտը: Նա շտապեց տուն և արցունքներով ողողեց ձեռագրերը, որոնց ստեղծողը տարվել էր անհայտ ուղղությամբ, անհայտ ճակատագրով:

Այո, ծանր ու տառապալից էր Արաքսու վիճակը, երբ լսեց հայոց ընտրյալ բանաստեղծներից մեկի՝ իր ամուսնու սպանության բոթը. սակայն, լուռ կրեց իր տառապանքի ծանր խաչը, մեն-մենակ:

Դժվարին ու անելանելի է եղել տիկնոջ վիճակը, միայնակ, առանց ամուսնու և առանց հարազատների, որոնք նույնպես զոհ էին գնացել արյունոտ յաթաղանին:

Պետք էր տոկալ, մինչև որևէ ելքի հասնելը. պետք էր փրկել փոքրիկների կյանքը. գուցե այդ միտումով էլ երկրորդ անգամ ամուսնացավ, որը կյանքի պայքարում զորավիգ եղավ նրան: Այնուհետև ապրելու համար սկսվեցին թափառումի անվերջ տարիներ. Պոլսից՝ Ամերիկա, և ապա Աֆրիկա—Մարոկկո, որոնք լի էին դառնություններով և հոգեկան տվայտանքներով:

Տիկ. Արաքսի Վարուժան—Արիկյանը ուր որ գնացել է, այնտեղ տարել է նաև Վարուժանի ձեռագրերը, որոնց պահպանության համար մեծ ջանք ու ճիգ է թափել, հրատարակության է հանձնել «Հացին երգը» ժողովածուն, և երբ զավակները չափահաս են դարձել, նա բանաստեղծի արխիվի մի կարևոր մասը թողել է Ամերիկայում բնակություն հաստատած զավակների մոտ, իսկ մի ձեռագիր տետր և այլ պատառիկներ, որպես հիշատակ, տարել է իր հետ Մարոկկո-Կասաբլանկա, որտեղ ապրել է երկար տարիներ ու խնամքով, գուրգուրանքով պահել իր մոտ: Տիկին Արաքսին մտադիր է եղել իր մոտ եղածը անձամբ տանել հայրենիք և տնօրինել նրա ապագան, սակայն տարիներն անցել են իրար ետևից, և չի կարողացել բաժանվել սիրելի հիշատակից, որն իր էության մի մասն է կազմել իր ապրած տարիներին զուգընթաց: Մի դժբախտ օր, ծանր հիվանդության հետևանքով, զրկվել է իր մտադրությունն իրականացնելուց և ձեռագիր տետրը մնացել է պրն. Ժ. Արիկյանի մոտ, որը և որոշել է կատարել տիկնոջ ցանկությունը և, ժառանգների համաձայնությունը վերցնելուց հետո, պատեհ առիթով ուղարկել այն Հայաստան:

Եվ ահա գալիս է բարեպատեհ դեպքը: Վարուժանի ժառանգները՝ տիկ. Վերոն և պ. պ. Արմեն և Հայկ Վարուժաններն, անսալով Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի (այն ժամանակվա) գրականության և արվեստի թանգարանի տնօրինության խնդրանքին, 1963 թ. ամռանը մի փոքրիկ արկղով այն հասցեագրեցին և նվիրեցին թանգարանին, որը և ընդունվեց խորին շնորհակալությամբ և երախտագիտությամբ: Արխիվը թեև փոքր էր, թերի, հիմնականում սևագրություններ, սակայն եղածը խիստ արժեքավոր էր ու թանկագին, նամանավանդ, եթե նկատի առնվի այն փաստը, որ մինչ այդ թանգարանը ունեցել է Վարուժանից մի քանի նամակներ միայն (Գ. Լևոնյանի և Կ. Միքայելյանի արխիվում):

Վարուժանի ձեռագրերը թանգարան հասնելու ավետաբեր լուրը կայծակի արագությամբ սփռվեց ամբողջ աշխարհով մեկ, ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքահայության շրջաններում, որոնցից մի շարք հայրենասերներ շտապեցին իրենց մոտ եղած մասունքները հասցեագրել Երևան՝ գրականության և արվեստի թանգարանին:

Մի շարք նամակներից և լուրերից պարզվեց Կասաբլանկայում գոյություն ունեցող մինչ այդ անհայտ ձեռագրերի մասին, որը պահվել էր, ինչպես ասացինք, տիկնոջ մոտ: Պետք էր միջոցներ, ուղիներ որոնել, պանդուխտ ձեռագրերը Հայաստան տեղափոխելու համար: Այդ նպատակին հասնելու համար բազմաթիվ միջոցներ գործադրվեցին, նամակագրական կապեր, անձնական ծանոթություններ, ծանոթ մարդկանց միջամտություններ, տակայն տիկնոջ ծանր հիվանդության հետևանքով, բուժման նպատակով Ամերիկա՝ ժառանգների մոտ տեղափոխվելու պատճառով, հնարավոր չէր իրագործել այն, որովհետև վերջնական որոշումը տալու էր բանաստեղծի այրին, իսկ նա ի վիճակի չէր վճիռ տալու:

1963—1965 թթ. ընթացքում այդ հարցի շուրջը առժամանակ լռություն տիրեց, սակայն թանգարանը չէր մոռանում օտար ափերում գտնվող բանաստեղծի թանկագին ավանդի մասին: Սպասվում էր մի նոր առիթ, որը և տեղի ունեցավ 1966 թ. գարնանը: Հայաստանից տուրիստական մի մեծ խումբ, «Արմենիա» նավով պետք է մեկներ արևմտյան-աֆրիկյան երկրները, որի մեջ մտնում էր Մարոկկոն՝ իր ցանկալի քաղաքով՝ Կասաբլանկայով: Թեև ուշ էր, և խումբը կազմավորվել էր, սակայն մի վերջին փորձ պետք էր կատարել, և փորձը փորձանք չդարձավ, այլ բարիք: Գրականության և արվեստի թանգարանի աշխատակիցը նույնպես մտավ խմբի մեջ, որին օգնեցին առանձին բարի մարդիկ, թանգարանի տնօրինությունը, պաշտոնական հիմնարկ-կազմակերպություններ, այդ թվում առաջին հերթին Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն, որոնք դյուրացրին մեկնող ընկերոջ գործը, տալով համապատասխան պաշտոնական գրություն Վարուժանի արխիվը ձեռք բերելու նպատակով:

Մի երկրորդ ոդիսական տեղի ունեցավ։ Ճանապարհորդության ընթացքում չնախատեսված դժվարություններ պատահեցան և հարթվեցին, սակայն, ի վերջո Մարոկկոյի մեր հյուպատոսի տեղակալի բարի կամեցողությամբ ու ջանքերով հնարավոր եղավ Կասաբլանկայում հանդիպում ունենալ պրն. Ժ. Աբիկյանի հետ և պարզել մի շարք կնճռոտ հարցեր, ձեռագիրը թանգարանին հանձնելու համար։ Ի վերջո պրն. Աբիկյանը հայտնեց, որ տիկնոջ հիվանդության պատճառով պետք է վերցնել ժառանգների համաձայնությունը, որպեսզի ապագայում թյուրիմացություններ չպատահեն, և նրանց համաձայնությունը վերցնելուց հետո էլ մամուլում պետք է հիշատակել միմիայն ժառանգների կողմից Հայաստանին նվիրելու փաստի մասին։

Թվում է, թե ամեն դժվարություն հարթված էր, սակայն ոչ։ Աշխատակցի վերադարձից հետո, երկու տարի շարունակ, նամակագրական կապ ստեղծվեց։ Ի վերջո որոշվեց, որ ժառանգների համաձայնությունը վերցնելուց հետո էլ դեռևս պետք էր մտածել ձեռագրերը ապահով տեղ հասցնելու ուղիների մասին։ Պրն. Աբիկյանը միակ և ապահով միջոցը համարում էր Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի անձնական պատասխանատվությամբ ու միջոցով։

Այս գործին սիրով ընդառաջեց և ընթացք տվեց Վեհափառը և խոստացավ անձնապես միջամտել ում հարկն է։ 1968 թ. Նյու-Յորքում հանդիպում ունենալով բանաստեղծի դստեր՝ տիկին Վերոն Վարուժան-Սաֆրազյանի հետ, վերցրեց նրա համաձայնությունը և եղածի հիման վրա առանձին պատվիրակ գործուղեց Փարիզից Կասաբլանկա ու ստացավ թանկարժեք ավանդը։ Փարիզյան ճանապարհորդությունից վերադառնալուց հետո, ս/թ. հուլիսի վերջին, այն ամբողջությամբ և ապահով հանձնվեց թանգարանի տնօրինության։

Այստեղ գուցե կարելի լիներ վերջակետ դնել, որովհետև ամեն ինչ կատարվել էր ըստ պայմանավորվածության, և ձեռագրերը ապահով հասել էին արդեն հայրենիք և հանգրվանել թանգարանում։

Սակայն մի փոքրիկ շտապողականության պատճառով, երևանյան մամուլում լույս տեսած ոչ ճիշտ հաղորդագրության հետևանքով, որը գրված էր գործին մոտ չկանգնած անձանց կողմից, առիթ էր տվել նոր թյուրիմացության, որ իբր Վարուժանի ձեռագրերը պրն. Աբիկյանն է նվիրողը և որ լուրի մեջ չէր հիշատակված ժառանգների մասին։

Այստեղ կամենում ենք խնդրել տիկին Վերոն Վարուժան-Սաֆրազյանի ներողամտությունը և հայտնել, որ պրն. Ժ. Աբիկյանը բազմիցս խնդրել էր **երբեք և ոչ մի դեպքում չտալ իր անունը**, այլ նշել բանաստեղծի տիկնոջ վերջին ցանկության և ժառանգների մասին, որի հիման վրա ինքը հանձնում է իր մոտ եղած ձեռագրերը գրականության և արվեստի թանգարանին՝ Վեհափառի միջոցով։

Դժբախտաբար արձակուրդի պատճառով բացակա լինելով քաղաքից, չկարողացանք ժամանակին կանխել կատարված սխալը, որը թյուրիմացության տեղիք է տվել և արձագանք է գտել սփյուռքահայ մամուլում ու տիկ. Վերոնի «նամակ խմբագրության» բողոքին։ Կարծում ենք, որ հիշյալ նյութի տպագրությունից հետո կարելի կլինի հարթված և պարզված համարել տեղի ունեցած անցանկալի թյուրիմացությունը։

Այս բոլորից հետո ցանկալի ենք համարում ի գիտություն հիշատակել այն ամենը, որ ձեռք բերվեց վերջերս Վեհափառի միջոցով։

1. Վարուժանի ինքնագիր քերթվածների կազմած տետրը, որի մեջ 58 բանաստեղծություն՝ «Ցեղին սիրտը» և «Հեթանոս երգեր» ժողովածուների նյութերից, այդ թվում շուրջ մի տասնյակի հասնող անտիպ գործեր, վաղ շրջանի ստեղծագործություններից։

2. «Արմենուհի» պոեմի ինքնագիր մի տարբերակը։

3. Բժ. Ռաֆայել Պազարճյանին հղած ընդարձակ, անտիպ նամակի սևագիրը։

4. Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի աշակերտական շրջանի ձեռագրերից, նյութերից։

5. Վարուժանի աշակերտական և հետմահու շրջանին առնչվող նյութեր, թարգմանություններ, գրքեր և այլն, որոնք ստացվելուց հետո միացվել են թանգարանում գտնվող հեղինակի արխիվին՝ ըստ ստացված ցուցակի։

ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ,



ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ

Ն. ԼԱՄԲՐՈՆԱՑՈՒ «ՊԱՏԱՐԱԳԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ»-Ը

1.

«Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և մեկնութիւն խորհրդոյ պատարագի» գործը Լամբրոնացու կատարած մեկնությունների մեջ անզուգական մի ուսումնասիրություն և գլուխ-գործոց է: Այս հոչակավոր աշխատությունը և՛ «մեկնութիւն» է, ըստ էության ինքնուրույն և քննական մի ստեղծագործություն է՝ նվիրված հայ եկեղեցու կարգերի, ծեսերի, ավանդությունների, հատկապես պատարագի արարողության: Սա այն նշանավոր գիրքը է, որի մասին Լամբրոնացին, իր կյանքի վերջին տարիներին Լևոն Բ թագավորին գրած հայտնի նամակում ասում է. «Ես գիրք մի բովանդակ եմ գրեալ զՀայոց ազգիս անկարգութիւնս, որ յետոյ մտեալ են»[1]: Լամբրոնացու «Պատարագի մեկնութիւն»-ը բարձր գնահատականի է արժանացել մեր մատենագիրների և բանասերների կողմից: Գ. Սկևռացին՝ Լամբրոնացու աշակերտն ու կենսագիրը, թվելով իր ուսուցչի գործերը և գնահատելով դրանք՝ առանձնապես հիացմունքով է խոսում «Պատարագի մեկնութեան» մասին. «Զի՞նչ ապա և յաղագս մեծն և հրաշալի մերոյ փրկութեանն խորհրդոյ, եթէ զիա՞րդ ընդարձակ բանիւ և մանրամասն քննութեամբ զկաթոր զայն և անճաշակ անկիրթն լնդաց ծանաքողական մանրեալ ատամամբք խուզման, տալ ի ճաշակ տղայացելոցն ի Քրիստոս...»[2]:

Մատթեոս գրիչը 1551 թվականին այս գործը ընդօրինակելուց հետո գրում է. «Աւարտեցաւ եռահրաշ և հոգիազարդ մատեանը, զոր էր շաղկապեալ երիցս երանեալ առնն Աստուծոյ սրբոյն Ներսէսի ըստ բազմերանգ գունոց ի մի ոստոյն անկելով հանճար, զոր արուեստակեալ անուշահոտ ծաղկանց եղեփեցական կազմութեամբ, որ ըստ հոգւոյն յատկութեամբ իմանի, զանազան որակութեամբ գաղափարելով, ըստ յոքանց արփիացելոցն դասակցութեանց, առ ի յեկեղեցւոյ յարմարումն յաւդի խաղաղութեան գլխոյն պատշաճեալ, զի ի յայսմանէ կատարելութիւնն»[3]:

14-րդ դարի մի ուրիշ գրիչ նույնպես գովասանքով է խոսում այս գրքի մասին. «Այս գիրք աստուածային և խորհուրդ բարձրագոյն և երկնային ազդեալ հոգւոյն անեղ լուսոյն՝ տեառն Ներսէսի Կիլիկիոյ և Տարաւնոյ հայրապետին, հասեալ ի խորս սուրբ հոգւոյն և քննութեամբ վերաբերեալ, զիմաստս հանճարոյն, զմարգարիտս անգին և զակունս մեծապէս, զոսկիս սոփերային և զարծաթս Աստուծոյ ընտրեալ եւթնապատիկ ըստ Սաղմոսին»[4]: Մեծ բանասեր և գիտնական հ. Ղ. Ալիշանը հիացած բացականչում է. «Ո՜, քսաներեքամեանի կարգեալ հայր և տեսուչ... ի լոյս հանէ զՊատարագամեկնիչն ասեմ, որ ոչ միայն իւրայոց գրաւոր երկոց գլուխ և նախադաս, այլ թերևս առհասարակ հայերեն դպրութեանս, յայնմ սեռի գրուածոց»[5]:

«Պատարագի մեկնությունը» բարձր գնա-

[1] «Նամականի», Վենետիկ, 1865, էջ 246:

[2] Սոփերք ԺԵ, էջ 29:

[3] Հ. Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, 1956, Վիեննա, էջ 175:

[4] Անդ, 175—176:

[5] Ղ. Ալիշան, Միսուաս, էջ 86:

հատականներին է արժանացել ո՛չ միայն մեզ մոտ։ Սկսած 18-րդ դարից արևմուտքում, առանձնապես կաթոլիկ եկեղեցու հայրերի կողմից, եռանդուն կերպով սկսվեց պատարագի պատմական անցյալի և արարողությունների ուսումնասիրությունը։ Հրատարակվեցին բազմաթիվ հետազոտություններ, թարգմանություններ և բնագրեր։ Հայոց պատարագը, Լամբրոնացու մեկնությամբ, թարգմանվեց լատիներեն մոտ տասն անգամ, մի քանի անգամ թարգմանվեց գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, հունարեն և այլ լեզուներով։ Այսպիսով, Լամբրոնացու «Պատարագի մեկնութիւնը» տարածվեց աշխարհի գլխավոր լեզուներով և ճանաչվեց իբրև վերին աստիճանի արժեքավոր մի գործ։ Քրիստոնեական եկեղեցում, ժամանացության արարողությունների մեջ ամենախորհրդավորը և ամենագեղեցիկը պատարագն է, որը կատարվում է գլխավորապես կիրակի օրերում և տերունական տոներին։ Պատարագի խորհուրդը հաստատել է ինքը՝ Քրիստոս, ըստ ավետարանական վկայությունների[6]։

Համաքրիստոնեական պատարագի գլխավոր նպատակն է՝ ստեղծել միավորություն և կապ հավատացյալների և Աստուծո միջև, ըստ որում, ճաշակելով հացն ու գինին, հաստատվում է այդ խորախորհուրդ կապը Փրկչի և ադամորդու միջև։

Քրիստոնեական պատարագի առաջին հեղինակներն են համարվում Բարսեղ Կեսարացին, Կյուրեղ Աղեքսանդրացին, Գրիգոր Նազիանզացին, Իգնատիոս վկան, Հովհաննես Ոսկեբերանը և ուրիշները։ Դարերի ընթացքում գոյություն ունեցող բազմաթիվ պատարագները մեկնաբանվել, խմբագրվել, հապավվել կամ լրացվել են՝ ըստ ժամանակի պահանջների։ Հնագույն պատարագների մեջ ակնբախ են նաև դավանաբանական գաղափարները ու մոտիվները։ Այսպես էր Բարսեղ Կեսարացու հեղինակած պատարագը, որն իր ժամանակին մի ուժեղ զենք էր արիոսյան գաղափարների դեմ։ Հունական պատարագի ազդեցությունը տիրապետող մնաց գլխավորապես Անտիոքում, Երուսաղեմում և Աղեքսանդրիայում՝ մինչև արաբական արշավանքների ժամանակները։ Հայկական պատարագը առաքելական-ազգային լինելով հանդերձ, շատ ընդհանուր բաներ ուներ առանձնապես հունական պատարագների հետ։ Հայոց պատարագի անօրինավորությունը բարձրանում է մինչև Գրիգոր Լուսավորչի ժամանակները, որը մեծ մասամբ ընդօրինակված է Երուսաղեմի պատարագից. «Արևելյան հայոց եկեղեցին մի միայն պատարագ մը ունի, որուն ծագումը կելլէ մինչև առաջին դար քրիստոնեության և որն որ Երուսաղեմի պատարագէն առնված է»[7]։

Ինչպես մյուս ազգերի, այնպես էլ հայոց պատարագը տարբեր դարերի ընթացքում խմբագրվել, լրացվել և ճոխացվել է՝ հարկավ պահպանելով իր առաքելական և ազգային նկարագիրը։ Գ. Լուսավորիչը մեր պատարագի մեջ ավելացրեց «Նիկիո հանգանակ»-ի վրա «Իսկ մեք փառաւորեսցուք» դավանաբանական աղոթքը։ Հետագայում մեր պատարագը նորից վերանայվեց և որոշ հավելումներով լրացվեց՝ Սահակ Պարթև կաթողիկոսի և Մեսրոպ Մաշտոցի ձեռքով։ Ըստ հ. Գ. Ավետիքյանի, հայոց պատարագը վերջնականապես ձևավորվել է 4-րդ դարի վերջերում, երբ քույր եկեղեցիները նույնպես մշակում, վերամշակում և ձևակերպում էին նոր, կայուն պատարագամատույցներ։ Հայոց պատարագն էլ ունի գլխավորապես երկու մեծ խորհուրդ՝ մեկը՝ «խորհուրդ չարչարանաց և մահուան Քրիստոսի», իսկ մյուսը՝ «խորհուրդ միաւորման և սիրոյ»։

10-րդ դարում հայ եկեղեցու ժամակարգությամբ և պատարագի մեկնությամբ զբաղվեց ժամանակի նշանավոր եկեղեցական, գիտնական-աստվածաբան Խոսրով Անձևացյաց եպիսկոպոսը՝ Գրիգոր Նարեկացու հայրը։ Նարեկացին համեստորեն իր հոր գործը գնահատել է այսպես. «Ծնորհիւն աստուծոյ եղև մեկնութիւն այսմ գրոց ի ձեռն Խոսրովայ Անձևացեաց եպիսկոպոսի յոյժ հետեւողի պատուիրանացն Աստուծոյ, զոր մեզ և գովել անհաճ է, զի մի գայթակղեսջիք ի նոյն, վասն գոլոյ նորուն հայր իմ ըստ մարմնոյ, որոյ չեմ արժանի կոչիլ որդի և ոչ վարձկան, ըստ գրեցելումն...»[8]։ Խոսրով եպիսկոպոսի «Մեկնութիւն աղօթից պատարագի»-գիրքը, դարձյալ Նարեկացու վկայությամբ, առաջին անգամ արտագրել է Նարեկացու եղբայրը՝ Սահակը. «Արդ առաջին սուրբ գրուս այսորիկ գծագրութիւն եղև ձեռամբ Սահակայ որդւոյ տեառն Խոսրովու, սուն սուրբ գրոցս մեկնողի, երեք հարիւր ինսնսուն և ինն թուականութեանս հայոց»[9] (950)։ Առաջին անգամ Խոսրով Անձևացին փորձեց մեկնել պատարագը՝ հավատացյալներին դյուրըմբռնելի դարձնելու նպատա-

[6] Նոր կտակարան, Մատթեոս, ԻԶ, 27—28։

[7] Հ. Ց. Գաթրճյան, Սրբազան պատարագամատույց հայոց, Վիեննա, 1887, էջ 3։

[8] Խ. Անձևացի, Մեկնութիւն աղօթից պատարագի, ի ս. Ղազար, 1898, էջ 67։

[9] Անդ, էջ 67։

կով: Խոսրով Անձևացու «Մեկնութիւնը» կրում է միայն բացատրական բնույթ: Այդպես չէր դրությունը Լամբրոնացու ժամանակ: Շատ փոփոխություններ էին կատարվել հայ ժողովրդի քաղաքական և հոգևոր կյանքի բնագավառներում: Սելջուկների արշավանքների հետևանքով հայ ժողովրդի զգալի մասը ստիպված մայր հայրենիքից գաղթեց դեպի արևմուտք: Կյանքի ծանր պայմանները աղետաբեր եղան նաև հայկական մշակույթի, հավատի ու եկեղեցու համար: Հայ եկեղեցու ավանդական և կանոնական արարողություններից ու ծիսակատարություններից շատ բան աղարտվեց կամ խափանվեց: Այդ աղավաղումները և խախտումները մուտք գործեցին նաև պատարագի մեջ, որոնցից ամենավնասակարը և տարածվածը Լամբրոնացին համարում է հարուստ մեռելների հոգու փրկության համար կատարվող վարձու պատարագը, որը միանգամայն անհամատեղելի է քրիստոնեական վարդապետության հետ: Քանի որ պատարագի գլխավոր նպատակն է՝ դաշն կնքել Արարչի հետ, հայցել նրա օգնությունն ու հովանավորությունը հոգևոր և մարմնական կյանքի համար, ուստի, այս իսկ տեսակետից, սխալ է պատարագը մատուցել մեռելների համար, այն էլ վարձով: Լամբրոնացին զգուշացնում է, թե հոգևորականը երբեք չպիտի մոռանա, որ պատարագը գլխավորապես նրա համար է, որպեսզի «...սրբեսցէ զիւղն մտաց ոչ մեռելոցն, այլ զկենդանեացդ ի մեռելոտի գործոց անտի՝ պաշտել զԱստուած կենդանի»[10]: Եթե ամեն մի մեռածի համար վարձու պատարագ արվի—դատում է Լամբրոնացին—ապա շատ մեծատները կարող են իրենց ամբողջ կյանքի ընթացքում վաղելքի մեջ ապրել, մեղսալից շատ գործեր կատարել, հարստություն դիզել, խախտել քրիստոնեական բոլոր պատվիրանները, բայց մեռնելուց հետո վարձու պատարագի միջոցով մաքրվել մեղքերից և գնալ դրախտ: Սա ոչ միայն սրբապղծություն, այլև խաբեբայություն է,—եզրակացնում է Լամբրոնացին: «Եւ թէ ետ մահու թողութիւն մեղաց, է՞ր վասն կրոնաւորիս, ագահ, արտասուս, տառապեա ճգնութեամբ. կեր, արբ և ուրախ լեր, և յորժամ մեռանիս, զոր ոչ կարացեր ուտել և ըմպել՝ տուր վասն պատարագի, զի ի հետ ոչ կարես տանել և արդարացիս»[11]:

Շատ բան էր մթագնել ու գործածությունից հանվել նաև Պատարագամատույցում: Մի քանի աղոթքներ ու քարոզներ էին հանվել և դրանց տեղ դրվել նորերը՝ հակառակ գոյությունը ունեցող կարգ ու կանոնի: Նսեմացել էր պատարագի երբեմնի վսեմությունն ու պարզությունը: Աղքատ զգեստները, անշուք բեմը, թերահավատ և կիսագրագետ քահանաները դժգունացրել, անճաշակ ու ձանձրալի էին դարձրել հայոց սքանչելի պատարագը Կիլիկիայում: Չկար առաջվա տպավորիչ ու վեհ արարողությունը: Այդ բոլորի պատճառով հավատացյալ ժողովուրդը առաջվա պես էլ չէր գրավվում պատարագի սրտահույզ երգերով, հոգեբուխ աղոթքներով ու պերճաբան, իմաստալի քարոզներով: Շատերը նույնիսկ դադարել էին եկեղեցի հաճախելուց: Ցավով է արձանագրում Լամբրոնացին ժողովրդի և նրա պատարագի միջև առաջ եկած անտարբերությունն ու անջրպետը: Ահա այդ վտանգավոր աղավաղումներն ու խորթ նորամուծությունները վերացնելուն է նվիրված «Պատարագի մեկնութիւն» գրքի զգալի մասը: Նախքան բուն պատարագի մեկնության անցնելը, Լամբրոնացին առանձնապես բնութագրում է հայոց պատարագը, որը նույնպես որպես հաշտություն՝ ընծայաբերված է Տիրոջը. «Պատարագն հաշտութեան նուէր է, ի ծառայ Տեառն մատուցեալ, և ի խաղաղութիւն նուաճիչ»[12]: Որքան մեծախորհուրդ և սահեղ է պատարագը, նույնքան էլ մեծ են նրանից սպասված շնորհները, քանի որ հավատացյալը «և ըստ չափու մեծութեան պատարագին... հաւատալ օրհնութիւն գտանիլ»[13]: Հաշտության դաշինքը Արարչի և մարդու միջև զորվում է խոսանության միջոցով, որովհետև «զպատարագելն ոչ այլ ինչ, բայց միայն խօսանութիւն Աստուծոյ. և խօսիմք ընդ Աստուած»՝ ոչ թե միայն նենդանի կամ մեռած անհատ մարդկանց և հոգու փրկության համար, այլ «ի պետս փրկութեան աշխարհի առ նոյն խօսել»[14]: Եթե, ընդհանրապես, ամեն մի ժամերգություն խոսանություն է Աստուծո հետ, ապա՝ «որքա՞ն առաւելապէս ի խորհուրդ սրբոյ պատարագին, որում ոչ թե սոսկ միայն աղօթեմք, այլև հաղորդասաեաս... բարեկամաբար ընդ նմա խօսիմք»[15]: Ուրեմն, պատարագի ժամանակ մի կոմիս մարդ այդ խորհրդավոր խոսակցության միջոցով փրկություն է հայցում մարդկության համար, իսկ մյուս կողմից՝ հաղորդանում և մտերմանում է Աստուծո հետ: Թեպետև Արարիչը և պատա-

[10] Ն. Լամբրոնացի, Պատարագի մեկնութիւն, ի Վենետիկ, 1847, էջ 73:

[11] Անդ, էջ 73—74:

[12] Անդ, էջ 155:

[13] Անդ, էջ 155:

[14] Անդ, էջ 113:

[15] Անդ, էջ 113—114;

րագի խորհուրդը աՀեղ են, բայց այդ աՀն ու երկյուղը վերանում են, երբ մարդը անկեղծ է իր աղոթք-խոսքով, «Եթէ ի սոսկալիս այնժամ ազնիւ և մաքուր միտքն ոչ լինիցի՝ յանձին ցաւոց և արտաքին զբաղմանց, յանդգնութիւն առաւելապես է մեզ կարծել զաղօթելն, քան թէ փրկութիւն, այլ պարտ է, որպէսզի ի խորհրդակցելն իմանալի մտացս՝ ճաշակելով զքաղցրութիւն խորհրդոյն ըմպիցեմք...»[16]: Պատարագի ժամանակ այդ բոլոր «ազնիւ և մաքուր» մտքերը ամփոփվում են մի խորհրդի մեջ և դրսևորվում վսեմ ու վայելուչ եղանակներով՝ «Գեղեցիկ է զանազան մտածութիւնն ի մի խորհուրդ փառացն Աստուծոյ»[17]: Սակայն այդ բոլոր մտքերն ու զգացումները պետք է լինեն միաժամանակ անկեղծ բարեպաշտությամբ համակված: Այլապես «Եթէ մեք մտաւորապէս օնոյն ոչ ծանիցուք, և զիղձս փափագանաց ընդ աղօթելն ոչ զուգեսցուք... մեք դատարկ և անշահ դառնամք յերեսաց Նորա... և ոչ պարգև ընկալեալ»[18]: Արդ, եթե պատարագը հաշտարար դաշինք է երկնքի և երկրի միջև, ուր բոլոր խնդրանքները հանգում են մի գլխավոր նպատակի, այն է՝ «ի պէտս փրկութեան աշխարհի», ապա միանգամայն անընդունելի է նեղացնել պատարագի նպատակի սահմանները, նսեմացնել այն և դարձնել խնդրանքներ միայն հանգուցյալների հոգու փրկության համար: Զժխտելով նաև հանգուցյալների համար պատարագելու կարգը, «մեկնութեան» մեջ, «Ուստի՞ եմուտ այս սովորութիւնն» վերնագրի տակ կարդում ենք հետևյալը՝ «Սովորութիւնս այս ի սրոց անդի աւանդեցաւ յառաջնոցն հարցն երանելեաց... բայց ոչիոչ մտաց և ոչ ստերիոեաւ նարծեցք, որպէս աւժմ բազումք տեսանին»[19]: Իսկ ինչպե՞ս է աղավաղվել այդ կարգը: Նախնիներից եկող այդ սովորությունը ժամանակի ընթացքում տգետ հոգևորականներ առավաղել և ի չարս են գործադրել և հետևաբար պատարագը ամբողջապես դարձել է վճարովի ծառայություն. «Այսպէս և այս ստեալ ի մէջ եկեղեցոյ նոր գաղնութիւն՝ աւանդութիւնս ի սրոցն է, ի պատարագս մեռելոց զննչեցեալսն. զայս ոչ աւանդեալ սովորութեամբ ի մեռելոցն ասեն զնատարդ և ի մահառաջաւորութիւն զՔրիստոս ծնեալ և նեղոյ հիոգաշատ. և յետ մահու ի սոցն ապատինել...»[20]: Աննեղելի է համարվում աղավաղել պատարագի խորհուրդը և այն դարձնել միայն վճարովի, միայն մեռելների համար: Ապա ի՞նչ պիտի անեն այն մեռելատերերը, որոնք միջոցներ չունեն և չեն կարող վճարովի պատարագ անել տալ իրենց ննջեցյալների համար: Քիչ չեն այն դեպքերը,—ասում է մեկնիչը,—որ միջոցներ չունենալու պատճառով աղքատ մարդու երեխան մնում է անկնունք, իսկ մեռելն էլ քահանան դժվարությամբ է թաղում: Հանդիմանելով այդպիսի քահանաներին Լամբրոնացին ասում է. «Անհաւատութեամբ խարխափէք. զՔրիստոս առանց հաւատոց ոսկւով միայն կամիք գնել. ո՞չ գիտէք, թէ նա սիրով գնի, և ոչ արծաթով. սիրոյն լիցի պըտուղ պատարագդ, ապա թէ ոչ՝ ոչինչ օգտիս ի ջամբելն զինչսդ աղքատաց...»[21]: Այսպիսով, պատարագի հիմնական նպատակն աղավաղվել է. փոխանակ այն ծառայեցնելու հաշտության, շնորհումների և աշխարհի խաղաղության համար, աղոթքի և բարեխոսության, քահանաները դարձրել են առ ու ծախի առարկա. «Զպատարագիս հաղորդութիւն ի կենդանեացս հանին, և ի մեռելս վաճառեցին»[22]: Պատարագիչ քահանաներն էլ բազմանում են, անհարկի և անտեղյակ իրենց գործին: «Զառասուն տարուց պատարագողն դեռ ևս տկարանալ գիտել, թէ որ է ի պատարագս սարկաւագին բան և որ ժողովրդեանն... և մտօք անհաղորդ ի խորհրդոյն մնացեալ»[23]: Պատարագի արարողությունների մեջ մտած խորթ սովորությունները միայն արձանագրելով Լամբրոնացին չի սահմանափակվում: Նա որոնում և ներկայացնում է այդ խոտորումների պատճառները, որոնք բազմաթիվ են ու կապված իրական կյանքի պայմանների հետ: Առաջին և գլխավոր պատճառը ետմահու թողության սնոբությունի ընդունումն ու գործադրումն է. «Նախ՝ զի յետ մահու թողութեան յոյս առաք, զոր ամենևին ամենայն ուրեք փակեցին գիրք սուրբք և հա՞րն է այս ասացելոց ի հեղութիւն մատնել...»[24]: Երկրորդ պատճառը հավատի թուլացումն է, որը հետևանք է աշխարհիկ կյանքի մեջ կատարված փոփոխությունների. «զի հաւատն աանասեաց յաշխարհէս, և մոռացան թէ կենդանեաց փոխանք է աստուածայն, և ի նոցանէ աահանօէ իւր ընծայաբերութիւնն, այլ ամենեքեան նենջք անհաւատ և անընդունելի սրոց, յետ մահու հաւատան ի փոխութիւնն և տան զնուէրսն»[25]: Եվ վերջապես հոգևորականու-

[16] Անդ, էջ 114:
[17] Անդ, էջ 190:
[18] Անդ, էջ 118:
[19] Անդ, էջ 168:
[20] Անդ, էջ 168—169:
[21] Անդ, էջ 107:
[22] Անդ, էջ 488:
[23] Անդ, էջ 440:
[24] Անդ, էջ 178:
[25] Անդ, էջ 178:

թյան որոշ խավի ագահությունը. «զի այսր աղագաւ ի տուր և առութիւն անկաւ շնորհքս... որով գտաւ ի մէջ մեր անբերելի անկարգութիւն, զի մի ասացից՝ անօրէնութիւն. քանզի ծանուցեալ եկեղեցւոյ վերակացուք թէ ըստ բազմութեան թուոց է և վարձն և ի պէտս արծաթսիրութեան, բազմագոյնս ի մի տեղ տասն՝ առեալ կամ պակաս մատրունս խորանօք և սեղանովք...»[29]: Խոտելի համարելով այս արատները, որոնք խորթ են հայ եկեղեցուն, Լամբրոնացին առաջարկում է վերականգնել նախկին կարգերը նաև պատարագի բնագավառում. «Արդ, ընդ այն շատիոն զոր ցուցին մեզ՝ պարտինք անստերիւր գնալ և ըստ այսմ խորհրդոյ. այսինքն՝ պատարագել զՔրիստոս՝ ըստ որում հրաման ընկալաք, ի՛ր մահուն յիշատակ և նոյն փրկագործութեանն անջինց առ մեզ կնիք...»[30]: Առ ուղղումը կատարելու համար նա բոլոր հոգևորականներին դիմում է հետևյալ կոչով. «Արդ, եեսարք եղբարք, որք տգիտանայք զխորհուրդ Քրիստոսի պատարագելոյս, և ի մեռելոցս սակս միայն զնա դնէք, որոց միայն յուսայք գտանել սովաւ օգնութիւն, ուսարուք հաստատութեամբ զխորհրդոյս զօրութիւն...»[31]: Բնորոշելով պատարագի էությունը, ցույց տալով նրա խորհուրդը, անտեր կատարված արամադրումներն ու շեղումները, Լամբրոնացին այն նարձիքն է հարցնում. որ սատարաւոր իր ազգային երանելոյ հանդերձ, բովանդակությամբ համաքրիստոնեական է, որովհետև «մի է ամենայն քրիստոնէից եկեղեցի, և մի տոսով գնան ի ճանապարհն... և ոչ է աստ սնոտի բարդանօք իրաքանչիւրոցս անձանց պատուամատոյց լինել և ազգի ցատաւոր... յիցուք մի անձինս և մի նոյա եկեղեցի՝ իրաքանչիւր աստանդութեամբք ողոջեալ... և առ բարեձնութիւն հոգեաց խոնարհեալ և օգտեալ...»[32]: Եթե մեն է քրիստոնեական եկեղեցին. ուստի հանդանական որոշ տարբերություններով, այստ առանձին կարևոր նշանակություն տալիս նաև սատարաւոր արարողությունների մեջ գոյություն ունեցող ազգային հնության տարրերին տարբերությունների, հիշատակում «խորհուրդ պատարագին համարեալ է ամենայն ազգաց»[33]: Այնուհետև տարբեր ազգերի ժամերգությունն ու սատարաւորը նույնատիպ են տարբեր լեզուներով, սակայն սրա հանդիսանքը նույնը է խանգարում, որ «մի Քրիստոս պաշտեմք»:

Ու թեև լեզուները տարբեր են, թերևս տարբեր լինեն նաև որոշ ծեսեր, բայց բոլորի է նպատակը նույնն է: Ամեն մի ազգ իր եկեղեցում աղոթում է միաժամանակ նաև աշխարհի մյուս ազգերի բարեկեցության և խաղաղության համար, մանավանդ պատարագի ժամանակ. «...որպէս հայս յիւր լեզուս խնդրէ զխաղաղութիւն աշխարհի, զնեամ եկեղեցւոյ, զառաջնորդութիւն ամենեցուն, զբարեխառնութիւն օդոց և զհանգիստ ընդ ջեզեր ոց, նոյնպէս և զնոյն օրինակն և փուսանկն յիւրն խնդրէ, և Հոռոմն յիւրն... և որ Սպանիա աղօթք քրիստոնէից լինի՝ իմ է, զեմ իրն զնոսա քրիստոնեայ և որ ի Կիլիկիա՝ իմն՝ նոցա, զի և նոքա որպէս զիս հասատան»[34]: Ըստ այսմ էլ եկեղեցու սպասավորները պարտավոր են հասկանալու ազգերի հավատի եղբայրության գաղափարը: Պատարագի մեջ եղած վերոհիշյալ շեղումներն շտկելու առաջարկություններից, հորդորներից ու կոչերից հետո, Լամբրոնացին խորհուրդ է տալիս պատարագները ավելի վառ լեզուն, հանդիսավոր և հաճախակի դարձնել: Ինքն զգեստավորված պատարագիչը բեմի վրա Քրիստոսի պես է կերպավորվում, նա կատարում է Փրկչի դերը՝ սուրբ սեղանի առջև: Պատարագող քահանան, լինի նա խորանում թե սուրբ սեղանի առաջ, միշտ պետք է նրա ականջում հնչի Քրիստոսի խոսքը «Ով եղբարք և որդիք, ով մանկունք սիրեցեալք, և զստինս վարդապետութեան իմոյ միշտ ի ճաշակումն ձգողք... ծաներուք եղբարք, անճառ մարդասիրութիւն, ծաներուք մեզ բարձրագոյն շնորհ, յուսաուք և կարեցէք հոգով, անշոջանան գոհութեամբ»[35]: Ուրեմն որ ասքան մեծախոհությունը ու մեծ պատասխան համար ազգերի նանքի և հանդուրժողության համար. անխզելի նաև մյուսների և Ստեղծողի, երկնի և երկնի միջև «Ուրեմն թիւր է և աստ եարձիք ռաեղուածոցն ստոր բանս խառնեալ. զի աստուածատեսիլեցուած է հաշտութեան նուէր՝ Քրիստոսի յիշատակաւս. լուս հմանայի սփռեալ յաշխարհս, որ զաստ հոգոյն մաքուր ունի՝ ոստ չատոյ մարդութեանն ձգէ լինքն զաստուածութիւնն»[36]: Աստեղ Լամբրոնացին մի հայտնի անունն է նշանում հնեղեցական նշանավոր տեսաբան Դիոնեսիոս Առեսագիրը՝ եկեղեցական ավանդությունների հիմնադիր պատարագին վերաբերող նորությունների վրա, ցույց տալով դրանց էությունը ու ճշտությունը: Անկասկած է, որ նրանց Լամբրոնացու գրքի ամբողջ բովանդա-

[29] Անդ, էջ 178:
[30] Անդ, էջ 169—170:
[31] Անդ, էջ 279:
[32] Անդ, էջ 191:
[33] Անդ, էջ 189;
[34] Անդ, էջ 411—412:
[35] Անդ, էջ 357:
[36] Անդ, էջ 430:

կությունը հիմնված է Արիսպագացու ուսմունքի վրա, ինչպես ինքն է ասում՝ «Այսքան և այսպէս երանելի հայրս՝ ուսուցանէ մեզ զեկեղեցական կարգաւորութիւն, ոչ վայրապար... այլ յառաքելոցն իջեալ աւանդութեան խորհուրդ հրեշտակական կարգապահութեանն և ախորժելի ճշմարտասիրացն. զոր կարևոր համարեցայ ըստ կարի խուզողութեասբ ևս փեռեկել առաջի այնոցիկ, որք խնդրեն զիմացութիւնն»[34]: Արիսպագացուն հետևելով հանդերձ, Լամբրոնացին քննադատության և մեկնության խնդիրներում ինքնուրույն է և ունի իր որոշակի նպատակը: Եթե Դիոնեսիոս Արիսպագացին իր ժամանակին հիմնվելով Նոր կտակարանի և առաքելական թղթերի վրա՝ քարոզում էր նոր տարածվող քրիստոնեությունը և սիստեմավորում եկեղեցական կարգերն ու կանոնները, հոգևորականների կոչումները ու պարտականությունները՝ վերոհիշյալ վարդապետությունը ուժեղացնելու և ամրապնդելու նպատակով, ապա բոլորովին այլ էին Լամբրոնացու ժամանակի պահանջները և առաջադրած նպատակը: Լամբրոնացին չի զբաղվում եկեղեցական նոր կարգեր սահմանելով, այլ հանդես է գալիս խախտված կարգերը վերականգնելու, եկեղեցին իր նպատակին ծառայեցնելու, նրան ունցած փիճանից փրկելու և այդ ուղղությամբ գործունեություն համար: Հայ եկեղեցու կարգերի խախտումը ու թուլացումը միանգամայն նոր երևույթ չէին: Դրանք առկա նկատելի էին Լամբրոնացուց շուրջ հարյուր տարի առաջ՝ Գրիգոր Վկայասերի ժամանակ: Միշտ Ի. դարում արդեն խորտրումները տարածում էին և տարածվում ոչ առմատուրած, սակայն Վկայասերը նկատել էր դրանք և փորձել արգելել, ասում հաջողություն չունենալով: Վկայասերը եղել էր շատ երկրներում, տեսել էր ունեցել քրիստոնյա եկեղեցիներից շատերի հետ, լսել նրանց ժամերգությունն ու պատարագը: Առանձնապես Հայոց Հայրապետին շատ դուր էր եկել հույների և յատինների պատարագների շքեղությունն ու ճոխությունը: Բայց Գրիգոր Վկայասերի ժամանակը, Կիլիկիայի հայ եկեղեցու անհաստատ վիճակը, քաղաքական հեղհեղուկ կացությունը արգելք հանդիսացան, որ նա բարեկարգություն մտցներ հայ եկեղեցու ժամերգության մեջ: Հետագայում, Կիլիկիայի հայ հոգևորականների և եկեղեցու թերությունների մասին «Թուղթ ընդհանրական» հանգամանորեն խոսեց և Ներսես Շնորհալին, բայց այս եռանդուն ու մեծ Հայրապետին էլ չհաջողվեց վերականգնել խախտված կարգերը: Ժամանակի և կյանքի ազդեցությամբ այդ խախտումները քանի գնում, աճքան խորանում ու տարածվում էին: Ահա այս արմատացած թերությունների դեմ էր, որ ծառացավ Ներսես Լամբրոնացին տակավին 23—24 տարեկան հասակում: Նա համոզված էր, որ ամենից առաջ անհրաժեշտ է գործել և ազդել խոսքը, որը կարողանար սթափեցնել երկար ժամանակ ընդարմացած և նախնական շավղից դուրս եկած Կիլիկիայի հայ հոգևորականությանը: Ապա անհրաժեշտ էր գրել տալ հայ եկեղեցի սողոսկած խորթ սովորությունները, ծիսակատարությունները, խափանված ավանդությունները և կոչ անել եկեղեցու որոշ սպասավորներին՝ ձեռամուխ լինելու՝ վերականգնելու այն ամենը, ինչ որ կանոնական ու նվիրական է եղել հայ եկեղեցու համար: «Յայսմանէ տիրական հրամանէ սարտուցեալ տարտամս առ ի նորին կատարումն՝ ուանանալ զհարսն զորովասիրուս սահել սովորութիւն»[35]: Ահա այս էր Ներսես Լամբրոնացու «Պատարագի մեկնության» գրքի գլխավոր նպատակը:

[34] Անդ, էջ 234:

[35] Անդ, էջ 285:

(Շարունակելի)

Հ. Ժ. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ*

VI.—Դարձ խաչին ճամփեն

Սրտաճմլիկ եղած է Կոմիտասի և ազատվող իր մյուս յոթը բախտակիցներուն մեկնումը Ջանղրրբեն։

Քեչյան սապես կպատմե.

«Հուզումեն և հոգնութենեն այրած չորցած աչքերով մտեր էինք Ջանղրրիի բանտը։ Մեկնեցանք տամուկ աչքերով, կես ուրախ, կես տխուր, երբ կամուրջին գլուխը վերջին հրաժեշտը տվինք անո՛նց զոր ա՛լ մեր ետևը թողուլ ստիպված էինք։ Անո՛նք էին որ մեզ կըմխիթարեին, հուսալով, որ մեր մեկնելովը «ճամփան կբացվեր» իրենց համար ալ, և վստահ էին այնուհետև Պոլսո մեջ ի նպաստ իրենց աշխատողներ ունենալու։

Աքսորի վերջին ընկերնիս որուն աչքերը համբուրեցի՝ Վարուժանն էր, ա՛ն որուն վիճակված էր Սևակի հետ միատեղ նահատակվիլ էկլուրիի ճամփուն վրա, տնօրենությամբ իթթիհատական գործիչ Ճեմալ օղուզիս[19]։

Կոմիտաս և իր ընկերները ապրիլ 28—մայիս 11-ին ժամանեցին Գալեֆիք, ուր այն ատեն 200 տունի չափ հայ կար։ «Թեև ուշ հասանք, կպատմե Քեչյան, հայ ընտանիք մը չթողուց որ ադտոտ խանը գիշերենք, և տաք կերակուրներով հյուրասիրեց մեզ կես գիշերվան մոտ։

Օր մը Գալեֆիք մնալե հետո խումբը կհասնի մայիս 13-ին Անկարա, ուրկե իրենց կարավանը անցած էր 16 օր առաջ, այնքան եղերական պայմաններու մեջ, Ջանղրրը քըշված ատեն։

Մայիս 13-ին Համբարձման տոնն էր, ու Կոմիտաս հրավիրված էր երգելու եկեղեցվո մեջ։

«Հետևյալ օրը, ապրիլ 30—մայիս 13, ս. Համբարձման տոնը վայելեցինք էնկյուրիի եկեղեցիին մեջ։ Թաղ. խորհուրդը մեզ նախաճաշով մը հյուրասիրելե ետքը, առաջնորդեց ս. Աստվածածնի վանքը։ Մեզ հետ էր Վեր. Մաքնոթրն քանատացի միսիոնարը, զոր, իբր անգլ. հպատակ, Թալաաթ-էնվեր աքսորեր էին Գաղատիա։ Հայ կաթոլիկ ազգայիններ և հույներ քաղաքին եկեղեցին և վանքը խռնված էին Կոմիտաս վրդ.-ին երգելը լսելու։ Միջօրեեն ետքը, Տոնելյանց այգիին մեջ, Սալբրյանք և պարագայք 60 հոգինոց ճոխ սեղան մը տվին ի պատիվ աքսորե ազատած հայերուս։ Դեռատի օրիորդ մը երգեց։ Կոմիտաս վրդ. խոստմնալից գտավ ազգրկան երգեցողությունը, հիշեցուց թե 16-րդ տարին չլրացուցած աղջիկներ պետք չէ որ բարձր շեշտով երգեն, այլ միշտ խնայեն իրենց ձայնալարերուն փափկությունը, և անոնց առողջության հոգ տանին կոկորդի մարզումներով, ոչ-գրգռի, ուտեստով, և հրաժարումով ոգեւից ըմպելիքե, ինչպես որ ինք բոլոր կյանքին մեջ հակաուոլիկ մը եղած էր, և լավագույն ըմպելիներեն անգամ կաթիլ մը բերանը չդրավ մեր առեն[20]։

Բժ. Թորգոմյան դինադարարին Պոլսեն Փարիզ Արշակ Չոպանյանին ղրկած իր մեկ նամակին մեջ կըսե.

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի ԽԹ Ա-ից, Ե—Ժ-ից, 1966 թվականի ԽԹ Ա—Զ-ից, Ը—Ժ-ից, 1967 թվականի ԽԹ Գ—Զ-ից և 1968 թվականի ԽԹ Ա—Դ-ից, Է—Թ-ից։

[19] «Ամենուն տարեցույցը», 1922, էջ 42—43։

[20] «Ամենուն տարեցույցը», 1922, էջ 43։

«Մեր կարավանը ամբողջությամբ հասավ Անկուրիո մոտ Սյուջն (ուղղե՝ Սինջան) ըսված տեղը, ուր մեզնե 91 թե 92 հոգի, չեմ հիշեր ճիշտ, բաժնեցին և տարին Այաշ։ Այաշ տարվածներեն միայն երեք հոգի կրցավ վերադառնալ ողջ։ Մնացածներս՝ որոնց մեջ կայինք՝ ես, Կոմիտաս վարդապետ, Բյուզանդ Քեչյան, Դանիել Վարուժան... խրկվեցանք Զանղրրը կոչված տեղը... ընդարձակ զորանոց մը, ուր մեր անկողիններն եղան քարն ու փայտը և մեր գլխի բարձերը՝ մեր թևերն ու արմուկները։ Երեք շաբաթ հետո, բախտին մեկ խիստ հազվադեպ շնորհիվը, ես, Կոմիտաս վարդապետ, Բյուզանդ Քեչյան, պատվելի Քերոբյան «Ավետարերս»-ի խմբագիրը, «Կավոշ»-ի խմբագիրը և ուրիշ երեք հոգի ևս, Պոլիս կանչվեցանք... Մինչև տուն գալներս կրնա՞ք երևակայել թե որչափ ահ ու դողեր քաշած ենք, զի ամեն քայլի մահվան սարսափն էր որ կանցներ մեր ամբողջ մարմնով... Կոմիտաս վարդապետ, որ մինչև վերջը արի ու քաջ գտնված էր, հանկարծ ջղային տագնապի մը ենթակա եղավ ու... տառապանքներնիս խիստ մեծ եղավ, չարչարանքներնիս քան զՔրիստոսյանը՝ սոսկալի. ոչ մեկ բառ և ոչ մեկ խոսք չէր կարող որակել զայն...»[21]։

* * *

Համեմատաբար կարճ տևեց Կոմիտաս վարդապետի աքսորի շրջանը։ Հազիվ քսան օր։ Բայց այդ քսան օրը պետք է շատ խոր տպավորած ըլլա իր հոգին, և զայն լեցուցած սարսափով ու անդոհանքով։

Ականատես չեղավ ան զարհուրելի տեսարաններու և ոչ ալ չարչարանքի ենթարկվեցավ, ինչպես կարծած են ոմանք։

«Կոմիտասը բանտարկվելուց, խոշտանգումների և ծանակի ենթարկվելուց հետո,— կգրե, օրինակ, պրոֆ. Ա. Շահվերդյան,— աքսորվում է Անատոլիայի խորքերը։ Նա ականատես է լինում հայ ժողովրդի դազանային ջարդերին. նրա աչքի առաջ սպանում են իր սիրելի բարեկամներին»[22]։

Տարբեր խնդիր որ այդ արհավիրքներուն արձագանքը հետագային պիտի հասներ և Պոլիս, Կոմիտասի դառնալեն հետո։

Կոմիտասի մասին հուշեր գրողներեն շատերուն նման՝ Հրանտ Հրահան ևս, իր տպավորությունները պատմելե հետո վարդապետին Ադափազար տված այցեն 1913-ի գարնան, կդիմե նաև ուրիշներե քաղած իր նոթերուն, և կփորձե ի վերջո ներկայացնել Կոմիտասի տառապանքը իր աքսորին մեջ, միշտ հիմնված անշուշտ ուրիշներե իր լսածներուն վրա։ Ու կպատմե այս առթիվ «ամիսներ տեվող այդ տառապանքի ընթացքում Կոմիտասի կրած ֆիզիկական և հոգեկան երեք ահավոր ցնցումները։ ցնցումներ որոնք բավական էին խանգարելու Կոմիտասի նման զգայուն մի մարդու իմացական հավասարակշռությունը»։ Զանց կընենք տալ այստեղ հոդվածագրին նկարագրած այդ երեք ցնցումները, որովհետև այն ձևով որով անոնք ներկայացված են իրենց մանրամասնությանը մեջ, իր աքսորի ընկերներուն ոչ մեկուն հուշերուն մեջ կան։

Մենք որ Կոմիտասի աքսորի ընկերներուն ինչպես Արամ Անտոնյանի, Հայկ Խոճասարյանի, բժիշկ Վ. Թորգոմյանի, Բյուզանդ Քեչյանի, Պալաքյան վարդապետի, Միքայել Շամտանճյանի և ուրիշներու թողած հուշերն ունինք մեր առջև, և անոնցմե շատերը անձամբ ալ խոսեցուցեր ենք, դժվարավ պիտի կարենայինք հավատալ այդ երեք «ցընցումներ»-ուն հնարավորությանը։

* * *

Մինչև հիմա առեղծված մնաց թե ինչպես շատերը կրցան դառնալ աքսորեն։ Լուսաբանված չէ նույնպես Կոմիտասի դարձի պարագան։

Իրողություն է սակայն որ ինչպես Կոմիտաս, նույնպես բժիշկ Թորգոմյան իշխան Մեջիդ էֆենտիի միջամտության ևս կպարտին իրենց վերադարձը Զանղրրեն։ Թորգոմյան անձնական բժիշկն էր իշխանին տարիներե ի վեր, իսկ Կոմիտասի հանդեպ մասնավոր համակրանք մը կտածեր իշխանը՝ ինչպես տեսանք իր տեղին։

Չպիտի ուզեի այս էջերուն մեջ շներմուծել սակայն դրվագը որ մեզ կիմացնե այդ միջամտության պարագաները։ Վերջերս զայն ինձի պատմեց Վահան Ճանպազեանյան, ներկայիս Բուրբեջ հաստատված բարեկամ մը, որ, մոտիկ ազգական բժիշկ Թորգոմյանի, անպակաս է եղած անոր բնակարանեն, անձկության և անդոհանքի օրերուն, որոնք ստեղծված էին ընտանիքին մեջ բժիշկին ձերբակալությենեն հետո։ Այդ անձկությունը խոովիչ էր մանավանդ անոր համար որ բոլորը, ընտանիքին մեջ, մտահոգված էին բժիշկին առողջությամբ, վախնալով որ ան, արդեն թուլակազմ, պիտի չդիմանա աքսորի պայմաններուն և բժիշկին եղբոր Գեորգ Թորգոմյանի խորհուրդով կորոշվի իշխանին դիմել։ Շերամաբուծական վարժարանի տնօրեն

[21] Ռոբերտ Արայան, Կոմիտասի 1914—1916 թվականների նամակներից, «Գրական թերթ», 1965, թիվ 13։

[22] Ալեքսանդր Շանվերդյան, Հայ երաժշտության պատմության ակնարկներ, Երևան, 1959, էջ 372։

և պետական շրջանակներու մեջ համբավ ունեցող մարդ՝ Գեորգ Թորգոմյանն ալ ծանոթ էր իշխանին։ Բայց այդ օրերուն հավանաբար շատ սուղ արժեր իրեն ալ իշխանին անձամբ դիմելու հանդգնություն մը, երբ արդեն դիպվածին բերումովն էր որ ան ձողոպրած էր Ապրիլյան կարմիր հունձքեն։ Ընտանիքին մեջ բոլորին համոզումն այն կըլլա որ այդ դիմումը տիկին Թորգոմյանի կոզմե միայն կրնար տեղի ունենալ։ Կեշտովին մանրամասնություններն ալ,—բոլոր ձնակերպությունները որոնցմով հասարակ մահկանացու մը կրնար մերձենալ Ալ-Օսմանի ականավոր մեկ անդամին որպիսին Մեճիտ էֆենտին էր։

Տիկին Թորգոմյան ունկնդրություն պիտի հայցեր իշխանեն, և երբ ան շնորհվեր իրեն՝ գլխահակ պիտի ընթանար դեպի իշխանը, և անոր մոտենալուն՝ պիտի նետվեր անոր ոտքերուն զորս պիտի համբուրեր։ Ու եթե պատահեր որ իշխանին բարյացակամ մեկ պահը ըլլար ու հարցներ թե ինչ կաղերսե, տիկ. Թորգոմյան պիտի ըսեր լալագին.

— Ամուսնույս կյանքը շնորհեցեք ինձ, և մենք հավիտյան պիտի աղոթենք ձեր արեվշատությանը համար...

Եվ եթե բախտը պարգևեր որ իշխանը ցույց տար թե զգացված է սրտաճմլիկ այս տեսարանեն՝ դժբախտ կինը պիտի ավելցներ.

— Կոմիտասին կյանքն ալ մեկտեղ...

Տիկ. Թորգոմյան՝ որպեսզի չշվարի թուրք իշխանին ներկայացած ատեն՝ բազմիցս փորձեց այս տեսարանը մինչև ունկնդրության ընդունված օրը։

Ու իրավ ալ Մեճիդ էֆենդի անկարեկիր չըմնաց, ու միշամտեց Սայիդ Հալիմ փաշայի մոտ որ դեռ սադրազամ էր։ Երիտասարդ թուրքերը պատճառներ ունեին, այն օրերուն, սիրալիր ըլլալու դեպի Մեճիդ իշխանը, զոր կուզեին բարեկամ ունենալ իրենց։ Յուսուֆ Իզզեդդին որ գահաժառանգ էր թշնամիի տեղ կդնեին, կասկածելով անոր համակրական զգացումներեն դեպի Գերմանիո ուսոխները։

VII.—Աքսորեն դառնալե հետո

Սփոփիչ լուր մը շրջան կընե հանկարծ Պոլսո մեջ։ Բոլոր հայ տուներուն մեջ ցնծության օր է։ Լուր տարածված է թե աքսորեն վերադարձողներ կան, ու Կոմիտասն ալ է անոնց մեջ։

Տիգրան Չիթունի կպատմե իր հուշերուն մեջ.

«Վերադարձած օրն իսկ՝ վազեցի զինքը տեսնելու։ Դոկտ. Վահրամ Թորգոմյանենց տունը ճաշի էր։ Կես գիշեր էր, երբ ետ դարձանք երկուքս մեկտեղ՝ վարդապետն ու ես։ Մայիսյան սքանչելի՜ խաղաղ ու լուսնկա գիշեր մը, որ երբեք աչքիս առջևեն չի հեռանար։ Թաքսիմի Մարգարանին հետ երկարող մերկ ու անմարդ պողոտային վրա մեր զույգ շուքերը, լուսնի տակ, դամբանական ստվերներ էին։ Էջմիածնի ու Պոլսո, տունի-դուրսի, հանդեսներու, հանդեսներու՝ ամենուս գիտցած շե՞ն Կոմիտասը չկար այլևս։ Բան մը խորունկեն փլա՞ծ էր անոր մեջ...

— Այն ժողովուրդը, որ այդ պատկերը փոեց իմ տեսած ճամփուն վրա, չի մահանար,—կըսեր կհեղհեղեր՝ դարձեն հետո՝ ամեն առիթով։

Ու կպատմեր.

— Աքսորի ճամփուն վրա, օր մը, արշալույսին, հազարավոր հայերու հալածավար կարավան մը,—կնիկ, տղա, մեծ ու փոքր,—բլուրի մը գլուխ գիշերած, առտուն նորածագ աղոթարանին շողերուն առաջ, հանկարծ՝ մեկ մարդու պես՝ ծունկի եկան, գլուխը բաց, ձեռները երկինք տարածած, արտասվալից աչքերով, մեծ Բնության բաց տաճարին տակ, միաձայն զղրդացուցին՝

Առաւօտ լուսոյ
Արեգակն արդար
Առ իս լոյս ծագեաս...

«Այս մեծավայելուչ ու սրտագրավ նկարը կթվի թե երբեք չեղծվեցավ Կոմիտասի հոգիի ու մտքի աչքերենս»։

Չիթունի կշարունակե պատմել.

«Վարդապետին սիրական ըմպելին էր թեյը։ Առաջները հեշտաեռով կպատրաստեր։ Պյուտճեն սեղմվելեն ի վեր՝ փոքր ամանով մը ջուր եռացնել կու տար ալքոլի վրա և այնպես կառներ թեյը, այնպես ալ կհրամցներ իրեն այցի գտնվողներուն։

Այդ օրերուն, ինչպես հացը, որ ամեն կերպով մահանալու դատապարտված հայերուս համար պոպոքա կոչված անուտելի և անմարսելի ցեխի կույտ մըն էր, շաքարն ալ բաժինով էր։ Դժվար էր ճարել։ Եվ վարդապետը՝ թեյի իր սովորությանը կապված՝ շատերու նման անկուտ չամիչով (ֆիշմիշ) կանուշեր թեյը։ Հյուրերուն ալ՝ բնական է՝ չամիչով թեյ կհրամցներ։

Կհիշեմ, անգամ մը, ծանոթներեն մեկը տուփ մը քիշմիշ ղրկեր էր Կոմիտասին։ Ճամփան՝ ծովի լոգանք էր տեսեր տուփը, որով չամիչը լեղեցած էր։ Սակայն, վարդապետի սրտին խորապես դպած էր այդ լեղի նվերը...

Շատ ծանոթ ու անծանոթ համեստ ընտանիքներու կերթար Կոմիտաս՝ ճաշի կամ թեյի, կիրակի և տոն օրեր, կամ ազատ եղած ատենները։ Ամեն կողմե կխլխլվեր, ամենքը կփափագեին վայելել վարդապետը»։

[23] Տ. Չիթունի, «Կոմիտասին հետո», անդ, էջ 23։
[24] Տ. Չիթունի, «Կոմիտասին հետո», անդ, էջ 25։

«Ելլա իր բնակարանին կամ պարտեզին մեջ, ելլա Թերլեմեզյանենց տունը, ուր նույնպես հաճախ կերթար, կամ մեր ընտանեկան շրջանակին մեջ, գրեթե ամենօրյա տեսակցություններուս ընթացքին, մանավանդ դեպի 1915-ի վերջերը և 1916-ի սկիզբները, սկսա նկատել հոգեկան տարօրինակ երևույթներ, որ մինչ այդ չէի տեսած վարդապետին վրա։ Ամրան բարկ արևներուն, գլուխը բաց, ժամերով պարտեզին մեջ կանցներ։ Կկարդար, կուսումնասիրեր կամ այցելուներ կընդուներ։ Քանի մը անգամ փափկորեն զգացուցի իրեն, թե կրնար «արևահար ելլալ»։

— Ո՛չ, ո՛չ, այսպես լա՜վ է։ Ի՜նչ տաքուկ է արևը։ Քաղցր է արեգակը, անուշ է, արդար է արեգակը։ Ան՝ գոնե շար չէ...,—կպատասխաներ եռանդուն, ու ձեռքին ափովը կշոյեր լերկ գանկը։

Ինձ համար Կոմիտասի հիվանդության ազդարար նշանները եղան այն քանի մը անհարկի ու անկապակից արտահայտությունները, զոր ան ի հայտ բերավ քանի մը բառերու ստուգաբանության ընթացքին[25]։

Ցիթունի պատմելով իր փախուստը Պոլսեն պատերազմի միջոցին, կգրե.

«Իմ սիրեցյալ Կոմիտաս վարդապետեն սրտառուչ ողջագուրումով հրաժեշտ առի...

...Դեպի Պուլկարիա ծպտյալ փախուստիս իրիկունն իսկ՝ սրտակից բարեկամի մխիթարիչ դերին մեջ, ի՛ր իսկ սրտին հուզումը բռնած՝ Կոմիտաս լուր կղրկե մեր տունը (այն ատեն Փանկալթի, Գայա փողոց) թե ընթրիքի պիտի գա։

Կինս կպատմե. «Ամենքս՝ տղայոց հետ՝ անհունապես ուրախացանք, որ վարդապետը՝ մեզի կու գա, մեր վիշտը մեզմացնելու։ Իր նախասիրած թանապուրը պատրաստեցինք, անհամբեր սպասեցինք իր գալուն։ Կանուխեն եկավ։ Հայտնի էր որ մեզի հաղորդել ուզած զվարթությունը բռնազբոսիկ էր։ Իրեն հատուկ եռանդով՝ տղոց ամենուն ձեռքերը թոթվեց, իր աչքը անոնց համբույրներուն թոչած,—«Աստված օրհնե՜, Աստված օրհնե՜, պահե՜, պահպանե՜»... օրհնենքները տեղավ՝ գնաց նստեցավ բազմոցին անկյունը իր տեղը։ Քանի մը խրախուսիչ խոսքեր թոթոլեց իմ և տղայոց սիրտերուն ի սփոփ, ժպտուն կատակներ փորձեց, ու... մեկեն փղձելով՝ ձեռքը աչքերուն տարավ, լացը մեզմե փածկելու ճիգով։ Զո՜ւր ճիգ։ Պատվական վարդապետը չկրցավ տոկալ։ Այսչափ մանրամասն զավակներու միակ տերն ու հույսը ուղղ անոնց հորը վտանգավոր բաժանումը և այսպես անտեր անապրուստ ձգվիլը՝ մարդային ընկերության և մասնավորապես հայ ցեղին բնաջնջման լծված թրքության՝ այն տեսակ ոճիրներեն էր, որ չէր կրսար անազդ թողուլ վարդապետին զգայուն հոգին։ Չկրցավ տոկալ, լացա՜վ, լացա՜վ, մեզ ալ լացուցի իրեն հետ, և առանց ընթրիքին մոտենալու՝ «նորեն կուգամ, նորեն կու գամ», հեկեկալով, գրեթե խույս տալով՝ գնացա»[26]։

Կարո Ուշագլյան իր հուշերուն մեջ սապես կպատմե Կոմիտասի առաջին օրերը աքսորեն դարձեն հետո.

«Ժամանակ մը վերջ՝ լուր առինք թե վարդապետը քանի մը ընկերներուն հետ վերադարձած է աքսորավայրեն. վազեցի գացի իր մոտ, ողջագուրվեցանք, տեղեկություն ուզեցի հոն մնացածներու մասին։ Զանազան հարցումներ ըրի, որոնց զվարթորեն կպատասխաներ, սակայն վերապահ էր խոսած ատեն։ Վախը թափանցիկ կերևար դեմքին վրա։

— Վերարկուդ և փակեղդ գունատած են, վարդապետ։

— Հոգ չէ, տղաս, կյանքն է կարևորը։

Պատմեցի իրեն Մ. Էմինի և Հ. Սուպհիի պարագան։

— Անորեննե՜ր, ըսավ ու անցավ։

Քանի մը օր ետքը վերսկսավ իր սովորական աշխատանքը։ Ձեռք առավ Ջուղայի պատարագը՝ մշակելու և մաքրելու համար։ Այցելուներ ալ կընդուներ, սակայն ո՜ւր էին նախկին շենշող օրերը։ Ցկար Փանոս Թերլեմեզյանը, իր մտերիմ բարեկամը, որուն նկարչական աշխատանոցը կգտնվեր վարդապետին տանը մեջ և միասին, ընկերովի կապրեին միևնույն շենքին մեջ։ 1914-ի Մեծ պատերազմեն առաջ Փանոս մեկնած ըլլալով Վան՝ բացակայությունը զգալի էր երկար ատենե ի վեր։ Անոր ներկայությունը շատ բարերար ազդեցություն մը պիտի գործեր վարդապետին վրա իր հիվանդության շրջանին։

Ցկային իր մյուս մոտիկ բարեկամներն ու ծանոթներն ալ։ Փոքրաթիվ այցելուներ միայն ուներ, ինչպես Վերապատվելի Արսեն Շմավոնյանը, որուն հետ շատ մոտիկ բարեկամներ էին և որուն եղբայրը Արշակ Շմավոնյան, իբր ամերիկյան դեսպանատան թարգման՝ մեծ ջանք տարած էր վարդապետին աքսորեն վերադարձը հաջողցնելու համար։ Ըսին նույնպես որ, իշխան Մեճիտ էֆենտին ևս միջամտած է, լուրջ կերպով, իբրև մոտեն ծանոթ Կոմիտասի։

Վարդապետը վերսկսած էր իր սովորական կյանքին։ Կաշխատեր, կդրեր, կնվագեր, կրսբբագրեր։ Միայն ապրուստի մտահոգությունը ուներ, թեև չէր ուզեր հայտնել ոչ ոքի։ Հարուստ չէր Կոմիտաս։ Ոչ միայն հարուստ

[25] Ց. Ցիթունի. «Կոմիտասին հետ», անդ, էջ 94։

[26] Ց. Ցիթունի. «Կոմիտասին հետ», անդ, էջ 96։

չէր այլև եկամուտի աղբյուրներ ալ չուներ, քանի որ դադրած էին համերգներն ու դասերը։ Կապրեր հաշիվով, թեև իր կենցաղին մեջ մեծ փոփոխություն մը չկար։

Մեծ հաճույք էր իրեն համար շամիլով թել խմելը,—շաքարի չգոյության պատճառավ—իրեն այցելող փոքրաթիվ բարեկամներու հետ։ Իր ծանոթներեն և բարեկամներեն անոնք որ Պոլիս կգտնվեին, կզգուշանային այցելութենե։ Այս զգուշությունը երկու կողմեն էր. վարդապետն ալ կվախնար ոստիկանության ուշադրությունը հրավիրելե։

Այսպես անցավ 1915-ը»[31]։

Քանի մը տող ալ Աղավնի Մեսրոպյանի հուշերեն.

«1915 թվին, աքսորեն վերադարձեն հետո, երբ Կոմիտաս հոգեբուժարանը կգտնվեր, Հրանտ Ասատուրենց տանը, գյուղացի թուրք ուսանող մը հետաքրքրվեցավ մեծ երաժշտագետի առողջությամբ, դատապարտելով մեղապարտ իթթիհադականները։ «Կզարմանամ, Հրանտ էֆենտիս,—կըսեր ան,—թե Կոմիտասի պես շեհիտե մը ի՞նչ կուզեին»։

Հրանտ Ասատուր փութկոտությամբ վրատվավ. «Ինչո՞ւ կզարմանաս, Կոմիտասը այդ վիճակին բերող գազանները ի՞նչ կուզեին հարյուր հազարավոր անմեղ մանուկներեն, կիներեն ու աղջիկներեն, որոնց վիշտը չկրցավ տանիլ ան, և այսօր, կենդանի մեռել մը դարձած՝ մեզ բոլորս սուգի է մատնած...»[32]։

Պետք է վերապահությամբ կարդալ Աղավնի Մեսրոպյանի հուշերուն այս հատվածը նաև 1915-ին Կոմիտաս դեռ բուժարան մտած չէր, և զգուշ, երկչոտ, իր ստվերեն իսկ վախցող այն մարդը որ Հրանտ Ասատուրն էր, հեռու էր թուրքի մը այդ ձևով արտահայտվելու քաջութենեն։

[31] «Արածանի», Փարիզ, 1940, էջ 68։

[32] «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 303։

(Շարունակելի)

ՈՒՂՂՈՒՄ

1988 թվականի «Էջմիածին» ամսագրի Գ հատորում՝ «Օշականի եկեղեցու վերանորոգության առթիվ» խորագրով տպագրված հոդվածում, կատարել հետևյալ ուղղումը. «Այս շնորհառատ գործի հեղինակներն են երիտասարդ նկարիչներ Հովհաննես Մինասյանը և Հենրիկ Մամյանը։ Օգտվելով Ամենայն Հայոց Հայրապետի գրավիչ, բայց և դժվարին ու պատվավոր առաջարկից, շուրջ չորս տարի (1981—1984 թթ.) լարված ու քրտնաջան...» շարադրանքի փոխարեն (էջ 17) կարդալ՝ «Այս շնորհառատ գործի հեղինակն է Հովհաննես Մինասյանը, օգնականը՝ Հենրիկ Մամյանը։ Օգտվելով Ամենայն Հայոց Հայրապետի գրավիչ, բայց և դժվարին ու պատվավոր առաջարկից, շուրջ չորս տարի (1982—1985 թթ.) լարված ու քրտնաջան...»։

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԾԻՐԱՆԱԾԻՆ ԿԱՅՍԵՐ ԵՐԿԸ՝ ԵԴԵՍԻԱՅԻ ԱՐԳԱՐ ԹԱԳԱՎՈՐԻՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՔՐԻՍՏՈՍԻ ԹՂԹԻ ԵՎ ԱՆՁԵՌԱԳՈՐԾ ՊԱՏԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Բյուզանդական հայազգի կայսր Կոստանդին 7-րդ Ծիրանածինը (913—959 թթ.), որը Մակեդոնական հարստության հիմնադիր Վասիլ Ա-ի թոռն էր, մեզ է թողել հսկայական գրական ժառանգություն: Չկա իր ժամանակի գիտության որևէ բնագավառ, որին անդրադարձած չլիներ գիտուն կայսրը: Յուրաքանչյուր տեղ է գրավում նրա մի երկը, նվիրված Քրիստոսի՝ Եդեսիայի Արգար թագավորին (Արգար 5-րդ Ուկկամա, 4 թ. մ. թ. ա.—7 թ. մ. թ. և 13—50 թթ.) ուղարկված թղթի և անձեռագործ պատկերի ավանդությանը[1]: Այդ ավանդությունը, որ ժամանակի ընթացքում որոշ փոփոխություններ է կրել, առաջին անգամ գրված է եղել ասորերեն[2]: Դրանից հետագայում թարգմանություններ են կատարվել հունարեն, հայերեն և այլ լեզուներով:

Հունարեն հնագույն թարգմանությանը մենք հանդիպում ենք Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմության» մեջ[3], որտեղ, սակայն, խոսք է լինում Քրիստոսի թղթի մասին միայն: Անձեռագործ պատկերի մասին խոսք չկա այնտեղ:

Ասորերեն խնդրո առարկա աղբյուրը հնում թարգմանվել է նաև հայերեն[4], որտեղ բացի Քրիստոսի թղթից արդեն խոսվում է նաև նրա պատկերի մասին, որը, սակայն, նրա տվյալներով Արգար թագավորի սպասավոր Անանի աշխատանքի արդյունքն է. («առեալ նկարեաց զպատկերն Յիսուսի ընտիր դեղօք, բանզի արուեստաւոր թագաւորին էր, և ոչ եթեալ մատոյց Արգարու թագաւորի տեառն հրեանց»):

Եվսեբիոս Կեսարացու և Ղազարբնայի տվյալների հիման վրա այդ մասին մանրամասն շարադրանք է տվել Մովսես Խորենացին: Կանգ առնելով Քրիստոսի և Արգարի նամակագրության, Քրիստոսի աշակերտի Եդեսիա գալու և նրան բուժելու և այլ մանրամասնությունների վրա, նա ի միջի այլոց հիշում է և Տիրոջ պատկերի մասին, որը, սակայն, նա նույնպես անձեռագործ չի համարում. («Զայս թուղթ երեր Անան սուրհանդակ Արգարու, ընդ որում և զկենդանագրութիւն փրկչական պատկերին, որ կայ յԵդեսացւոց քաղաքին մինչև ցայսօր ժամանակի» Բ, 32):

Եվագրիոսն է, որ իր «Եկեղեցական պատմության» մեջ (Գիրք Դ, գլ. 27), խոսելով պարսից արքա Խոսրովի՝ Եդեսիան պաշարելու մասին, հիշում է Տիրոջ պատկերը, որը նա արդեն համարում է «աստուածակերտ և անձեռակերտ» Θεότευκτον εἰκόνα, ἣν ἀνθρώπων

---

[1] Ավանդության վերաբերյալ մանրամասն մատենագիտությունը տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, պրակ. 11—18:

[2] Բնագիրն հրատարակել է W. Cureton-ը իր Ancient Syriac documents գրքում:

[3] *Eusebii Caesariensis* Opera, recognovit *G. Dindorfius*, vol, IV, Historiae ecclesiasticae, Lipsiae, 1890, cap. I, 13·

[4] Տե՛ս Լաբուբնեայ դիւանագետ դպրի Եդեսիոյ թուղթ Արգարու յեղեալ յասորւոյն ի ձեռն ս. թարգմանչաց, Վենետիկ, 1868: Նաև Ղեբուբնա Եդեսացի, թուղթ Արգարու թագաւորի Հայոց..., Երուսաղեմ, 1868:

χεῖρας οὐκ εἰργάσατο[5]): Թեև Եվագրիոսի աղբյուրը Պրոկոպիոս Կեսարացին է, վերջինիս մոտ պատկերի մասին խոսք չկա:

Քրիստոսի անձեռագործ պատկերի մասին ավանդությունը միշտ հրապարակ էր գալիս, երբ Բյուզանդական կայսրության մեջ բորբոքվում էին պատկերամարտական-պատկերապաշտական վեճերը: Պատկերապաշտները դիմում էին այդ ավանդության իրենց դիրքերը պաշտպանելու համար: 8-րդ դարում և 9-րդ դարի առաջին կիսում, երբ նման վեճերը նորից սուր բնույթ ստացան, այդ ավանդությանը դիմեցին Ալեքսանդրիայի պատրիարք Քրիստափորը, Անտիոքի պատրիարք Հորը և Երուսաղեմի պատրիարք Բարսեղը, ովքեր մանրամասն շարադրանք ներկայացրին թուրդ պատկերամարտ Թեոփիլոս կայսեր (829—842 թթ): Նրանց գրվածքը չի պահպանվել: Այն օգտագործել է մեկ հարյուրամյակ անց Կոստանդին Ծիրանածինը իր խնդրո առարկա երկի գրության կապակցությամբ, որի լույս աշխարհ գալու պատճառը քաղաքական բարենպաստ իրադրությունների բերմամբ Բյուզանդիայի դեպի Ասորիք կատարած առաջխաղացումն էր, որի ժամանակ, կայսրության ճնշման տակ, Եդեսիայի ամիրան ստիպված էր կայսրությանը զիջել Քրիստոսի խնդրո առարկա պատկերը, ինչպես և Քրիստոսի՝ Աբգարին ուղարկած թուղթը: Այդ դեպքը հիշում են բյուզանդական ժամանակագիրները ևս: Թեոփանեսի Շարունակողը, Սիմեոն Մագիստրոսը, Գեորգ Վանականը ցույց են տալիս, որ եդեսացիք, գտնվելով բյուզանդական զորքերի պաշարման մեջ, դեսպանություն են ուղարկում Ռոմանոս Լեկապենոս կայսեր, առաջարկելով տալ Քրիստոսի պատկերը, եթե կայսրը վերացնի պաշարումը, ազատություն շնորհի անվանի սարակինոս ռազմագերիներին և խոստանա այսուհետև չավարառել իրենց շրջանը: Ինչ որ եղավ[6]: Տվյալ աղբյուրներում խոսք է լինում միայն պատկերի մասին: Տիրոջ թղթի մասին որևէ վկայության մենք չենք հանդիպում այնտեղ, հակառակ որ Ծիրանածինը այդ մասին ևս է հիշում:

Ստորև տրվում է Կոստանդին Ծիրանածինի խնդրո առարկա երկի ամբողջական թարգմանությունը:

ՀՐԱՉ ԲԱՐԹԻԿՅԱՆ

[5] Տե՛ս *Evagrii* Historia ecclesiastica, Migre, Patrologia graeca, t. 86 bis, col. 2748—2749.

[6] *Theophanes Continuatus*, Bonnae, 1838., p. 432; *Symeonis Magistri*, Annales. Ibidem, p. 749; *Georgii Monachi* Vitae recentiorum Imperatorum, Ibidem, p. 918—919.

Կոստանդին Ծիրանածինի՝ շնորհիվն թագավոր Քրիստոսի հռոմայեցիների կայսեր տարբեր պատմվածքների հիման վրա ծաղկաքաղված շարադրանքը՝ մեր Աստված Քրիստոսի՝ Աբգարին ուղարկված աստվածային անձեռագործ պատկերի մասին: Եվ թե ինչպես Եդեսիայից այն փոխադրվեց Կոստանդնուպոլիս՝ այս ամենաերջանիկ և քաղաքների թագուհին՝

Ա. Ոչ միայն Նա, Հոր ահա հավիտենական Աստված-Բանն է անհասանելի. Նրա բազում, ավելի ճիշտ՝ բոլոր գործերն էլ ծածկված են անհասանելիության նույն խավարով: Արարիչն ամենայնի ոչ միայն իր արարչագործությունների, այլև նախախնամությամբ մեր (մարդկային) ցեղի ընդունման առթիվ մեզ հետ խոսելու ընթացքում էլ ներգործում էր իր աստվածության առաջին և միակ զորությամբ: Իրեն լավ ճանաչող մարդը, իր գիտելիքների չափն ու սահմանն իմացող մարդը, չպետք է չափից դուրս մեծամտանա, չպետք է տգիտորեն դատարկաբանությամբ զբաղվի՝ վիճի, ասելով, թե ամեն ինչ գիտի, իր չիմացածի վրա չկնդի: Խոսքը վերաբերում է նաև (Քրիստոսի) աստվածային պատկերին, որն Արարչի գերբնական ցանկությամբ առանց նկարվելու դրոշմվեց կերպասի վրա և դեռ այն ժամանակ ուղարկվեց ի ապաքինումն Աբգարի, իսկ այժմ էլ Աստուծո նախախնամությամբ փոխադրվեց քաղաքների այս թագուհին՝ ի փրկություն և ի պահպանություն նրա, որպեսզի ոչ մի լավ բանից զուրկ չմնա, քաղաք, որ կոչված է տիրել բոլորի վրա: Ես կարծում եմ, որ բարեպաշտ և արդար ունկնդիրը և հանդիսատեսը պետք է իմանա, ճիշտ գաղափար ունենա [այդ պատկերի] պատմության ու նախապատմության մասին, իմանա թե ինչպես խոնավությամբ [միայն], առանց ներկերի և նկարչության արվեստի կտավե կտորի վրա կենդանագրվեց դիմապատկերը, թե ինչպես դյուրամաշ նյութը ժամանակի ընթացքում չքայքայվեց: Բացարձակապես ոչինչ չի իմանա, անընդունելիության վիճը կգլորվի, մեծ վտանգի կենթարկվի, անչափ վնաս կկրի նա, ով, անտես առնելով Աստուծո իմաստության անհասանելիությունը, կջանա բնական

մեկնաբանություն տալ երևույթներին, ով կփորձի գիտական բացատրություն տալ նրանց: Արդ, այստեղ հավաքված ուղղափառներ և ջերմ հավատքի տեր մարդիկ, եկե՛ք լսե՛ք, և կպատմեմ ես ձեզ այն, ինչ մանրակրկիտ կերպով և անհրաժեշտ ճանաչիրությամբ գրի առա. ես հոգնաջանությամբ ճշմարտությունը պրպտեցի՝ պատմիչների գործերում և այնտեղից՝ մեզ մոտ ժամանողների (պատմածներում) կարողացա ճշգրտել նրանց հիշողությունները:

Բ. Երբ մեր Տեր Աստված և Փրկիչ Հիսուս Քրիստոսը մեր՝ մարդկության փրկության համար առ մեզ եկավ, երկրում, ինչպես մարգարեն է ասում, անսահման խաղաղություն էր տիրում, բազմիշխանությունը վերացել էր և ամբողջ տիեզերքը կարծես մեկ գոտիի մեջ էր առնված, նա մեկ կառավարչի իշխանության տակ էր գտնվում: Այդ իսկ պատճառով բոլորը հանգիստ փոխադարձ կապեր էին հաստատում միմյանց հետ: Մարդիկ բնակվում էին ոչ թե բաժան-բաժան արված աշխարհում, այլ [միասնական] մի երկրում, որը մեկ Տիրոջ կալվածը լինելով, մեկ Արարչի ստեղծածը, ենթարկվեցին [Աստուծո] առաջին ծառային[3] և միմյանց միջև խաղաղություն հաստատեցին: Ահա Եդեսիայի այդ ժամանակվա տոպարքես[4] Արգարը Եգիպտոսի կառավարչի ծանոթ էր և բարեկամը. երկուսի ծառաներն էլ փոխադարձաբար լինում էին միմյանց մոտ: Երբ մեր Տերն ու Աստվածը, կատարելով Հոր կամքը սկսեց մարդկանց մեջ փրկության վարդապետությունը [քարոզել], գերբնական և զարմանալի հրաշագործությամբ մարդկանց հավատքի կոչել, Արգարի ծառաներից մեկը, անունը Անանիա, Պաղեստինի միջով Եգիպտոս գնալիս, հեռվից ականատես եղավ Քրիստոսին, ով իր վարդապետությամբ մարդկանց հեռացնում էր մոլորությունից և զարմանալի հրաշքներ գործում: Հասնելով Եգիպտոս և կատարելով իր պարտականությունները, նա վերադարձավ իր տիրոջ [Արգարի] մոտ, որը երկար ժամանակ հոդատապով էր տառապում, մաշվում սև բորոտությամբ: Նա տառապում էր կրկնակի հիվանդությամբ, ավելի ճիշտ՝ բազմակի. նրան տանջում էին հոդատապը և բորոտության ցավերը: Այդ բոլորի վրա բարդվել էր և իր այլանդակված [դեմքի] կապակցությամբ զգացած ամոթը, որի պատճառով նա գրեթե չէր երևում մարդկանց: Նա չէր էլ կարողանում երկար ժամանակ՝ անկողնում պառկած մնալ, և ամոթից թաքնվում էր իրեն տեսության եկող բարեկամներից: Ահա այդ պատճառով նրա [սպասավորը] իր վերադարձի ճանապարհին ուզեց ավելի ճշգրիտ իմանալ [Քրիստոսի գործած հրաշքների] մասին, որպեսզի հնարավորություն ունենա ավելի հանգամանորեն տեղեկացնել իր տիրոջ, հուսալով, որ մի գուցե նա էլ [Քրիստոսի] օգնությամբ բուժման արժանանա: Նա Տիրոջ գտավ նորից հրաշքներ գործելիս. նա մեղվալներին հարություն էր տալիս, կույրերին աչքի լույս պարգևում, կաղերին բուժում և ամեն տեսակի ցավերով տառապող մարդկանց ապաքինում:

Գ. Ականատես լինելով Տիրոջ բացահայտ [հրաշագործությանը] և համոզվելով դրա ճշմարտությանը, նա Արգարի մոտ վերադառնալով, նրան մանրամասն պատմեց իր տեսածի և լսածի մասին: Որպես իր պարտականությունները ավելիով կատարած և որպես իրեն, Արգարին, բարի լուր հաղորդած, նա արժանացավ անհրաժեշտ գովասանքի և համարվեց ամենանվիրված մարդկանցից մեկը: Եվ քանի որ տառապող մարդը միշտ էլ ձեռք է կարկառում բարի լուրին, [բարի] լուրն ու հույսը սիրտ է տալիս նրան, [Արգարը] համոզում է [իր սպասավորին] անհապաղ գտնել հիշածը [Քրիստոսին]: Արգարը հիվանդություններ բուժել կարողացող Տիրոջ բոլորիս հայտնի նամակը գրեց, որն ուներ հետևյալ բովանդակությունը.

Դ. «Արգար[5], իշխան աշխարհի, առ Յիսուս Փրկիչ և բարերար, որ երևեցար յԵրուսաղէմացւոց աշխարհիդ, ողջոյն: Լուեալ է իմ վասն քո և վասն բժշկութեանդ, որ լինի ի ձեռս քո առանց դեղոց և արմատոց. զի որպէս ասի՝ տաս դու կուրաց տեսանել և կառաց գնալ, և զբորոտս սրբես և զայսս պիդծս հանես, և որ միանգամ չարչարեալ են յերկար հիւանդութեասքբ՝ բժշկես. դու և զմեռեալս յարուցանես: Եւ իբրև լուայ վասն քո զայս ամենայն՝ եդի ի մտի իմում մի յերկուց ատտի. կա՛մ թէ դու Աստուած իցես, իջեալ յերկնից, և գործես զայդ. կամ թէ որդի իցես դու Աստուծոյ, և զայդ առնես: Արդ վասն այնորիկ գրեցի ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և եկեսցես առ իս և բժշկեսցես զհիւանդութիւնս զոր ունիմ ես: Նա և լուայ զի Հրեայք տրտնջեն զքէն և կամին չարչարել զքեզ. բայց քաղաք մի փոքրիկ և գեղեցիկ է իմ, և բաւական է մեզ երկոցունցս[6] խաղաղությամբ բնակվելու այնտեղ:

Ե. Արգարը Հիսուսին առաքեց այդ նամակը Անանիայի միջոցով, քանի որ Անանիան արդեն ցույց էր տվել տիրոջ հանդեպ տածած նվիրվածությունը, ծանոթ էր ճանապարհին, ապա և հմուտ՝ նկարչության արվեստին, միաժամանակ պատվիրելով, որ եթե այդ նամակով իրեն չհաջողվի Քրիստոսի համոզել իր, Արգարի մոտ գալ, ապա թող նրա ճշգրիտ դիմանկարը կատարի և իրեն բերի, որպեսզի ոչ միայն ունկամբ, այլև ակամբ ծանոթանա, կարծես նրա ստվերին, այդ սքանչելագործի հետ: Առաքված մարդը, հասնելով Հուդայի երկիրը, Տիրոջ հանդիպեց բացօթյա տեղում՝ հավաքված ժողովուրդին վարդապետելիս, և զարմանալի հրաշքներ գործելիս: Ամենատարբեր նպատակների համար կուտակված բազմությանն պատճառով Անանիան չկարողացավ Հիսուսին մոտենալ. նա գնաց և Տիրոջից մի փոքր հեռավորության վրա գտնվող ոչ բարձր մի բարի վրա նստեց: Այսպիսով ավելի բարձրադիր տեղում գտնվող Անանիային բազմության կողմից ծածկված Փրկիչը տեսանելի էր. իսկույն աչքերը [Քրիստոսին] ուղղած, ձեռքը էլ թղթին, նա սկսեց նկարել նրան:

Զ. Հիսուսը սուրբ Հոգու ներշնչմամբ իմացավ այդ մասին և կանչեցով Թովմային՝, ասաց. «Կնա՝ ազդ վայրը և քարի վրա նստած ու ինձ նկարող մարդուն՝ իր երկրից բերած նամակի հետ միասին իմ մոտ բեր, որպեսզի նա այդպիսով կատարի իրեն ուղարկողի հրամանը»: Թովման գնաց և [Քրիստոսի] ասածից՝ թե նա նկարելիս կլինի, ճանաչեց Անանիային և հրամիրեց Հիսուսի մոտ: Քրիստոսը դեռ նրանից նամակը չառած ասաց իր, Անանիայի, գալստյան պատճառի, ինչպես և նամակի բովանդակության մասին: Ապա վերցրեց նամակը, ընթերցեց այն և բառացի հետևյալ պատասխան նամակը շարադրեց.

Է. «Երանի քեզ, Արգար, որ առանց ինձ տեսնելու հավատացիր ինձ: Բանզի գրված է իմ մասին, թե՝ «Զի որք տեսանեն զիս՝ ոչ հաւատասցեն յիս, և որք ոչն տեսանեն՝ նոքա հաւատասցեն և կեցցեն: Իսկ վասն այնր զի գրեցեր դու առ իս, գալ ինձ առ քեզ՝ արժան է ինձ կատարել ամենայն ինչ վասն որոյ առաքեցայ ես: Եւ իբրև կատարեցից զայս՝ ապա համբարձայց առ այն՝ որ առաքեացն զիս. և յորժամ համբարձայց՝ առաքեցից զմի յաշակերտացն ատի իմոց, զի զգաւս քո բժշկեսցէ[10], և շնորհեսցէ քեզ կեանք հավիտենական և խաղաղություն, հզորացնի քո քաղաքը, որպեսզի և ոչ մի թշնամի չկարողանա պարտության մատնել այն»:

Ը. Քրիստոսը այդ նամակը տվեց Անանիային, բայց ուզեց կատարել նրա տիրոջ մյուս հանձնարարությունը ևս, այն, որի համար ջանք էր թափում Անանիան. խոսքը իր, Քրիստոսի, պատկերը բերելու մասին է: Փրկիչն ահա լվաց դեմքը, ապա դեմքի խոնավությունը չորացրեց իրեն տրված վարշամակով, որի վրա գերբնականորեն, աստվածային նախախնամությամբ արտատպվեց իր դիմապատկերը: Վարշամակը նա տվեց Անանիային, հրամայեց այն տալ Արգարին, որպեսզի վերջինիս ցանկությունը կատարվի, և նրա ցավերն ապաքվեն: Այդ բոլորն առած, Անանիան բռնեց վերադարձի ճանապարհը. նա հասավ Հիերապոլիս, որ սարակինոսների լեզվով Մեմբիջ[11] է կոչվում, իսկ ասորերեն՝ Մարուգ: Կանգ առնելով այդ փոքր քաղաքից դուրս, նա այնտեղ գտնվող՝ նոր պատրաստված աղյուսների կարկառի մեջ թաքցրեց այդ սուրբ շորի կտորը: Կես գիշերին այդ տեղը համակվեց մեծ կրակով, այնքան մեծ, որ քաղաքի ներսում գտնվողներին թվաց, թե [քաղաքի] ողջ շրջակայքը կրակի ճարակ է դառնում: Իրենց կյանքը վտանգված համարելով, նրանք [քաղաքից] դուրս եկան և սկսեցին հետաքրքրվել թվացող հրդեհով: Տեղում Անանիային գտան և նրան հրձիգ համարելով, սկսեցին քննել, ո՞վ է նա, ո՞ւր է գնում, և ո՞րտեղից:

Թ. Տարօրինակ հարցից զարմացած, Անանիան պարզեց իր ծագումը, որտեղից գալը, ասաց, թե ինչ է իր հետ բերում, ասաց, որ աղյուսների կարկառի մեջ է գետեղել իր հետ բերածը, այնտեղ, որտեղ թվում է, թե բոց է դուրս գալիս: Ասվածը ստուգելու համար նրանք փնտրտուքներ կատարեցին տեղում, և ոչ միայն Անանիայի՝ այնտեղ գետեղածը գտան, այլ և մերձակա աղյուսներից մեկի վրա տեսան աստվածային անձեռագործ պատկերի սի ալյ արտատպությունը, որը, գերբնական, մարդու մտքին անհասանելի եղանակով կտորից անցել էր աղյուսին: Ակնատես լինելով դրան, նրանք ապշեցին ոչ միայն [պատկերի] պատճառով, այլև այն պատճառով, որ ոչ մի տեղում կրակ չգտան: Հենց պատկերից բխող լույսն էր, որ բոցի տպավորություն էր թողնում: Աստվածային պատկերն իր մեջ ընկալած աղյուսը որպես սուրբ, որպես թանկագին գանձ նրանք վար դրեցին, իրենց տեսածից համոզվելով, որ աստվածային ներգործության հետ գործ ունեն: Ինչ վերաբերում է նախատիպին և վերջինիս սպասավորին, ապա նրանք վախեցան տիրանալ դրանց և Արգարին ուղարկեցին: Ահա այդ փոքր քաղաքի բնակիչները [մինչև օրս] պահում և պատվում են պատկերը կրող այդ աղյուսը, անգիր պատկերից անգիր եղանակով առաջացածը, անձեռագործ պատկերից անձեռագործ եղանակով արտանկարվածը: Իսկ Անանիան մնացած ճանապարհը կտրելով, հասավ ու տիրոջը պատմեց տեղի ունեցածի մասին և նրան հանձնեց իր բերած փրկչական իրերը:

Ժ. Ահա մեր Փրկչի անձեռագործ պատկերի մասին լայն տարածում գտած պատմությունը: Բայց այդ մասին մի այլ պատմություն էլ կա, որը [նույնպես] ճշմարիտ լինելու հիմքերն ունի, ունենալով վստահելի ապացույցներ: Ես այդ էլ կպատմեմ, որպեսզի չկարծեն, որ դրան անտեղյակ մենք ավելի հավատ ենք ընծայում առաջինին: Բոլոր դեպքերում ոչ մի տարօրինակ բան չկա, որ ազգաբան երկար ժամանակի ընթացքում պատմությունը հաճախ այլափոխված ձևով է հանդես գալիս, թեև բոլորի մեջ նրա առաղձը միասնական է, այն, որ Տիրոջ դեմքից է, որ գերբնականորեն կտորի վրա արտատպվեց պատկերը: Բայց մանրամասների մեջ, այն է ժամանակի հարցում, տարակարծություններ կան: Հակառակ այդ բոլորին իրողությունը չի փոխվում եթե ընդունենք, որ դեպքը այս կամ այն չափով շուտ կամ ուշ է տեղի ունեցել: Մյուս տարբերակն ահա հետևյալն է:

ԺԱ. Պատմում են, որ երբ Քրիստոսը կամովին չարչարանքներն ընդունեց, նա հանդես բերեց մարդկային թուլություն: Նրան տեսնում էին տագնապի մեջ, աղոթելիս: Արդ, ավետարանի համաձայն «Հոսէին ի նմանէ քրտունք իբրև զկաթիլս արեան»[12], Դրա վրա, պատմում են, որ [Քրիստոսի] աշակերտներից մեկը վերցրեց այժմ մեր տեսած շորի կտորը և սրբեց նրա քրտինքները. սրբիչի վրա իսկույն աստվածային դեմքի արտատպությունն երևաց: [Քրիստոսը] սրբիչը թողեց Թովմային և հրամայեց, որ իր երկինք համբառնալուց հետո Թադեոսի[13] միջոցով Արգարին ուղարկել այն, կատարելու համար իր նամակում տված խոստումը: Մեր Տիրոջ Հիսուս

Քրիստոսի երկինք համբառնալուց հետո Թովմաս Տիրոջ անձեռագործ պատկերը Թադևոսի միջոցով ուղարկեց Արգարին:

ԺԲ. Թադևոսը, հասնելով Եդեսիա, նախապես օթևանեց այնտեղի հրեաներից մեկի տանը: Նրա անունը Տոբիաս էր: Քրիստոսի աշակերտը ուզեց, որ Աբգարը իրեն նախ և առաջ գործով ճանաչի, քան թե խոսքով. նա քաղաքի հիվանդներին լոկ հանուն Քրիստոսի բուժեց: Քրիստոսի համբավը տարածվեց (նման դեպքերում այդպես է լինում, քանզի անհավատալի լուրը բազում տարածողներ է գտնում), Քրիստոսի առաքյալի գալստյան մասին լուրը Աբգարին հասցրեց վերջինիս մեծամեծներից Ադդու անունով մեկը: Աբգարն իսկույն կանխազգաց, որ նա Քրիստոսի նախակում հիշված և իրեն ավետված մարդն է: [Ադդուից] նա հանգամանորեն տեղեկացավ Թադևոսի մասին, կարգադրեց նրան իր մոտ հրավիրել: Տոբիասը[14] եկավ և առաքյալին պատմեց այդ մասին, վերջինս էլ պատասխանելով, որ ինքը լիազորված է [Աբգարի] մոտ գալու, ներկայացավ Աբգարին: Երբ [Թադևոսը] պետք է անձամբ հանդիպեր Աբգարին, պատկերը իր ճակատին՝ նա մտավ վերջինիս մոտ: Աբգարը հեռվից ավելի շուտ նրա դեմքից պսպղացող լույսը տեսավ, որ պատկերն էր ցոլացնում, քան թե [առաքյալի] դեմքը: Ուժեղ լույսից զարմացած, նա մոռացավ իր ցավերը, մարմնի երկարամյա թուլությունը. նա իսկույն ելավ մահճակալից և սկսեց վազել: Մարմնի թուլությամբ տառապող անա այս կերպ [բուժվեց], Թաքոր լեռան վրա փայլատակած դեմքին ականատեսներից տարբեր[15]:

ԺԳ. Առաքյալից վերցնելով խնդրո առարկա պատկերը և ակնածությամբ հպելով իր գլխին ու շրթներին, դեռ ավելին, իր մարմնի մյուս մասերին այն դեռ չհպած, նա իսկույն զգաց, որ իր մարմնի բոլոր մասերը ապաքինվում են, լավանում, բորոտությունը մաքրվում է և անհետանում. այդ հիվանդության ինչոր հետք միայն մնաց ճակատին: Առաքյալից ավելի հանգամանորեն սովորելով ճշմարտության խոսքը, հասու լինելով Քրիստոսի զարմանալի հրաշագործությունների, նրա աստվածային չարչարանքներին, թաղման, ի մեռելոց հարություն առնելու և հերկինս համբառնալու, նա Քրիստոսին ճշմարիտ աստված խոստովանեց: Նա հետաքրքրվեց դիմապատկերը կրող վարագամակով, որովհետև մանրամասն հարցուփորձ անելով իմացել էր, թե առանց նյութերեն ներկերով է այն պատրաստված: Նա ապշել էր նրա ունեցած զորության վրա, որի շնորհիվ ինքն անակնկալ կերպով մահճակալից վեր էր կացել և առողջացել: Թադևոսը դրա վրա պատմեց նաև [Քրիստոսի] ապրած տագնապի և [Նրա] քրտինքից, առանց ներկերի առաջացած պատկերի մասին: Նա հայտնեց նաև Տիրոջ կարգադրությունը՝ նրա [Աբգարի] մոտ գալու, և բոլոր այն մասին, ինչ ասվեց վերևում:

ԺԴ. Երբ Աբգարն զգաց, որ Թադևոսի՝ իր՝ Աբգարի վրա հանում Հիսուս Քրիստոսի ձեռքերը դնելով ցավերը չքվում են, թուլացած անդամները կարծես ամրանում, այլանդակությունը վերանում և ամեն ինչ ապաքինվում, ապշած խոստովանեց. «Ճշմարիտ, դու աշակերտն ես Աստուծո՝ Հիսուս Քրիստոսի, ով բուժում է առանց դեղերի և դեղաբույսերի: Ես այնքան եմ նրան կապվել սիրով և հավատով, որ եթե չվախենայի հռոմայեցիների պետության մեծ հզորությունից, հռոմայեցիների, ովքեր չեն հանդուրժում, որ իրենց հպատակները միմյանց դեմ զենք ճոճեն, իսկույն զենքով կհարձակվեի Տիրոջը խաչող հրեաների վրա և կնվաճեի նրանց: Այժմ, իմանալով [Քրիստոսի] կամովին չարչարվելու մասին, համոզվեցի, որ եթե Նա չուզեր, ապա ապերախտ [հրեաները] չէին հաղթահարի Նրան, այդ բանի վրա ես ամենևին չեմ կասկածում: Արդ, ես ուզում եմ արժանանալ սուրբ մկրտության, ամբողջ ընտանիքով ընտանեանալ և նվիրվել Տիրոջ Քրիստոսին»: Տիրոջ աշակերտն արդեն բազում հրաշքներ էր գործել, բոլորին բուժել իրենց ցավերից, այդ թվում և ամենից առաջ իր համբավը Աբգարին բերողին. նրան նա փրկել էր հոդատապից: Արդ, նա Աբգարին մոտեցրեց սուրբ ավազանին, և նրա վրա պետք եղածը կատարելով, նրան, կնոջ ու երեխաներին, ապա և նրա տան բոլոր անդամներին մկրտեց: Աբգարն այդ սրբազան ու մաքրող ջրից դուրս եկավ կատարյալ մաքուր և առողջ. նրա ճակատից իսկույն անհայտացել էր և բորոտության դեռ մնացած հետքն անգամ:

ԺԵ. Դրանից հետո անա տոպարքեսը պատվեց ու պաշտեց Տիրոջ դիմապատկերը և այլ [սրբությունների] շարքին այն դասեց: Անցյալում Եդեսիայի երևելի քաղաքացիները քաղաքի հասարակական դռան առջև հունական մի աստվածության արձանն էին կանգնեցրել. ով որ քանկանար քաղաք մտնել, նա պարտավոր էր երկրպագել [արձանը] և տաճմանված բարեմաղթություններն հոել, որից հետո միայն ընթանալ քաղաքի փողոցներով ու ճանապարհներով: Աբգարը գետին տապալեց այդ [արձանը] և նույն տեղում մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի անձեռագործ պատկերը կանգնեցրեց տախտակի վրա կպցնելով այն և պաճուճելով մինչև օրս երևացող ոսկե զարդերով, որի վրա նա ոսկե տառերով գրեց հետևյալը. «Քրիստոս Աստված, քեզ հավատացողը երբեք չի սխալվի»: Նա օրենք սահմանեց, որ այդ հոնով ներս մտնողը հիմ, անպետք և անօգուտ արձանի փոխարեն, անհրաժեշտ ակնածանքը. երկրպագությունն ու պատիվը Քրիստոսի բազմահրաշ և սքանչելագործ պատներին հոի և որանից հետո մուտք գործի Եդեսիա քաղաքը: Բարեպաշտ Աբգարի այդ օրենքը պահպանվեց նրա ամբողջ կենդանությանն ընթացքում, ապա նաև վերջինիս որդու, որ ժառանգեց հոր իշխանությունն ու բարեպաշտությունը: Բայց վերջինիս որդին և [Աբգարի] թոռը, թեև ժառանգեց հոր և պապի իշխանությունը, աղդումհանդերձ չժառանգեց [նրանց] բարեպաշտությունը: Նա, այսպես ասած, աքսորեց բարեպաշտությունը և հանձնվեց դևերին ու կուռքերին: Ուզենալով փոխհատույց լինել դևերին,

նա վճիռ արձակեց ոչնչացնել Տիրոջ պատկերը, քանի որ իր պապը ոչնչացրել էր այդ կուռքը: Բայց նենգը իր նպատակին չհասավ, քանզի տեղի եպիսկոպոսը իմացավ այդ մասին, և անհրաժեշտ քայլերին դիմեց: Պատկերի գտնված տեղը կիսաշրջան գլանի ձև ուներ. [Եպիսկոպոսը] պատկերի առջև ապակի դրեց, նրա առջևն էլ՝ կղմինդր, ապա ամբողջ մակերեսը կրով ու թրծած աղյուսով հյուսեց ու հարթեցրեց: Ամբարիշտի աչքին այլևս չէր երևում իրեն ատելի պատկերը, դրա համար էլ նա հրաժարվեց իր ծրագրից: Իսկ կարծիքով եպիսկոպոսը պատկերի առջև կղմինդր դրեց, որպեսզի շինարարության բորբոսը և կրի խոնավությունը պատկերի մեջ չներծծվի և ժամանակի ընթացքում չվնասի այն:

ԺՋ. Անցավ բազում ժամանակ, մարդիկ մոռացել էին սուրբ պատկերի և՛ կանգնեցման, և՛ թաքցնելու մասին: Պարսից արքա Խոսրովը[16], գրավելով Ասիայի քաղաքները, հասավ Եդեսիա, պաշարեց այն, գործի դրեց քաղաքավեր ամեն տեսակի մեքենաներ և ամեն ջանք թափեց քաղաքի վրա նետերի տարափ թափելու, պարիսպները խախտելու և դարպասները խորտակելու համար: Այդպիսի վտանգի ենթարկված եդեսացիք, ճիշտ է, հնարավոր բոլոր միջոցներով պաշտպանվում էին, բայց նպատակահարմար գտան օգնության դիմել հռոմայեցի զորավարին: Այն ժամանակ հռոմեական զորքերի հրամանատարը Հելիոնն էր, որը սակայն թշնամիների կողմից դժվարին դրության մեջ ընկած, հնարավորություն չուներ Եդեսիային օգնություն ուղարկել: Նա հուսադրեց նրանց՝ հիշելով Տիրոջ նամակը, նրա մեջ արձանագրված ճշմարիտ վճիռը՝ քաղաքի անառիկ լինելու մասին: Պարսիկները ոչ միայն բացահայտ կերպով գրոհի էին անցել, այլև թաքուն միջոցառումների էլ էին դիմում: Նրանք սկսեցին հեռվից գետնափոր անել, որոշելով նրա միջով մուտք գործել քաղաք: [Պարսիկները] ստորջրյա լողորդների նման հասան պարիսպների հիմքերին, բայց նրանց գոյության մասին պաշարյալները իմացան հետևյալ կերպ. երբ պարսիկները փորում էին գետինը և հողը դուրս հանում, [քաղաքացիների] բնակարանների [պատից] կախված պղինձները իրար էին գալիս և հնչում: Անել վիճակի մատնված և կատարյալ հուսալքության հասած քաղաքացիները, արտաքնյիկ ու արտասվալից դիմում են Աստծուն: [Քաղաքի] եպիսկոպոսին (նա Եվլալիոսն էր) գիշերով տեսիլք երևաց՝ փառավոր և արգալից, գերմարդկային մի կին, որը հուշեց իրեն վերցնել Քրիստոսի անձեռակերտ պատկերը և նրանով թափոր կազմած դուրս գալ. Տերը իր հրաշքը ցույց կտա: Եպիսկոպոսը պատասխանեց, թե ամենևին անտեղյակ է այդ մասին, ո՞ւմ մոտ է գտնվում այն: Դրա վրա կնոջ կերպարանքով հանդես եկողն ասաց, թե քաղաքի դռան վրա ահա այս կերպ է թաքնված պատկերը:

ԺԷ. Եպիսկոպոսը, իր տեսիլքի ճշմարտությանը համոզված, առավոտյան թափորով եկավ նշված վայրը, փնտրեց և գտավ ոչ մի փոփոխություն չկրած պատկերը. այդքան երկար տարիների ընթացքում պատրույգն անգամ չէր հանգել[17]: Բացի այդ, ճրագի առջև դրված կղմինդրի վրա պատկերից արտատպվել էր մի ուրիշ պատկեր, որը մինչև օրս էլ պահվում է Եդեսիայում: Եպիսկոպոսն իր ձեռքն առնելով աստվածամարդ Քրիստոսի պատկերը, սիրտ առած նկավ այն տեղը, որտեղ [գետնափոր] անող պարսիկների [հարվածներից] հնչող պղինձներից՝ նրանց գոյությունը հայտնի էր դարձել: Քաղաքացիներն սկսեցին ներսից փորել և երբ մոտեցան իրենց թշնամիներին, նրանց դեմ պատրաստված կրակի մեջ ճրագից ձեթ կաթեցրին, ապա կրակը գցելով գետնափորում գտնվող պարսիկների վրա, բոլորին ոչնչացրեցին: Այդ վտանգից փրկված, նրանք նույն կերպ վարվեցին պարիսպներից դուրս գտնվող մեքենաների հետ և նույն ձևով մոխիր դարձրին. նրանց մեջ գտնվող բազում թշնամիների ոչնչացրին: Սիրտ առած, նրանք սկսեցին պարիսպների վրայից քարերի տարափ թափել, որոնց հարվածներից ընկավ և պիղծ զորքի հրամանատարը, նրա հետ նաև շատ ուրիշներ: Բացի այդ, [քաղաքացիների համար] ապավեն դարձած աստվածային պատկերը թշնամիների վրա շուռ տվեց դրսում՝ [քաղաքացիների] գլխին թափելու համար [հակառակորդի կողմից] պատրաստված կրակը, որը գնալով թեժանում էր ձիթենիների և այլ ծառերի անսահման քանակության փայտով: Դա կատարվեց հետևյալ կերպ. Եվլալիոսը [պատկերը] իր ձեռքերի մեջ առած քաղաքի պարիսպների վրայով էր տանում: Երբ հասավ նշված վայրը, հանկարծակի սաստիկ քամի բարձրացավ և ասածս խարույկի բոցը շուռ տվեց այն բորբոքողների վրա. նա փախուստի մատնեց նրանց և հրո ճարակ դարձրեց, ինչպես անցյալում քաղդեացիներին:

ԺԸ. Մեր պատմածն անհիմն չէ, մեր հորինածն էլ չէ՝ ինչ-որ խաբեության կամ էլ ունկնդիրներին դուր գալու համար. երեք պատրիարքներ՝ այն է Ալեքսանդրիայի Հոթը, Անտիոքի Քրիստափորը և Երուսաղեմի Բարսեղն[18] են գրել այդ մասին, հաստատել դրա ճշմարտացիությունը և իրենց շարադրանքը սուրբ պատկերներն անարգող Թեոփիլոս[19] կայսեր ներկայացրել: Նրանք պատկերների սրբությունն ու ակնածության արժանի լինելն ապացուցող բազում փաստերի թվին, ավելացրին և [վարշամակի] մասին պատմությունը: Ցանկացողը թող կարդա [նրանց] այդ մանրամասն նամակը և իմանա այդ մասին: Եթե ոք ուշադիր ծանոթանա նաև Եվագրիոսի Եկեղեցական պատմությանը, այնտեղից էլ կիմանա դրա վերաբերյալ, քանի որ խնդրո առարկա սուրբ պատկերի մասին նա խոսում է չորրորդ գրքում:

ԺԹ. Նա պատմում է, որ Խոսրովը, ցանկանալով միանգամայն ապացուցել այդ քաղաքի անառիկության մասին քրիստոնյաների շրջանում տարածված համբավի կեղծ լինելը, ի միջի այլոց կատարեց և հետևյալը. նրա հրամանով՝ առկա գինվորների մեծա-

թղվության պատճառով կարճ ժամանակամիջոցում հսկայական քանակությամբ փայտ կուտակվեց. դրանցով նա երկու շարք պատ կազմեց և քաղաքը շրջապատեց: Այնուհետև այդ փայտերի երկու շալակների արանքում հող լցրեց և Եդեսիայի պարսպի դեմ մի այլ պարիսպ կանգնեցրեց՝ քաղաքի պարսպից ավելի բարձր: Այդպիսով նա շատ ավելի նպաստավոր դիրքից նետեր պիտի արձակեր քաղաքի պաշտպանների վրա: Եդեսացիք տեսնելով պարսպի դիմաց բարձրացվող լեռը, համոզված էին, որ թշնամիները քաղաքի վրա կհարձակվեն կարծես ոտիզ գետնի վրայով: Թեև նրանք անել վիճակում էին, բայց և այնպես հնարավորին չափ հակամիջոցների դիմեցին. նրանք նոր կանգնեցված պարսպի առաջից գետնափոր արեցին, նպատակ ունենալով հողի առջևում գտնվող փայտամածը կրակի տալ, ապա նրա [միջև եղած] հողը գետնափորի միջով դուրս հանել, համոզված լինելով, որ այդ ճանապարհով ցնորական պարիսպն իսկույն կավերի, փուլ կգա: Գետնափորի աշխատանքը հաջողությամբ առաջ էր գնում, բայց նրանց չէր հաջողվում փայտերը կրակի տալ. նրանց արանքում թափված հողը, ապա և նրանց խոնավությունը հնարավորություն չէր տալիս կրակին առանց որևէ նոր միջոցի բռնկվելու: Ահա դրա վրա նրանք սուրբ պատկերը նորակերտ գետնափորը մտցրին, նրանով ջուր օրհնեցին, որը ցանելով փայտերի վրա կրակը բռնկեցրին: Ջուրը, այդ բանը գործողների հավատքից աստվածային զորություն ձեռք բերելով, կրակի մեջ կարծես յուղի վերածվեց, բոցը թեժացրեց և հանդիպածը ոչնչացրեց: Պարսից արքան, քաղաքին տիրանալու հույսը կտրած, ապա և իմանալով, թե ով է հասել [քաղաքացիների] օգնությանը, դիմեց բանակցությունների և հաշտություն կնքելով, վերադարձավ իր երկիրը:

Ի. Բայց [պարսից արքան] շատ չանցած ինքն էլ արժանացավ իր թշնամիների համար բարեգործ, իսկ իր համար ավերիչ դարձած այդ սրբազան պատկերի բարերարությանը: Իր դուստրը դիվահար և խելակորուս, դնից դրդված անվերջ աղաղակում էր, թե «Մինչև Եդեսիայից չբերվի անձեռագործ պատկերը իր մեջ բնակություն հաստատած [դևը] դուրս չի գա»: Արքան, լսելով դա, հիշեց պաշարման ժամանակ տեղի ունեցած դեպքերը, (նրանից չէր վրիպել եդեսացիների տարօրինակ, անակնկալ կերպով ձեռք բերած հզորությունն ու քաջությունը): Նա իսկույն նամակ գրեց քաղաքի մեծին, մետրոպոլիտ Եվլալիոսին և քաղաքի համայնքին, խնդրելով շտապ իրեն ուղարկել աստվածային ամենազոր պատկերը, ավելացնելով և այն [խնդրելու] պատճառը, այն է, դստեր դժբախտությունը: Նա ամեն կերպ խնդրում էր այն, աղերսում չմերժեն իր խնդիրքը: [Եդեսիայի քաղաքացիները] գիտեին, որ չի կարելի պարսիկներին հավատ ընծայել, նրանք կասկածում էին, որ պարսիկն ուզում է չարաշահելով խլել իրենց հզորությունը: Մտահոգված լինելով չզրկվել իրենց պաշտպանից ու բարերարից, բայց և չուզենալով դրա պատճառով վերացնել խաղաղությունը, օգտաբեր և խոհեմ մի միտք հղացան: Նրանք հար և նման մի պատկեր արտանկարեցին՝ անձեռագիր նկարից ձեռագիր, հնարավորին չափ [նախատիպարին] նմանեցրին, և այն խնդրողին ուղարկեցին: Պատկերը տանողները հենց որ մուտք գործեցին պարսից սահմանները, դեռ Աստուծո դրդմամբ արքայի դստեր բերանով գոչեց, թե եկող ուժի պատճառով շուտով դուրս կգա և կփոխի իր բնակության վայրը, եթե խնդրված պատկերը ետ վերադարձվի և այն մուտք չգործի ո՛չ արքունիք, ո՛չ էլ պարսից քաղաքը: Այդ առթիվ նա շատ էր խնդրում և աղաչում արքային: Արքան խոստացավ. դրա վրա դևը դուրս եկավ իր դստերից. արքայի աղջիկն առողջացավ: Խոսքովը, կամ ընդառաջ գնալով իրեն խնդրող դևի աղերսանքին, գուցե և իր խոսքի տերը կանգնելով, և կամ էլ իր վատ ու պիղծ արարքների համար եկող ուժի հաշվեհարդարից երկյուղած, հրամայեց վերադարձնել պատկերը այն քաղաքը, որտեղից որ ուղարկվել էր: Նա իր կողմից նվերներ էլ պարգևեց [պատկերը] իրեն ուղարկողներին:

ԻԱ. Ահա այսպես եդեսացիների մոտ էր գտնվում այդ թանկագին գանձը, անհատնում հարստությունը, այդ նախատիպ և անգիր պատկերը, որ պաշտվում էր նրանց կողմից և պահպանում իրենց: Բայց որովհետև քաղաքների այս թագուհու[20] մեջ ամեն տեղից հավաքվեցին ամենալավ ու գեղեցիկ [իրերը], ապա աստվածային կամքն էր, որ այդ սրբազան պատկերը այլոց հետ միասին այստեղ պահվի: Հռոմայեցիների պետության տեր Ռոմանոսը[21] ջանք էր թափում, որ ինքն արժանանա դրան և հարստացնի մայրաքաղաքը: Այդ նպատակով նա ստեպ-ստեպ դիմում էր Եդեսիա և խնդրում այն, ինչպես և Տիրոջ ինքնագիր նամակը, խոստանալով դրանց փոխարեն տալ մինչև երկու հարյուր [ռազմագերի] սարակինոս և տասներկու հազար մաքուր արծաթ: Բայց եդեսացիք պատասխանեցին, թե իրենց համար ձեռնտու չէ սեփական քաղաքի պահակն ու պահապանը փոխանակել արծաթով և մահկանացու մարդկանցով:

ԻԲ. Նա նորից խնդրեց նրանց, բայց բազմիցս անգամ մերժում ստացավ: Վերջապես աշխարհի արարչագործության վեց հազար չորս հարյուր հիսուն երկրորդ տարին[22] Եդեսիայի ամիրան դիմեց կայսեր, պահանջելով ոսկե կնիքով հաստատված վավերագիր այն մասին, որ հռոմայեցիների զորքերը թշնամական նպատակներով չեն դիմի հետևյալ չորս քաղաքների վրա. այն է Ռոխայի[23] (բարբարոս լեզվով աւդպես է կոչվում Եդեսիան), Խարանի, Սարատի և Սամոսատի, ավարի չեն տա այդ [քաղաքների] արտերը, չեն գերեվարի նրանց բնակիչներին: [Պահանջեց] նաև ազատ արձակել և իրեն ուղարկել իր ցեղակից երկու հարյուր սարակինոսներին՝ առաջարկված արծաթով հանդերձ, որոնց դիմաց ինքը խոստանում է տալ խնդրված պատկերը և Քրիստոսի նամակը:

ԻԳ. Կայսրը նման բարիքին արժանանալու համար համաձայնվեց բոլոր պահանջներին և Սամոսատի աստվածասեր եպիսկոպոս Աբրամիոսին, որն այն ժամանակ այստեղ[34] էր գտնվում, ուղարկեց ստանալու սուրբ պատկերը և մեր աստված Քրիստոսի նամակը։ Ե՛վ ուղարկողին, և՛ պարտականությունը կատարողին մտահոգում էր մի բան, որ հանկարծ իրենց կխաբեն և անձեռագործ ու իսկական պատկերի փոխարեն կտան այն, որ պարսկական դեպքերի առթիվ արտանկարվեց։ [Պատգամավորը] ստուգելու համար պահանջեց, որ իրեն բերեն երկուսն էլ, ապա և նեստորականների եկեղեցում պաշտվողը, որը, ինչպես հայտնի է, անցյալում նույնպես նախատիպարից էր արտատպվել։ Իսկականն ու իրականը վար դնելով, նա մյուսներն իսկույն ետ վերադարձրեց։

ԻԴ. Բայց դա տեղի ունեցավ հետագայում։ Այն ժամանակ Եդեսիայի հավատացյալները խռովություն բարձրացրին, քաղաքում մեծ տակնուվրադություններ եղան. [քաղաքացիները] չէին ուզում զրկվել իրենց ամենահարգի [իրերից], իրենց պաշտպաններից, մինչև որ տարակինոսների գլխավորը ոմանց համոզելով, ոմանց վրա ճնշում գործադրելով, ոմանց էլ մահապատժի սպառնալիքի տակ տիպեց տալ այն։ Երբ պատկերը և Քրիստոսի նամակը պետք էր քաղաքից դուրս բերվեին, հանկարծակի ինչ-ինչ պատճառով կամ նախախնամությամբ որոտ ու փայլակներ, տեղատարափ անձրև թափվեցին։ Ովքեր որ չէին ուզում այդ [սրբությունները] տալ, նորից ոտքի եղան. նրանք պնդում էին, որ [բնությանն այդ երևույթները] վկայությունն են այն բանի, որ սրբությունների տեղափոխությունը տեղի է ունենում Աստուծո կամքին հակառակ։ Բայց տարակինոսների զորավարը, որի ձեռքում էր գտնվում բովանդակ իշխանությունը, որոշեց չդրժել համաձայնությունը, կատարել խոստումը. նա քաղաքից դուրս հանեց ամենահարգի պատկերը ու Քրիստոսի ձեռքով գրված նամակը և այստեղ էր բերում։

ԻԵ. Այդ սրբությունները բերողները ճամփա կտրելով, հասան Եփրատ, երբ եղեսացիք նորից, նախկինից ոչ պակաս սրմուկ բարձրացրին. նրանք ասում էին, որ մինչև աստվածուտ որևէ հրաշք չկատարվի, իրենց պատկերներին չեն տա։ Դրա վրա ահա այդ անհավատներին և փորձողներին հրաշք է ցույց տրվում։ Աստվածային պատկերը և նամակը տանող եպիսկոպոսները, երբ խռովարարները դեռ հուզման մեջ էին, մտան Ասորիքի ափին կանգնած նավը, որի վրա պետք է կտրեին անցնեին Եփրատ գետը։ Հանկարծակի, առանց թիավարների, առանց նավավարի միջամտության, լոկ Աստուծո կամքով նավը լողաց անցավ հիմատի ափը։ Դա բոլոր նեստորականներին և անհավատներին ապշեցրեց և զարմացրեց, հասցրեց կամովին թույլ տան գնալու։

ԻԶ. [Սրբությունները] տանող սպասավորները, այն է Սամոսատի և Եդեսիայի եպիսկոպոսը, նրա ավագ երեցը, նաև ամենաարդարապաշտ քրիստոնյաներ և ամիրայի սպասավորը, որին մականվանում էին Հոռոմից[35] հասնում են Սամոսատ։ Մի քանի օր մնալով այնտեղ, որոնց ընթացքում բազում հրաշքներ կատարվեցին, նրանք ճամփա ընկան։ Ճանապարհին սրբազան պատկերը և Քրիստոսի նամակը անթիվ հրաշքներ էին գործում. կույրերը անակնկալ կերպով տեսնում էին, կաղերն առողջանում, երկար ժամանակ անկողնին գամված մարդիկ ապաքինվում, չորացած ձեռքեր ունեցողները բուժվում։ Մի խոսքով ամեն մի հիվանդություն և ցավ փախուստի էին դիմում. ապաքինվողները փառավորում էին Աստծուն և փառաբանում Նրա հրաշքները։

ԻԷ. Երկար ճանապարհ կտրելով, նրանք հասնում են Օպտիմատոն[36] բանակաթեմում գտնվող սուրբ Աստվածածնի վանքը, որը Եվսեբիոսի է կոչվում։ Ահա այս վանքի տաճարում ակնածությամբ ամփոփվում է հրաշագործ պատկերի տուփը։ Մաքուր սրտով այստեղ դիմած բազում մարդիկ իրենց ցավերից ապաքինվեցին։ Այստեղ եկավ և մի դիվահար, որին չար ոգին օգտագործում էր որպես գործիք և այդ դիվահարի բերանով գովաբանում պատկերն ու նամակը և Տիրոջ դիմելով ասում. «Գիտենք ով ես դու, սուրբն Իսրայելի»։ Ի վերջո, նա կարծես մարգարեանալով, ասաց. «Ընթրշնի՛ր, ո՜վ Կոստանդնուպոլիս, փառք ու բերկրություն, և դո՛ւ Կոստանդին Միրանաձին թագավորությունը քո»։ Այդ խոսքերն ասվելուց հետո մարդը բուժվեց և ազատվեց դևի ազդեցությունից։ Այս խոսքերի բազում վկաները կան։ Այդ բանին ականջալուր եղան և դրա վկաները այդ ցանկալի [սրբությունները] դիմավորելու եկած՝ կայսեր ուղարկած ավագ ծերակուտականները, նրանց միացած բազմաթիվ նիզակակիրներ, ապա մագիստրոսներ և սյատրիկներ, ավելի ցածր աստիճանավորներ։ Երբ [դևի] կանխագուշակությունները շուտով իրականություն դարձան, բոլորն ապշած մնացին, թե ո՞րտեղից դևը կանխավ գիտեր այդ մասին։ Մարդիկ հավատացած են, որ դևերն ի բնե [կանխագիտության] շնորհքով չեն օժտված, քանի որ նրանք աստվածային փառքից դուրս են աղթսված և լույսի փոխարեն խավար դարձած։ Հայտնի է, որ աստվածային զորությունը հնում կանխագուշակելու գործում օգտագործում էր Բաղաամի ծառայությունները ապա բազմիցս և այլևայլ, այդ բանի համար անարժան մարդկանց, բայց բոլոր դեպքերում իմաստուն և խոհեմ նախախնամությամբ։ Ահա տվյալ դեպքում ևս սուրբ պատկերի մեջ եղած զորությունը դևին օգտագործեց և փոքր անց տեղի ունենալիքը կանխագուշակեց[37]։ Ավելորդ չէ հիշել այդ, ի միջի այլոց տեղի ունեցածի մասին։ Անցնենք պատմության շարունակությանը։

ԻԸ. Երբ օգոստոս ամսի տասնհինգին Վչախերնայի[38] Աստվածածնի ամենասուրբ տաճարում կայսրերը սովորության համաձայն նշում էին միշտ կույս Աստվածածնի Ննջման տոնը, այդ սրբությունների սպասավորները տեղ հասան. նշված սուրբ տաճարի

վերնատան աղոթարանում ամփոփվեց պատկերն ու նամակը բովանդակող տուփը: Կայսրերը, ժամանելով ակնածությամբ երկրպագեցին և համբուրեցին այն դրսից: Այնուհետև փառք ու պատվով, բազում ջահեր վառած տուփը տարան կայսերական տրիերան[29], որով գնացին պալատ. տուփը նրանք ամփոփեցին այնտեղի՝ Փարոս կոչված տաճարում (այդպես է կոչվում հավանաբար այն պատճառով, որ ինչպես պայծառ զգեստ շատ է պաճուճված): Հաջորդ օրը, այն է ամսի տասնվեցին, հարգանքով ու ակնածությամբ նորից երկրպագեցին այն. այնուհետև հոգևորականները և երիտասարդ կայսրերը[30] (ծերունի տանտերը[31] հիվանդության պատճառով [տանը] մնաց), սաղմոսերգությամբ ու տաղերգությամբ, առատ լուսավորությամբ, գնացին քարափ, նորից մտան կայսերական տրիերան, գրեթե ամբողջ քաղաքի ափով թիավարեցին, որպեսզի [սրբությունները] այդ կերպ փրկեն քաղաքը՝ իրենց՝ ծովով ընթանալիս, և խարիսխ գցեցին քաղաքի արևմտյան պարսպի դրսի կողմում: Այնտեղ նրանք նավից իջան և ոտքով՝ և՛ կայսրերը, և՛ բոլոր ծերակուտականները, ապա պատրիարքը՝ եկեղեցու համայն կազմով, անհրաժեշտ փառք ու պատվով առաջ էին տանում սրբությունները բովանդակող սպասքը որպես ինչ-որ նոր տապանակ, ավելի ճիշտ՝ նրանից էլ ավելի [արժեքավոր]: Պարսպի դրսից նրանք հատան Ոսկե դուռը[32], այնտեղից մտան քաղաք: Բարձրաբարբառ սաղմոսերգությամբ, տաղերգությամբ ու շարականներով, անթիվ ջահերի լույսի տակ, համաժողովրդական թափորով ընթացքը շարունակեցին քաղաքի միջով, համոզված լինելով, որ այդպիսով քաղաքն արժանանում է օրհնության, անչափ հզորանում է աղն, որ դարեր շարունակ նա անվնաս ու անառիկ կպահպանվի: Անգործ ամբոխը փութաց ականատես լինելու. ժողովուրդը կոհակների նման ամեն կողմից շարժվում էր և հոսում. անդամալույծ մի մարդ, որ երկար ժամանակ հիվանդությամբ էր տառապում, իր ծառաներին հենված վեր եկավ տեսնելու համար անցնող աստվածային պատկերը: Տեսնելու հետ մեկտեղ նա զարմանալի կերպով առողջացավ, իր ոտքերը կայունացած զգաց. նա վազեց, կաթոգին համբուրեց սուրբ պատկերի տուփը, փառավորեց Աստծուն՝ իր անձի հետ կատարված հրաշքը պատմելով: Բոլոր ներկաները այդ բանին ականատես եղած և նրա խոսքերին ականջալուր, փառավորեցին բոլորի Աստծուն, միշտ հրաշքներ ու սքանչելիքներ գործողին:

ԻԹ. Անհնարին է նկարագրել, թե աստվածային պատկերի և հարգո նամակի քաղաքի միջով տարվելու ժամանակ ինչքա՜ն ուրախության արցունք թափվեց, ինչպես մարդիկ աղաչեցին Տիրոջ՝ իրենց միջնորդը լինել, ինչքա՜ն գոհանամ ստացին. անսովոր երևույթներին լավ է ականատես լինել, քան թե ականջալուր, քանզի նրանց համբավը սովորաբար ավելի ուշ է տեղ հասնում: Թափորի կազմակերպիչները հասան Ավգուստեոնի[33] առջև գտնվող հրապարակը և պողոտայից մի փոքր ձախ թեքվելով, հասան Աստվածային Իմաստության[34] անվանը նվիրված տաճարը և աղոթարանի աղիտոնում[35] ամփոփեցին պատվական պատկերն ու նամակը:

Լ. Այդտեղ եկեղեցու ողջ կազմը երկրպագեց, պետք եղած պատիվը ցուցաբերեց, որից հետո թափորի կազմակերպիչները սուրբ բեռան հետ միասին նորից դուրս եկան և ուղղվեցին դեպի կայսերական պալատը. նրանք Խրիսոտրիկլինի[36], որտեղ տվորաբար տեղի են ունենում ամենակարևոր ընդունելությունները, կայսերական գահի վրա ամփոփեցին աստվածային պատկերը: Այդպիսով արքայական գահը սրբագործվեց, այդ [գահի] վրա բազմող ճշմարիտ հավատացյալներին առատորեն փոխանցվեց արդարություն ու բարություն: Ընդունված կարգի համաձայն [Աստծուն] երկար պաղատելուց հետո, այնտեղից նորից վերցվեց աստվածային պատկերը և ամփոփվեց վերոհիշյալ Փարոսի տաճարում՝ նրա արևելյան կողմի աջ մասում՝ ի փառս հավատացյալների, ի պահպանումն կայսերաց, ի անվտանգություն ամենայն քաղաքի և քրիստոնյաների պետության:

ԼԱ. Ո՞վ աստվածային նմանություն՝ հոր հար և նման նմանության: Ո՞վ կերպար՝ հայրական ինքնության կերպարի: Ո՞վ դու Քրիստոսի սրբազան և անգին դրոշմ, մեր Աստուծո նախատիպ գեղեցկություն (ես, հավատացյալս, դիմում եմ քեզ որպես կենդանի էակի), դու միշտ փրկի՛ր և պահպանի՛ր մեր բարեպաշտ և բարի կայսեր, քո վերադարձը փառավոր կերպով նշողին, որին ներկայությամբ քո բարձրագրիր հայրական և պապենական գահին: Պահպանի՛ր նրա զավակին[37] ի հարատևումն տոհմի և ի հաստատություն գահիսոնի: Պետությանը խաղաղություն պարգևիր, քաղաքների այս թագուհուն անառիկ պահիր: Թո՛ւյլ տուր մեզ, քո նախատիպին՝ մեր Աստված Քրիստոսին հաճոյացողներիս ընդունվել նրա երկնային թագավորությանը, մեզ, ովքեր փառավորում ենք և գովերգում նրան, քանզի նրա՛ն է վայել փառքը և երկրպագությունը՝ հավիտյան հավիտենից: Ամեն:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Թարգմանությունը կատարված է Մինյի հայտնի «Հունական հայրաբանության» մեջ հրատարակված բնագրից: Տես *Migne* Patrologia graeca, t. 113, col. 423—454.

2 Խոսքը 944 թ. Եդեսիայից վարշամակի հետ ժամանած մարդկանց մասին է:

3 Այսինքն հռոմայեցվոց (բյուզանդացիների) կայսեր:

4 Բնագրում τοπάρχης: Հայկական միջնադարյան բնագրերում այս բառը թարգմանվում է «իշխան աշխարհի»:

5 Խորենացու մոտ՝ «Արգար Արշամայ»:

6 Քանի որ Խորենացու «Պատմության» մեջ հանդիպող այս նամակի թարգմանությունը տառացի համընկնում է Ծիրանաճինի բնագրում մեջբերվածին,

ցպատակահարմար գտանք տալ Խորենացու տեքստը։ Վերջին երեք բառերը միայն («խաղաղությամբ բնակվելու այնտեղ») թարգմանեցինք, քանի որ Խորենացու բնագրում բացակայում էին։

7 Թովմա առաքյալի։

8 Այս բառերը Խորենացու բնագրում բացակայում են։

9 Հունարեն բնագրում «հայր»։

10 Հայերենը սրանից հետո ունի. «և կեանս քեզ և որոց ընդ քեզ են շնորհեսցէ»։

11 Բնագրում Մամուչ։

12 Տես Ավետարան ըստ Ղուկասու, ԻԲ, 44։

13 Թադեոս առաքյալի, Քրիստոսի 72 աշակերտներից մեկի։

14 Գուցե Ամոր՝։

15 Նկատի ունի Քրիստոսի ալյակերպությունը։ Տես Մատթէոս, ԺԷ, 2, Մարկոս, Թ., 1, Ղուկաս Թ., 29։

16 Խոսքը պարսից արքա Խոսրով Անուշիրվանի մասին է (531—579 թթ.)։ Եդեսիայի պաշարման մանրամասն նկարագրությունը տալիս է Պրոկոպիոս Կեսարացին իր «Պատերազմների մասին» աշխատության Բ գրքի 26—27-րդ գլուխներում։

17 Պատկերի առջև եղած ճրագի մասին Միրանաձին նախապես ոչինչ չի ասել։

18 Թեոփիլոս կայսեր ժամանակ Աղեքսանդրիայի պատրիարքն էր Քրիստափորը (817—848 թթ., մելքիտ), Անտիոքի պատրիարք՝ Հորը (813—844 թթ., մելքիտ), իսկ Երուսաղեմի պատրիարքն էր Բարսեղը (821—839 թթ.)։ Միրանաձինի մոտ պարզապես շփոթություն կա։

19 Խոսքը ծայրաթեղ պատկերամարտ Թեոփիլոս կայսեր մասին է (829—842 թթ.)։

20 Այսինքն Կոստանդնուպոլսի։

21 Խոսքը Ռոմանոս Լեկապենոս կայսեր մասին է՝ 920—944 թթ.)։

22 Մ. թ. 944 թ.։

23 Հայերեն Ուռհա։

24 Անսինքն Կոստանդնուպոլիս։

25 Բնագրում՝ ὁς ἀπό Ῥωμῆς κατονομάζετο; Այլն երկի լատիներեն թարգմանողը խնդրո առարկա բառերը թարգմանել է „cognomento a Roma"։ Ի հարկե, սխալ է։ Հունարեն ἀπό-ն առանձին չէ, այլ արաբերեն «դիր Ապոկապես—Աբու Լ Տաղիք և այլն)։ Հաջորդ բանում որևէ անվան աղաղ ենթադրել, որ խոսքը «(հայտնի է, օրինակ, արաբ

26 Օպտիմատոն բանակաբեր միդիա քաղաքը։

27 Այս «մարգարեական» խոսասին, որ սույն երկը գրվելուց կայսեր տապալումից (9 անմիջապես հետո։

28 Վլախերնայի շրջանը գրավելուց հետո Հյուսիս-արևմտյան

29 Նաղի տեսակ է։

30 Խոսքը Ռոմանոս Լեկապենոս Ստեփանոսի և Կոստանդին Ռոմանոսի կայսերակիցներ է

31 Այն է, Ռոմանոս Լեկապենոսի

32 Ոսկե Դուռը բյուզանդական կայսրավանքներից հետո քաղաքական դարպասն էր։

33 Ավգուստեոնը Կոստանդնուպոլսի մեկն էր, որտեղ է գտնվում ճարը, որի պատճառով էլ այն Այասոֆյամեդանը։

34 Սբ. Սոֆիայի։

35 Ադիտոնը եկեղեցու այն մասն է, որտեղ հասարակ մահկանացուն մուտք գործելու իրավունք չուներ։

36 Խրիսոտրիկլինոս (թարգմանաբար ոսկանակում է Ոսկե սեղան), տոնախմբությունների ամենանշանավոր դահլիճներից մեկը Կոստանդնուպոլսի Մեծ պալատում, որը գտնվում էր սբ. Սոֆիայի մոտ։ Հիշված է և Անանիա Ծիրակացու կողմից «Մարկիանու տրիկլին» անվամբ։

37 Ռոմանոս Բ-ին (959—963 թթ.)։

Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԻ ԾՐԱԳԱԿԱԼ-ԱՇՏԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Միջնադարյան Հայաստանում մետաղագործությունը եղել է բնակչության հիմնական զբաղմունքներից մեկը:

Մատենադարանի երազահան ձեռագրերից մեկի բովանդակությունը վկայում է այն մասին, որ այդ արհեստը եղել է ոչ միայն շատ տարածված, այլև խիստ մասնագիտացված և ճյուղավորված:

Այնտեղ նշված է.

«Զինչ արուեստ կա որ կու բանի, հանց ասեն դարբին տեսանես երազին՝ մեծ մարդ է... Սլեհարար (զինագործ) հանց լինի՝ որ օգնական է, նալբանդն՝ (պայտաո) յալոցն յաւարար մարդ լինի, կողպայքարարը (փականագործը)՝ առաջնորդ լինի և ուղղորդ. պղնձագործ՝ հաւատացեալ մարդ է և չարչարկոտ,.... ոսկերիչն՝ ստահոս»[1]:

Մետաղագործության մասնաճյուղերից մեկն էլ եղել է աշտանակագործությունը: Արաբ պատմիչ Իբն-Բատուտան այցելելով Երզնկա, նշել է, որ այնտեղ շինվել են ամաններ և «բայսուսներ»: Դրանք նման են մեր աշտանակներին[2]:

Մեր տրամադրության տակ եղած ճրագակալ-աշտանակը[3], որին նվիրված է այս հոդվածը, ցուցադրված է Հայաստանի պատմության պետական թանգարանում և մեծ հետաքրքրություն է ներկայացնում, ինչպես կառուցվածքային ձևի, այնպես էլ բովանդակության տեսակետից (Նկ. 1):

Աշտանակի բարձրությունը 175 սմ է. այն կանգնած է երեք ձևավոր ոտքերի վրա, որոնց բարձրությունը մինչև նրանց ընդգրկող օղակը 8 սմ է: Երեք ոտքերի միաձուլումից գոյանում է աշտանակի ձողը, որի վրա տեղադրված են տարբեր բարձրությունների վրա գտնվող երկու խումբ ճրագներ և մոմակալներ, բացի աշտանակի գլխի ճրագից և նրանից ցածր գտնվող թռչուններից: Ցուրաքանչյուր խմբի վրա կան երկու քառակող

Նկար 1

ճրագներ և երկուական մոմակալներ, իսկ վերևում դեմքերը դեպի դուրս դարձած չորս ծուլածռ թռչուններից մեկի վրա անց է կացված պատրույգների ծայրերը մաքրելու համար մի ունելի, գլխի ճրագն էլ ինչպես նաև մյուսները քառակող է:

Աշտանակի հայտնաբերման վայրն անհայտ է, որի պատճառով մենք դժվարանում

[1] Մատենադարանի ձեռագիր № 695, էջ 167:

[2] Իբն-ի-Բատուտա—քարեց և թարգմանեց Հ. Ասճառյան, Երևան, 1940, էջ 91:

[3] Ինվենտար №—ՊՊԹ 4281:

ենք որոշակի ասել, թե եկեղեցիներո՞ւմ, թե աշխարհի՞կ շենքերում է օգտագործվել այն:

Սակայն հայտնի է, որ նման ճրագներ[4] հայտնաբերվել են Անիի պեղումներից, և Օրբելին նշում է, որ դրանք եղել են աշտանակի ճրագներ, որոնք ամրացվել են առանձին հարմարանքների վրա[5]: Միաժամանակ նա ընդգծում է, որ դրանք օգտագործվել են թե կրոնական և թե աշխարհիկ շենքերում[6]:

Նման աշտանակներ շինվել են նաև ուշ ժամանակներում: Այդ են ապացուցում պատմության թանգարանի ֆոնդերում 2827 և 4066 համարների տակ պահվող ճրագակալ-աշտանակները, որոնք արձանագրված են որպես 17—18-րդ դարերի Լոռու հայ վարպետների գործ: Այս տիպի ճրագակալ-աշտանակները անշուշտ գործածվել են 17—18-րդ դարերում, բայց ծագել են ավելի վաղ ժամանակներում, հավանաբար 10—11-րդ դարերում: Նրանց այդչափ հնությունը հաստատվում է Անիում հայտնաբերված նմուշներով:

Այս ճրագակալ-աշտանակը շինող վարպետը կարողացել է ստեղծել հեղուկ վառելանյութը և մոմերն օգտագործելու հետաքրքիր համադրություն: Այս հարմարանքում հեղուկ վառելանյութով լցված ճրագները և մոմակալների մեջ հագցրած մոմերը վառվել են միաժամանակ, և շենքերում, ուր եղել են ջահեր, նման ճրագակալ-աշտանակները լրացրել են լուսավորության պակասը:

Փաստերը ցույց են տալիս, որ մոմերի լայն գործածությունը սկսվում է քրիստոնեության ընդունելության ժամանակներից և սերտորեն կապվում է եկեղեցական ծիսակատարությունների հետ:

Ըստ Ֆորբզի հռոմեացիք եկեղեցական ծիսակատարությունների ժամանակ գործածել են մեղրամոմից պատրաստած մոմեր, որոնք դրվել են հատուկ ամանների մեջ[7]:

Այստեղից էլ առաջացել են candelabra անունը.

candel—մոմ, abra—ակալ:

Հայ մատենագիրներից Ագաթանգեղոսը խոսելով Եփրատ գետում Գրիգոր Լուսավորչի կատարած մկրտության մասին, հետևյալն է գրում.

«Եղեալ մեծաւ ցնծութեամբ և սպիտակազգեստ հանդերձիւք, սաղմոսիւք և օրհնութեամբք, կանթեղօք, վառեալովք և մոմեղենօք լուցեալովք և ջահիւք բորբոքելովք մեծաւ լրջամտութեամբ և բազում զուարթութեամբ լուսաւորեալք և հրեշտակացեալք. և առեալ զանուն որդեգրութեանն Աստուծոյ և մտեալ ի ժառանգութիւն սրբոյ Աւետարանին և ի վիճակի սրբոյն խառնեալք ծաղկեալք ի հոտ անուշ ի Քրիստոս և ելեալք ի վերս ի տէրունական տանն դառնային»[8]:

Այս վկայություններից ելնելով ավելի հավանական ենք համարում տվյալ ճրագակալ-աշտանակի գործածությունը եկեղեցիներում:

Հետաքրքիր է, թե այս ճրագակալ-աշտանակը ինչ իմաստ է ընդգրկել իր ձևերի մեջ: Նա իր տեսքով հիշեցնում է ոճավորված ծառի, մի գաղափար, որ կապված է երկու տարբեր մոտեցումների հետ: Կաթոլիկ եկեղեցիներում շատ գործածական է ծառ-աշտանակը[9] (Նկ. 2): Սակայն ծառ հասկացո-



Նկար 2

[4] Ինվենտար № —ՊՊԹ 1956, 1957:

[5] И. А. Орбели, каталогъ Анийского музея древностей выпуск I Анийская серия № 3 -С-Петербургъ, 1910, с. 78.

[6] И. А. Орбели, նշված աշխատությունը, էջ 75:

[7] R. J. Forbes. Studies in ancient technology. vol VI Motherlands Brill, 1958, p. 137.

[8] Ագաթանգեղաց, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 421:

[9] H. R. D'Allemange-Histoire du luminaire d'epuis l'epoque Romaine jus'qau XIX siècle. Paris, p. 4 est p. 129.

դությունը նրանց մոտ կապվում է Աստվածաշնչի Ադամ և Եվային գայթակղությունն պատճառած ծառի և կյանքի առաջացման գաղափարի հետ:

Կարծում ենք, որ մեր տրամադրության տակ եղած աշտանակը ևս կապվում է ծառի հասկացողության հետ, բայց այդ գաղափարը ժողովրդական հավատալիքներում և պատկերացումներում սրբազան համարվող կենաց ծառն է:

Արևելքի ժողովուրդների մոտ լայն տարածում ստացած այս գաղափարն իր արտահայտությունն է գտել նյութական մշակույթի բազմաթիվ մնացորդներում: Ասորեստանյան մի բարձրաքանդակում (նկ. 3)

Նկար 3

պատկերված են ձկնակերպ քրմեր, որոնք երկրպագում են սրբազան ծառը: Պաղեստինում հայտնաբերված մի կավե ձիթաճրագ (նկ. 4) իր տեսքով հիշեցնում է փոքրիկ մի ծառի և հրատարակիչը նշում է, որ կապված է ծառի պաշտամունքի հետ[10]:

Նկար 4

Ուրարտական մշակույթում սրբազան ծառի ավելի ճոխ օրինակների ենք հանդիպում՝ Սարդուր 2-րդ թագավորի սաղավարտի վրա (նկ. 5), Նոր Արեշի դամբարանից հայտնաբերված գոտում[11], Արին-բերդի որմնանկարների (նկ. 6), կնիքների և զանազան այլ առարկաների վրա:

Սարդկանց կողմից որոշ ծառեր սրբազան համարելու առիթ են տվել նրանց ունեցած բուժիչ հատկությունները: Այսպես օրինակ ասորեստանյան քրմերը գրականության մեջ մեծ մասամբ պատկերված են ձեռքերից մեկում հեղուկի ամանով, իսկ մյուսում բուժիչ կոնով, որը այս կամ այն ծառից պիտի լիներ[12]: Նման տիպի տեսարաններ են հանդիպում նաև ուրարտական որմնանկարներում[13]:

Եղել են նաև ծառեր, որոնք սրբազան են համարվել շնորհիվ շրջապատին նրանց պարգևած թարմ օդի: Այդպիսի ծառեր են համարվել կաղնին, բարդին, սոճին: Վերջինիս մասին Մ. Խորենացին գրում է.

«Արայեանն Արա մեռանի ընդ Շամիրամայ ի պատերազմի, թողլով արու զաւակ սմենահարուստ և շատահանճար յիր և ի սա զԱնուշաւանն որ Սօս անուանիւր քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանաց ի սօսիսն Արամանակայ որ յԱրմաւիր. զորոց զսաղարթոցն սօսաւիւն ըստ հանդարտ և կամ սաստիկ շնչելոյ օդոյն և եթուստ շարժումն սովորեցան ի հմայս աշխարհիս հայնազանց...»[14]:

Այսպիսով, ծառերն իրենց բուժիչ, շրջապատին պարգևած թարմ օդի, տեսքի և այլ հատկությունների համար, դարձել են պաշտելի:

Նման ըմբռնումը շարունակվել է նաև հետագայում: Ազգագրական բազմաթիվ վկայությունները ցույց են տալիս, թե ինչպես Հայաստանի բազմաթիվ գյուղերում և գավառներում, մինչև վերջերս մարդիկ գալիս էին որոշ ծառերի մոտ, մոմեր վառում, իրենց հանդերձանքից մի կտոր կտրում և կապում նրա ճյուղերին:

Բնականաբար այս սովորույթն իր արտահայտությունը պիտի գտներ նաև միջնադարյան մշակույթում՝ մանրանկարչության, քանդակագործության և այլ բնագավառներում: Այդ առումով վերոհիշյալ ճրագակալաշտանակը դրա արտահայտություններից մեկն է և իրենից մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

---

[10] R. H. Smith-the household lamps of Palestine in old Testament times New Havan, 1964 fid 11.

[11] Б. Б. Пиотровский-Искусство Урарту-Ленинград, 1962, с. 76, рис. 44.

[12] З. А. Рагозина-История Ассирии. С-Петербург, 1902, с. 333.

[13] К. Л. Ованнисян-Арин-Берд I архитектура Эребуни, Ереван, 1961. рис. 38.

[14] Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 66—67։

Նկար 5

Նկար 6

Ինչպես նշեցինք, աշտանակի վրա նկատելի են երկու զույգ թռչուններ: Նրանց առկայությունն այնտեղ՝ ծնող զույգի, բուսակենդանական աշխարհի հավերժությունն է խորհրդանշում: Միաժամանակ պետք է նշել, որ կենաց ծառերն իբրև կյանքի խորհրդանշան գրեթե միշտ հանդիպում են թռչունների հետ: Այս բոլորից բացի, թռչունների առկայությունն այնտեղ կապվում է հայկական հեթանոսական մի շարք սովորույթների հետ, որոնք ծագելով խոր անցյալում, ավանդաբար շարունակվել են քրիստոնեության շրջանում:

Գ. վ. Սրվանձտյանը նկարագրում է Վարդավառի տոնը հետևյալ ձևով. «Վարդավառի տոնին աղաւնի թոցնելու աւանդական

յիշատակն ալ յայտնի է, որ միայն Հայոց սեպհական արարողութիւն է ի հիշատակ Նոյի արձակած աղաւնոյն»[15]:

Հայաստանում կա ևս մի նշանավոր տոնակատարություն, որ կապված է բերքատրվության՝ Ամենաբեղ-Ամանոր Աստծո հետ: Այդ մասին Կ. Կոստանյանցը գրում է. «...ուստի նորա (Ամենաբեղ Աստծո) անուններից մեկն էր և Ամանոր, որ նշանակում է տարին նորոգող. այս մի հանդես էր, որի հիշատակը մինչև մեր օրերը մնացած է. այնտեղ ժողովված բազմությունն անշուշտ պատարագ էր բերում յուր պտուղներից անդրանիկները և շատ առանձին հանդեսներ էր կատարում ձիարշավ անելով, եղջերու վազեցնելով կամ աղավնի թոցնելով...»[16]:

[15] Գ. վ. Սրվանձտյանց, Գրոց-գրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, Կ. Պոլիս, 1874, էջ 124:

[16] Կ. Կոստանեանց, Հայոց հեթանոսական կրօնը «Վաղարշապատ», 1879, էջ 84:

Այսպիսով, կարող ենք ասել, որ միջնադարյան վարպետների կողմից շինված այս ճրագակալ-աշտանակը սրբազան է համարվել և կենաց ծառի իմաստն է արտահայտել. սրբազան այն առումով, որ ճրանում խոր հնությունից եկող ժողովրդական հավատալիքներն ու սովորույթներն են ամփոփված, իսկ աշտանակի բարձր ու վեհաշուք տեսքը, նրա վրա եղած լուսավորության տարբեր միջոցները խորհրդանշում են պտղաբերության և կյանքի ծաղկման հավերժությունը: Այս բոլորի հիման վրա վստահ կերպով կարող ենք այս գեղեցիկ ճրագակալ աշտանակը վերագրել հայ մշակույթի այն առարկաների թվին, որոնք ծագում են առել դեռևս հեթանոսության շրջանում և իրենց գոյությունը զանազան ձևերով պահպանել մինչև նոր քաղաքակրթության մուտքը՝ 18—19-րդ դդ.: